Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈ
ԳՐԱԳԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1905

№ 8 (161) XV ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՓՈՐՁ ՍՈՒԼԹԱՆԻ ԴԷՄ

Հեռագրական գործակալութիւնները հաղորդում են, որ ուրբաթ, յուլիսի 21-ին, Սէլամլըքի ասպարողութիւնից յետոյ, երբ սուլթան Աբդիւլ-Համիդ վերադառնում էր պալատ, մի ռումբ պայթեց մզկիթի առաջ: Սուլթանը ողջ մնաց, բայց իր շրջապատողներից մօտ երկու հարիւր հոգի ապաւորեցին ու վիրաւորեցին: Ելիւթական վնասներն անագին են: Փորձի հեղինակն անյայտ է: Ենչանակուած է զինուորական բնոյթ յանձնաժողով՝ գործը պարզելու համար:

„ԲԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ"

Կովկասում արիւնոտ անցքերը յաջորդում են իրար շշմեցնող արագութեամբ: Անօգուտ կը լինէր կանգ առնել դրանցից իւրաքանչիւրի ծաւալի և յարակից հանգամանքների վրայ: Դրանք բոլորը նոյն են թէ իրենց ծագումով, թէ ընթացքով և թէ հետևանքներով: Բագու, Նախիջևան, Ջահուկ և Խանուխլար նոյն ոճիրն է, նոյն կօշմարը, որ իր սև թևերը տարածած՝ սլանում է մի վայրից միւսը՝ յառաջընթաց ունենալով արցունք, արիւն, ու աւերածներ:

Պատկերը ողբան զարհուրելի է, նոյնքան և կսկծալի: Եւ մինչդեռ յառաջադիմութեան, արդարութեան, ազնիւ աշխատանքի, ազատութեան հետամուտ բոլոր հոգիները բնականապէս համակւում են մի խորին վշտով՝ ոչնչացման, աւերածի այս հրէշաւոր, այս անմիտ պայքարի առաջ, որ դիւական թափով խաղում է մեր աշխարհի գլխին, մինչդեռ կարմիր բարբարոսութիւնների շարքը տասնեակ տարիներով յետ է մղում ամբողջ երկրի ստեղծագործական ճիգի ցանկալի յաղթանակը, — ճիշտ այդ ժամանակ կատարւում է մի ճիւաղային խաղ՝ այն մարդու կողմից, որ բոլոր այդ սոսկումների անմիջական պատասխանատուն է: Կազմակերպուած ջարդերի դժոխային այդ ծրագիրը, որ յղացուեց Պետերբուրգում, աւելի լաւ իրագործող չէր կարող ունենալ, քան եղաւ ցարի այդ գարշելի ներկայացուցիչը՝ Վլադիմիրով-Դուշկով, որ կարողացաւ մոռացնել տալ անգամ Գուլիցինին:

Զիթենու ոստերով ճանապարհ ընկաւ նա Պետերբուրգից և արիւնոտ գանկը ձեռքին՝ անցաւ Կովկասեան շղթան այս նոր Շաքիր փաշան: Նոյն ժամանակ, երբ Ալիխանով-Ավարսկին նրա յանձնարարութեամբ շրջում է գաւառները և այնտեղ բորբոքում արիւնածարաւ թաթար խուժանի կրքերը, երբ տասնեակ հազարաւոր հայ ժողովուրդը նստում է մոխիրների վրայ և մինչև իսկ Թիւրքիայից քրդերի վոհմակներն են ներս խուժում հայ գաւառներն ասպատակելու ու աւերելու, ճիշտ այդ ժամանակ Վլադիմիրով-Դուշկով ընդունում է հայ պատգամաւորութիւնը, „յուսադրում և սիրտ է տալիս" նրան:

Որպիսի՜ հեգնութիւն:

Չը գիտենք՝ Դուշկովի այս ծայրայեղ ցինիզմի, այս անպատկառութեան վրայ զարմանանք, թէ հայ պատգամաւորութեան այս ապշեցուցիչ, այս ողբալի քաղաքական տհասութեան վրայ, որ անհասկանալի, համարեա աններելի միամտութիւնն է ունեցել բորենու մօտ գնալ հարցնելու համար, թէ ի՞նչու է նա այդքան արիւնարուշտ, այդքան անողորմ:

Եւ պատասխանը բնորոշ է: Թաթարները գաղանութիւններ են կատարում Կովկասում, որովհետև հայ կոմիտէներ կան: Եւ ցարի արժանի ներկայացուցիչը „բարեկամաբար" խորհուրդ է տալիս հրաժարուել կոմիտէներից, հրաժարուել տէռորիստներից, և մնացածը ինքն իրեն լաւ կ'երթայ:

Պալատական աղտեղութիւններով ու դաւերով սնուած այդ նենգաւոր միտքը հայ ժողովրդի կորուստը անդառնալի դարձնելու համար գործ է դնում մէջն այն ղէնը-

քերից, որոնք բոլոր բռնակալների և բոլոր ժամանակների համար նոյնն են — խաբե՛լ, խաբե՛լ և խաբե՛լ։

Եւ այսպէս, ուրեմն, ամբողջ կայսրութեան և մասնաւորապէս Կովկասի մէջ չտեսնուած մարդակեր ըէժիմը գոյութիւն չի ունեցել. աւազակների, հարստահարիչների վոհմակը, որի անունն է ռուս պաշտօնէութիւն, տարիներ շարունակ չի ոտնահարել, չի տրորել ժողովուրդների բոլոր սրբութիւնները. Գոլիցին, Անդրէև, Բօգուսլաւսկի, Նակաշիձէ, ցարի միւս արբանեակների հետ չեն քամել հայ ժողովրդի կենսական հիւթերը, չեն դառնացրել յուսահատութեան ու կատաղութեան աստիճանի չեն հասցրել նրա հոգին, այլ եղել են միայն կոմիտէներ, միայն տէռորիստներ, որոնք տակնուվրայ են արել ռուս բռնակալութեան պատրաստած դրախտը։

Հրաժարուեցէք կոմիտէներից, այսինքն վար դրէք զէնքը, որ այսօր բարձրացրել էք՝ ձեզ պաշտպանելու կառավարութեան զինած թաթար խուժանից, և թողէք, որ բարբարոսները մորթոտեն ձեր զաւակները, անարգեն ձեր կանանց, ձեր աղջիկներին, հրդեհեն ձեր տները՝ ցարիզմի հաճոյքի համար։ Հրաժարուեցէք տեռորիստներից, այսինքն թողէք, որ ցարիզմի սնուցած բորենիները քայլեն ձեր գլուխների վրայ, ճիրաններով պատռտեն ձեր կուրծքը, դուրս քաշեն ձեր սիրտը և տաք-տաք լափեն ու քրքջան երկնքի երեսին։ Ցարի արբանեակը, ջարդերի կազմակերպողը, նա՝ որի համար թաթարական տարրը, ինչպէս ինքն է ասել, ամենահամակրելի, ամենաօգտակար տարրն է Կովկասում, ուրիշ խորհուրդ տալ չէր կարող։

Հասարակական կեանքի բոլոր խոշոր ցնցումների ժամանակ, երբ դասակարգերի կամ մարդկային այլ համախմբումների բարոյական և նիւթական բազմաթիւ շահեր զարնուում են իրար, երբ ճնշած, շահագործուած, իրաւազուրկ մասսաներ զայրոյթով ոտքի են ելնում և սպառնում են միահամուռ թափով խորտակել նեխուած ու անարդար ընկերական կազմը, այն ժամանակ ճակատ առ ճակատ պայքարի փոխարէն տիրապետող տարրերը դիմում են բազմաթիւ դիւական հնարների, կազմալուծելու, հաշմանդամ դարձնելու համար հակառակորդի մարտական էնէրգիան։ Մարտնչող առաջապահների տակաւին տաք դիակների շուրջը գործում են կեղծիքը, նենգութիւնը, ստայօդ խոստումները, ստոր խաբէութիւնը և այն բոլոր արտաքուստ փայլուն դաւերն ու որոգայթները, որոնք ընդունակ են դիւրահաւան և մանկամիտ ամբոխների զայրոյթը մեղմել ու սպառնացող ճակատագրական հարուածը կանխել։

Դաշկովները իրար դէմ հանելով հայ ու թիւրք տարրերը, արիւն և աւեր տարածելով երկրի մի ծայրից միւսը, քաջալերելով կազմակերպուած սրիկայութիւնները հրապարակով, այժմ հրաւիրում են հայ ժողովրդին վար դնել զէնքը։

Ո՛չ, չենք խաբուի։

Եւ մինչև որ չզուի, չմաքրուի արիւնով ու ոճիրներով յղփացած այդ մթնոլորտը, որի տակ խեղդուում են այնքան ժողովուրդներ, զինադադարի մասին խօսք լինել չի կարող։ Բոլոր ժպիտները, բոլոր քաղցրահնչիւն բառերը, բոլոր „բարի խորհուրդները“ թունաւոր իժերի ֆշշոցներ են, որոնց կը հետևի մահացու խայթոցը։

Անմեղների արիւնը այն զարհուրելի աւազանն է, որի մէջ մկրտուող մանուկ ժողովուրդը հասուն մարդ և սպառնալի ռազմիկ է դառնում։ Մի՞թէ միայն հայ ժողովուրդը պէտք է յաւիտեան մանուկ մնայ։

Մենք չենք հաւատում, մենք չենք ուզում հաւատալ, հակառակ դէպքում նա արժանի կը լինէր իր դժոխային ճակատագրին։

Ռուս կառավարութիւնը կամեցաւ, որ հայ ժողովուրդը թողնի իր խաղաղ աշխատանքը, իր պապերի արօրն ու գութանը և զինի արիւնոտ գործի համար։ Եւ նա զինւում է. նա պէտք է զինի։

Նա կռւում է, և պէտք է կռւի։

„ԴՐՕՇԱԿ“Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿՈՒԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

—

ԹԻՖԼԻՍ, 20 յունիսի

Հայ-թիւրքական արիւնահեղ ընդհարումներ տեղի ունեցան Բաշնորաշէնի և Վաղարշապատի շրջաններում։ Թիւրքերը, թւով մօտ 7,000, ուզեցին յարձակում գործել Վաղարշապատի, Աշտարակի, Նոյնիսկ Էջմիածնի վրայ։ Հայ յեղափոխական խմբերը յետ մղեցին նրանց, մեծ կորուստների ենթարկելով։ Տասնեմէկ թիւրք գլուղեր, որոնք մասնակցել էին թալանին և կոտորածին, աւերուած և խստօրէն պատժուած են։ Գեներալ Ալիխանովից յետոյ, որ յայտնի եղաւ իբրև կատաղի պանիսլամիստ, այժմ պրինց Լուվ Նապոլէոնն է ուղարկուած Երևանի նահանգը, կարգը վերահաստատելու համար։ Հայ ազգաբնակութիւնը յոյս ունի, որ նա անկողմնապահ կը լինի։ Հակառակ փոխարքայ Վորոնցով-Դաշկովի խոստումներին, ոստիկանութիւնը շարունակում է խուզարկել և խլել հայերից զէնքը։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը հրատարակեց շրջաբերականներ՝ մահ սպառնալով այն բոլոր ոստիկաններին և պաշտօնեաներին, որոնք կը փորձեն զինաթափ անել ինքնապաշտպան հայերին։ Գանձակի նահանգապետ Լուցաու հրաժարական տուեց, չկամենալով աչակցել հայ-թիւրքական ընդհարումներին, որոնք կազմակերպուած են բարձր իշխանութեան աչակցութեամբ։ Գտնուած են բազմաթիւ փաստեր, որոնք ապացուցանում են, որ պանիսլամիստները մշտական յարաբերութեան մէջ են Պետերբուրգի զաղտնի ոստիկանութեան հետ։

ԹԻՖԼԻՍ, 28 յունիսի

Նորագոյն տեղեկութիւնները Կովկասից կրկնակի վրդովեցուցիչ են։ Պանիսլամական ծրագիրը մշակուել է Բագվի մէջ, մասնակցութեամբ սուլթան Համիդի էմիսէրների։ Նախիջևանի և Մաքուի խաները համակերպեցին այդ ծրագրին, նպատակ դնելով՝ կոտորել քրիստոնեայ ազգաբնակութիւնը և յայտարարել Նախիջևանի շրջանը՝ անկախ։ Արաքսի ափին, «ուդէլնի» կայսերական կալուածի մէջ գտնուած է զէնքի մեծ պահեստ։ Այդ զէնքերը ստացուած են եղել Թիւրքիայից,

որ պիտի բաժանուէին թիւրք խուժանին։ Բռնուած են բազմաթիւ պրօկլամասիօններ, որոնցով մահմէտականները հրաւիրուում են վրէժխնդիր լինել և կոտորել հայերին, այն աշակցութեան համար, որ նրանք սրանից մի դար առաջ ցոյց տուեցին ռուսներին, նպաստելով նրանց տիրապետութեան Երևանեան նահանգում։ Նախիջևանի շրջանի հայ զոհերի թիւը 410 է։ Նախիջևան քաղաքի մէջ հայկական 182 խանութներից չորսն է միայն մնացել։ Մնացածը այրուած և թալանուած է։ Հայերը շարունակում են միւս շրջաններում պատժել ոճրագործութեան մասնակցող թիւրք գիւղերը։ Սպանուած թիւրքերի թիւը 400-ից աւելի է։ Ռուս կառավարութեան դիրքը երկդիմի է։ Փոխարքան թոյլ տուեց մի պանիսլամիստի, Աղաեվ անունով, կաշառուած սուլթանից, հրատարակել հակահայկական մի լրագիր։ Հասարակաց ապահովութիւն չկայ։ Սպանութիւն, թալան, ընդհարումներ։ Լեզգիները պատրաստւում են յարձակում գործել Սղնախի և Թելաւի վրայ։ Անարխիան կատարեալ է։

ԹԻՖԼԻՍ, 1 յուլիսի

Փոխարքան ընդունեց թիւրք բէկերին, որոնք մահմէտական ազգաբնակութեան կողմից ներկայացրին ուղերձ և խնդրագիր։ Ընդունելութիւնը ոչ միայն սիրալիր էր, այլ և սրտագին ու հովանաւորող։ Ներկայացնելով իրենց արդար պահանջները, պատգամաւորները միաժամանակ հարկաւոր համարեցին կանգ առնել վերջին արիւնահեղ ընդհարումների վրայ։ Անհերքելի չարամտութեամբ ընդհարման ամբողջ պատասխանատուութիւնը գցեցին հայերի վրայ, մոռացութեան տալով անհերքելի փաստերը—այրած գիւղերը, թալանի և կրակի մատնուած տները, կոտորածն ու բռնի կրօնափոխութիւնը։ Փոխարքայ Ղօրանցով-Դաշկով, կողմնապահութեամբ տարուած, պաշտօնապէս յայտարարեց, որ ինքը կատարելապէս զոհ է մահմէտականներից, գնահատում է նրանց առաքինութիւնները և լաւ գիտէ, որ ընդհարումների պատճառը նրանք չեն։ Այդ պաշտօնական սուտը ընդհանուր ապշութիւն պատճառեց ամբողջ Կովկասին։ Թիւրք պատգամաւորները, մանաւանդ նրանք, որոնք շատ տխուր դեր են կատարել վերջին դէպքերի մէջ, խրոխտացած՝ կարծում են իրենց ազատ՝ շարունակելու թալանի և կոտորածի քաղաքականութիւնը։ Փոխարքան դաւաճանեց իր պաշտօնին և պարտականութեան։ Այսօրուանից սկսած՝ պատասխանատուութիւնը ընկնում է ամբողջապէս նրա վրայ։

ԹԻՖԼԻՍ, 10 յուլիսի

Հաղորդում ենք ի գիտութիւն եւրոպական հասարակութեան այն յանդուգն ծրագիրը, որ կազմած է Կ. Պոլսում, Կովկասի վերաբերմամբ։ Ձերբակալուած գաղտնի գրագրութիւնները, ինչպէս և թիւրք դիակների վրայ գտնուած շրջաբերականները ցոյց են տալիս, որ սուլթան Համիդ, օգտուելով Ռուսաստանի այժմեան ծանր կացութիւնից, նախագծել է, համաձայն գերմանական օֆիցէրների կազմած յատակագծի, ներս խուժել Անդրկովկաս։ Ծրագրին տեղեակ թիւրք ազդեցիկ անձինք կազմակերպեցին վերջին կոտորածը, նպատակ ունենալով ազատել երկիրը քրիստոնեայ տարրից և այդպիսով հեշտացնել օսմանեան տիրապետութիւնը։ Ծրագրած է եղել—մի կողմ թողնելով Կարսի բերդը, ներս խուժել Անդրկովկաս Բայազէտի կողմից, անցնել Երևան, վերցնել Նախիջևան, Ղարաբաղ, Բագու և հաստատուել Դաղստանում, գրկելով ամէն տեղ մահմէտական ազգաբնակութիւնը, պատրաստ՝ թիւրք զօրքի հետ միասին կռիւ մղելու ռուսական տիրապետութեան դէմ։ Այդ գաղտնիքի բացումը ցնցեց ռուսական զինուորական շտաբը։ Զինուորականութեան մի մասը այն կարծիքի է, որ պէտք է անպատճառ զինել հայ ժողովուրդը, դիմադրութեան համար, իսկ միւս մասը, ընդհանակը, պնդում է, որ հայկական նահանգները պէտք է գէթ առժամանակ տալ մահմէտական ֆանատիկոսութեան ծեռքը։ Վերջին սարսափները, կատարած Նախիջևանի կողմերում, համարւում է այդ ծրագրի նախերգանքը միայն։ Հայ ժողովուրդը վճռել է մինչև վերջ կռուել այդ քաղաքական եբկուստեք դաւադրութեան դէմ։

ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

Զ.

ՓԱՌՔ ԱՀԱԲԵԿԻԶՆԵՐՈՒՆ

Եւ այսպէս, ձեր արդարակշիռ և երկաթեղէն ձեռքերն անպարտելի,
Ձեր զինավառ ու կրակոտ կուրծքերէն կատաղաբար մեկնելով՝
Դաւադրութիւնն ու Ոճիրը անողորմ հարւածով մը դէպի հողը կը մխրճեն...
Ո՜հ, ի՞նչպէս մտենալ ձեր Սարսափին, ի՞նչպէս երգել ի՞նչպէս ջատագովել, ի՞նչպէս շեփորել գձեզ,
Դուք ինքնիշխան և դերագոյն դատաւորներդ բոլոր արիւնրերան բռնապետներուն...
Ու նոյնիսկ չեմ դիտեր ձեր զարհուրանքի և պակուցումի անուններն ահաւոր,
Որովհետև ձեր յաղթական անցքը ճշմարտապետութեան ճամբուն վրայէն,
Ամ՛ինչ՛փ արագ է, այնչ՛փ խորտակիչ, այնչ՛փ կուրցնող և այնչ՛փ աւերիչ
Որչ՛փ անցքը խաւարակուռ անտառները մխրճոյնող վայրկենական կայծակներուն...

Դուք մեր տառապանքին և մեր կսկիծին երկարատև տարիներէն ի վեր,
Անհուաճելի պարիսպները հանդիսացաք մեր քայլերը կոտրող բոլոր թշնամիներուն հանդէպ՝
Եւ բռնակալութեան քաղաքներուն և անոնց հրապարակներուն վրայ,
Երբ մեր դիակը փողոտուելէն մեր տաք արիւնը կը հոսոտուէր...
Ահաւասի՛կ որ ձեր խրոխտ հասակները միամիտակ և հերոսաբար աշտարակուելուն...
Ձեր քայլերը մեռելատաք փողոցներուն մէջ վրէժին աղաղակը դուռացուցին,
Ձեր սուրերուն հալածանքէն բոլոր դաւաճանները եղբայրադաներուն հետ դեղեզմանուելուն
Ու ձեր ճակատ ճակատի և անվեհեր ու անվախ ու հպարտ երևումէն,
Ծերագիր խուժանը վատերուն՝ ձեր ոտքերուն կռուչելով իրենց կեանքը հայցեցին...
Ու դեռ երէկ, ձեր ահաբեկչի ռումբերը մարդասպաններու թափօրներ մխրճոյցին...
Բարբարոսներու այդ խելացնոր վոհմակներուն մէջ վար թաւալող արեգակներու նման պայթելով...

Այսպէս, ձեր արդարախոյզի արիւնասեռ լսպտերները ձեր ձեռքերէն՝ առկախ,
Բոլոր խաւարչտին և եղեռնակշռան հոգիներուն դոցուած դուռներէն ներս խուժեցիք,
Ինչպէս խղճմտանքը, որուն ճմարտագէտ նայուածքը վախճան մը է միանգամայն...
Դուք Օրէնքը եղաք եղեռնապաշտ Զարիքին ուսերուն վրայ հոկող,
Եւ հայրենի ամեն յուզում, ամեն խռովք, ամեն հեռ ու ամեն վրէժ,
Ձեր նժարին մէջ կշռուեցաւ և ձեր արդարապաս ատեանին սեղանին վրայ յայտնուեցաւ...
Դուք ո՛չ զինակիցներ ունեցաք և ո՛չ ձեր հաւատքին վրայ իշխողներ,
Դուք, — դուք ձեր անձն էիք անսահմանորէն և ձեր արփաթեռ հոգին,
Ձեր Եաը գերագոյն-մարդուն եան է ամեն զօրութենէ դերիվեր,
Ձեր վճիռը ամեն վճռի մահավճիռն է անողոք,
Եւ վա՜յ անոնց, որոնք ձեր կարմիր և մահացու կնիքովը կը խարանուին...

Եւ մինչև այսօր մեր բոլոր թշնամիները տեսա՛ նոր ձեր վրէժաձայնը զարհուրաբերի,
Արդարութեան ձայնն էր ասուածագոչ՝ ինչպէս ձայնը Ազատութեան,
Տեսան որ ձեր անխնայ սուրը, սուրն էր անխուսափելի ճակատագրին,
Տեսան որ ձեր դաշոյնները, մեղապարտ վիզերու ի խնդիր, նորէն կը շողան,
Տեսան որ ձեր բռունցքին հարուածներուն տակ մատնիչներուն կզակները կը կափկափեն...
Տեսան որ ձեր կապարէ գնդակները մարմինէ մարմին և ուղեղէ ուղեղ կ'անցնին...
Տեսան որ իրենց ծոծրակներէն և սրտերէն, մեր ծարաւի աչքերուն առջև, իրենց արիւնն է որ կը ժայթքի,
Հեղեղօրէն, հեղեղօրէն, իրենց հեռաւոր գահակալներն ու մահագէմ թագակիրները թրջելով...
Տեսան որ իրենց ոսկորները կը ջախջախուին և իրենց ողնաշարները կը ազոցուին,
Տեսան որ այն գլուխները որ գիշերներով մեր ցեղին անէացումը յղացան,
Տեսան որ ձեր պղինձէ կրունկներուն զօրութեանը տակ է որ կը խմրուին...
Տեսան որ այսպէս, քաղաքէ քաղաք և հրապարակէ հրապարակ,
Ձեր յանկարծական երևումը, ձեր բազկահարուածը և ձեր յարուցած խռովքը անմեկին,
Բոլոր դաւաճանները դիակնացուց, բոլոր վասակները հողեց և մարդակեր ամբոխները քարացուց...

Բայց դեռ մա՛հ պէտք է որոտանք, մա՛հ պէտք է համասփռենք, մա՛հ պէտք է մրրկենք,
Այն ատելութեան և ամբաշտութեան չարաշուք պալատներուն վրայ,
Որոնց զանգուածներուն տակ իբր հիմնաքար մեր ցեղին մտածումը և մարմինը և հոգին է որ կը հեպ...
Որոնց որմերը մեր արիւնովն է շաղախուած և մեր ոսկորներովը կառուցուած...
Որոնց աղբիւրները մեր անօգուտ արցունքներէն են առատ,
Եւ գինովութեան ու եղեռնի բաժակները, ձեռքէ ձեռք շրջող մեր արիւնովն ասլցուած...
Մա՛հ պէտք է համասփռենք հոն, ուր մեր ատրուկի ծնրադիր զաղատանքները չէ հասան.
Բայց ուր ձեր սուրերուն բոցը մարդասպանները ատեցուց և անոնց ակռաները զահանդանքէ կրճտել տուաւ...
Մա՛հ այդ թագակիր, բայց արդէն ահաբեկեալ և կիսամեռ դահճապետներուն,
Վասն զի, իրենք, այդ արիւնկզակ և դիւահար բռնաւորները վախճանաւոր,
Զարհուրանքով լսեցին ձեր ձայնը, ձեր բարկութիւնը, ձեր ցասումը, ձեր զայրոյթը ահաւոր...
Եւ իրենց խորտակեալ և դագաղակերպ գահերը շարժեցան,
Ուժանակներու դռռումէն, ինչպէս դռռումէն փրկարար ռումբերուն,
Ձեր վերահաս երևումը իրենց սրտերը կը մահազանգէ և իրենց սճրագործի ուղեղները կ'արիւնէ,
Իրենց կմախաձև ձեռքերը այլևս մահուան սարսուռովն է որ կը դողդոջին...
Իրենց գիշերասարսափ երազներուն մէջ ձեր անձը իր երկաթէ քինայոյզ քայլերովն է որ կ'արշաւէ...
Եւ ահաւասիկ իրենց դարաւոր դուռները ահագնաբար պատէ ի պատ կը ծեծուին
Եւ ահաւասիկ իրենց պատուհաններուն բոլոր փեղկերը յառաջացող վտանգէն իրենց վրայ ահեղութեամբ մը փակուելով
Դուրսէն եկող ամեն յոյս կը չքանայ իրենց համար և խաւարին մէջ Մահն է որ անոնց հոգիէն ի վեր կը կաւշի...
Ուրեմն ոտքի՛, նորէն ոտքի՛, նորէն ոտքի՛, Հայորդիներ, Դիւցազուններ, Ազատաբերներ,
Ոտքի՛, և դերուն մէջ, օդերուն մէջ թո՛ղ ցնդին, օդերուն մէջ թո՛ղ մխրճան,
Մեր բռնաւորներուն սա՛ պատժապարտ պալատներն արիւնաթոր՝ Եբլոյեղ-Քէ-շէ և Զարբոյք է Սէլ...

ՍԻԱՄԱՆԹՕ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՅԵՐ

ՈՒՇԻՒ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

(ԱԿԱՆԱՏԵՍԻ ՊԱՏՄԱԾ)

Յունիսի 4-ին, առաւօտեան ժամը 5-ին, Հայկական ի մեծ գիւղում հաւաքուել էին զինուած հինգ խմբեր և կազմում էին ընդհանուր գործողութեան յատակագիծ՝ պաշտպանելու համար ամբողջ Աբարանի և Աշտարակի շրջանները և վրէժխնդիր լինելու այն թիւրք գիւղերից, որոնք սկսել էին յարձակուել ու թալանել հայ գիւղերը։

Ընդհանուր ղեկավարն էր Ուրսէնը. խմբապետներն էին՝ Գրիգոր, 10 ձիաւորներով, Կարապետ՝ 13 հետևակներով, Յովհաննէս՝ 20 հետևակներով, Ուրամ՝ 10 հետևակներով և Բարսեղ՝ 19 հետևակներով, ընդամենը 78 զինուոր։ Բացի սրանցից կային զինուած կամաւոր գիւղացիներ, թուով՝ 40, բոլորը միասին մօտ 120 հոգի։

Հէնց խորհրդակցութեան միջոցին, ժամը 6-ին, լուր է հասնում, որ թիւրքերը յարձակուել են Սաղմոսավանք գիւղի վրայ. իսկոյն Բարսեղի խումբը առաջ է անցնում և ձորի հակառակ ափից, 1200 քայլ հեռաւորութեան վրայ, կուի է բռնւում թիւրք խուժանի հետ։ Կէս ժամ չ'անցած, թիւրքերը կորցնելով 4 հոգի, յուսահատ՝ յետ

են քաշւում։ Բարսեղի խմբին միանում է և Յովհաննէսի խումբը։ Երկու խմբապետները Սաղմոսավանքի դիրքն ու տեղական կուռող ուժերի քանակը ուսումնասիրելուց յետոյ, համոզւեցին, որ գիւղը կարելի է թողնել հէնց իրենց գիւղացիների պաշտպանութեան տակ և իրենք վերադարձան առաջւայ տեղը՝ այնտեղից աւելի օգնութեան կարօտ տեղերին հասնելու համար։

Դեռ կռւից վերադարձող խումբերը չհանգստացած՝ ընդհանուր համաձայնութեամբ, նոյն օրը ժամը 11-ին, բոլորը միասին մեկնում են Բայարջուխ գիւղը՝ Իլանչալանի պաշտպանութեան համար թողնելով կարապետին իր 13 հետևակներով։ Բայարջուխ հասնելուց կէս ժամ յետոյ տեղեկութիւն է գալիս, որ թիւրքերը անսպասելի մեծ քանակութեամբ նորից յարձակւել են Իլանչալանի և Սաղմոսավանքի վրայ։

Առանց վայրկեան կորցնելու բոլորը դէպի այն կողմն են շտապում. ձիաւոր խումբը Բարսեղի հետ առաջ է անցնում, որպէս զի վաղօրօք բռնէ անհրաժեշտ բարձր դիրքերը։ Կարապետն իր խմբով միացած գիւղացի կռւողներին՝ բռնում է Իլանչալանի հիւսիս-արևմտեան ոտքը։ Այդ միջոցին թիւրքերն արդէն հասել էին գիւղի հարաւ-արևմտեան կողմը և շտապում դէպի լեռների բարձունքը։ Նկատելով ձիաւոր խմբի ներկայութիւնը, որ անսպասելի էր, թիւրքերը կրկնապատկում են իրենց ճիգը, որքան կարելի է շուտ հասնելու լեռների տիրող դիրքերին։ Բայց երբ երևան են գալիս հայ կտրիճների մնացած խմբերը, ցրւած այս ու այն կարևոր կէտերում, հինգ վերստ տարածութեան վրայ, թշնամին գլուխը կորցնում է և ակներև վտանգից խոյս տալու համար՝ Ուշի գիւղն է քաշւում, որի վրայ և յարձակւում են հայկական վրիժառու խմբերը։

Կռիւը սկսւում է ցերեկւայ 2 ժամին. թշնամին ունէր մօտաւորապէս 200-250 հրացանաւոր։ Հայ կտրիճները կռւելով առաջ են գնում։ Եւ մինչ քիչ էր մնում, որ օղակի մէջ առնէին թշնամուն, լուր է հասնում, որ գաւառապետը կօզակներով Աշտարակից դէպքի տեղն է գալիս։ Խմբապետները որոշում են լաւ դիրքեր բռնելուց յետոյ՝ դադարեցնել կռիւը, գաւառապետի և կօզակների շարժումներին հետևելու համար. շուտով լուր է գալիս, որ գաւառապետը տեղեկութիւն չունի այդ կռւի մասին և թէ նա գնացել է Էջմիածին։ Վերջին հանգամանքը սիրտ է տալիս հայերին և նրանք ուժով վրայ են տալիս Ուշին։ Թշնամին շփոթւում է և սկսում փախչել մանաւանդ քիւրդերը, որոնք թշնամու ձախ թևն էին կազմում։

Հայերը քանի մօտենում էին գիւղին, այնչափ խտանում, մերձենում էին միմեանց։ Երբ հասնում են գիւղ, միւս կողմից անսպասելի կերպով ներս է խուժում կարօն՝ 40 զինւած կտրիճների հետ։ Սրանք նախօրօք երկու ժամ կռւել էին, որպէս զի կարողանան բռնել կարբին Ուշից բաժանող լեռների գագաթները։ Բայց յանկարծ մի անբնական ձեռքով ճանապարհը մաքրւած են գտնում ու ուղղակի դիմում Ուշի։ Նրանք տեղեկութիւն չունէին միւս կողմի կռւի մասին. հէնց այդ հանգամանքը, որ երկու հայ խումբերը միմեանց մասին տեղեկութիւն չունէին, առիթ տւեց մի թիւրիմացութեան։ Արսէնի հրամանատարութեան տակ եղած հայ զինւորները հեռուից նկատելով մօտեցող կամաւորներին, նրանց թիւրքերի տեղ են ընդունում և մի քանի խմբական հրացանաձգութիւն կատարում նրանց վրայ. բարեբախտաբար թիւրիմացութիւնը շուտով պարզւում է և կամաւորներից ոչ մէկը չէ վնասւում..

Ուշին այդ միջոցին շրջապատւած էր երեք կողմից։ Ուշից վեր, դէպի աջ, կայ մի նեղ անցք, Ս. Սարգսի ճամբայ անունով, որի մասին հայ խումբը գաղափար չունէր, ուստի և չէր կարողացել բռնել այդ ուղին։ Ընդհանուր շփոթութեան մէջ թիւրքերը օգտւելով այն հանգամանքից, որ հայերը չգիտէին այդ ճանապարհի գոյութեան մասին, փախչում են այդ գծով, թողնելով գիւղը հայերի ձեռքին։ Հայերը, հետևելով „ակն ընդ ականի“ սկզբունքին, գիւղը կրակի մատնեցին։

Այդ միջոցին մի տան մէջ պատսպարւած էին եօթ զինւած թիւրքեր։ Հայերը պահանջում են անձնատուր լինել, նրանք մերժում են։ Ուստի հայ քաջերից մէկը կտուրը բարձրանալով՝ նետում է մի ռումբ, որին զոհ են գնում բոլորը։

Կռիւը վերջացաւ ժամը 8½-ին երեկոյեան, երբ արդէն արևը մայր էր մտնում։ Հայերը գիւղին բոլորովին տիրանալուց յետոյ, քաշւեցին իրենց տեղերը։ Այնտեղ ստուգւեց, որ իրենցից ոչ ոք չէ սպանւած, միայն մի զինւոր անզգուշութեամբ ինքն իրեն վիրաւորել էր։ Կռւի միջոցին Ուշիում միայն մի հայ գիւղացի էր սպանւել։ Թշնամին ունեցել է 150 սպանւած և 180 վիրաւոր, որոնց կէսը ծանր։ (Այս տեղեկութիւնը քաղւած է Երևանից եկած ռուս բժշկի պաշտօնական ցուցմունքից)։

Շրջակայքի թիւրքերը սարսափած այս դասից, բոլոր գիւղերը թողել և համախմբւել են երեք կէտերում. մի մասը Ախսում, երկրորդ մասը Քանաքեռի մօտ գտնւող դաշտում և այնտեղից կառավարութեան պաշտպանութիւնն են խնդրում, երրորդ մասը Վաղարշապատի մօտ։

Երբ հայ գիւղացիները լսում են Ուշիի կործանումը, առանց խմբապետներին հարցնելու յարձակւում են թիւրք գիւղերի վրայ և մի մասը ոչնչացնում...

Երկրորդ օրը, յունիսի 5-ին, կօզակները շրջապատում են մի խումբ անզէն հայ գիւղացիների, նրանց վրայ հրացաններ են արձակում, սպանում 4-ին և ապա բոլորին բռնելով՝ յայտարարում են, որ դրանք են Ուշին աւերողը. մինչդեռ նրանց ձեռքին ոչ զէնք կար և ոչ կողոպուտ։ Նրանք միայն դուրս են եկած եղել փնտրելու իրենց կորսւած անասունները։ Երրորդ օրը նոյն Ուշիի մօտ կօզակները բռնում են մի քանի հայ գիւղացիներ, որ վարելիս են եղել իրենց հողերը, և լաւ ծեծելուց յետոյ տանում են քաղաք։

Կառավարչական զինւորների այդ անտեղի խստութիւնը դէպի հայերը, ծանր ճնշում է թողել ամենուրեք։ Հակառակ այդ հանգամանքի՝ հայ ժողովուրդը վճռել է պաշտպանւիլ, դարձեալ մի անգամ համոզւած, որ հաշտութեան վրայ յոյս դնելը ցնորք և միամտութիւն է։

Թիֆլիս, 2 յունիսի

Սոսկալի են ջահուկ գիւղի կատարածի մանրամասները։ Ահա թէ ի՞նչպէս է նկարագրում այդ՝ ականատեսներից մէկը։

„Մայիսի 12-ին, առաւօտեան, դատարանի առաջ խմբւել էին գիւղի հայերը և թիւրքերը, որոնցից առաջինները խորհրդակցում էին գնալ դիմել նոր ժամանող փոխ-նահանգապետին՝ թիւրքերի յուզած մոքերը խաղաղացնելու և ապառնայող վտանգի առաջն առնելու համար։ Գիւղի տանուտէրը և մեր հարևան Ասադ Հաջի-Աբիլ-Կասմ-Օղլին մեզ ասացին. „Աժոթ է մեզ համար. գնայէք, խանութներդ բաց արէք,

մենք հո մեռած չենք, որ խռովութիւն ծագի հայերի և թիւրքերի մէջ. մեզանում այդպիսի բան չի ծագի և չպէտք է էլ ծագի, քանի որ միմեանց հետ ոչ մի վէճ, ոչ մի հակառակութիւն չունենք. մենք դարաւոր եղբայրներ ենք, սիրով ապրել ենք և սիրով էլ կապրենք մինչև վերջը. մենք պոլիցիայի առաջ ստորագրութիւն կը տանք ձեզ, որ երբ ձեր մի մազը պակասի, մենք պատասխանատու ենք"։ Դեռ չէի վերջացրել նախաճաշս, երբ լսեցի հրացանների պայթիւններ, լաց ու կոծ, աղմուկ, աղաղակ։ Հենց այդ րօպէին վերոյիշեալ Ասադ Հաջի Աբիլ-Կասըմ-օղլին մեր դուռը ծեծեց և մեզ ու մեր հարևաններին տարաւ իրենց տունն պատսպարելու, խոստանալով և երաշխաւորելով, որ այնտեղ իրենց մօտ ոչինչ չի պատահի։ Մենք, ինչպէս և ուրիշ շատերը, հաւատացինք և գնացինք։

„Մեզ բոլորիս տեղաւորեցին մի տան մէջ, ուր շատ թիւրք կանայք կային։ Ես թիւրքերի շշուկներից հասկացայ, որ մեզ սպանելու են, և ճարպիկութեամբ դրա համար էլ ձեռք բերեցի գետին ընկած թիւրք կնոջ չարշաւը, ծածկուեցի նրա մէջ և սպասում էի յարմար րօպէի դուրս փախչելու։ Ցերեկները և գիշերները մանաւանդ մեզ մօտ գալիս էին թիւրք մօլլաներ՝ Մօլլա-Մուսան, իր որդի Մօլլա-Մամէդ-Թաղին, Մօլլա-Ալշաֆար-օղլիները, Մաշադի-Մամէդ Հաջի-Քերիմ օղլին և մեզ համոզում էին կրօնափոխ լինել ասելով, որ միևնոյն է, մենք ոչ մի հայի կենդանի չենք թողնելու, բոլորին էլ սրի ենք անցկացնելու. կառավարութիւնը մեզ ոչինչ չի անի, զօրքը և ուրիշ բաները միայն ձևի համար են։ Եթէ Ալլահը աջողեց, հայերի հետ գործներս շատ վերջացրինք, Իրանը կը բարձրանայ և մենք կըսկսենք ռուսներին այստեղից դուրս քշել և Կովկասը միացնել մեր ամենակալ Շահի երկրին. շուտով, ինշալլահ, Թիֆլիսում Սարդարի պալատի առաջ կը ծածանուի իսլամականութեան դրօշակը։ Այս վիլայէթը առաջ Իրանին էր, Իրանին էլ պէտք է լինի։ Եւ սկսում էին գովել իրենց կրօնը, անցեալ ըմբիշ-քաջերին, ներկայումս կուսող երիտասարդներին և բոլոր հաւիալամականութեան ջատագովներին։ Մենք, դերիներս, սարսափից յուսահատած, երեսանց խոստացանք, որ կրօնափոխ կը լինենք, յուսալով՝ որ այդ կացութիւնը երկար չէ տևի։ Մեր դրութիւնը անտանելի էր. հրացանների որոտը, այրած տների խորտակումը, մարդկանց լացն ու կոծը, „Եա Ալի" աղաղակները, կրակի նման դաղում էին մեր սրտերը։ Գերմարդկային ուժ էր պէտք տանելու այս բոլորը։ Մենք թիւրքերի թակարդում ընկած թռչուններ էինք։ Այդ պատճառով էլ նրանք ոգևորած իրենց դործի աջողութեան վրայ՝ իրենց սրտերը աւելի պարզ էին բանում մեր առաջ։ Պատմում էին, թէ ինչպէս Նախիջևանի խաները Պարսկաստանում Թէյմուր խանի քրդերին պատրաստել են յարմար ժամին ներս խուժելու Կովկաս, օգտուելով այն դէպքից, որ Ռուսաստանի ուժերը Հեռաւոր Արևելքում ջլատուել են։ Եւ գովում էին Նախիջևանի խաներին, որոնց ոնխանդ գործնէութեան արդասիքն էր այդ բոլորը։

„Գիշերն անցկացրինք սարսափի և մահուան տագնապի մէջ։ Միւս օրը կէսօրին արևի շողի նման աւետաբեր լուր թափանցեց մեր ապաստանած տան մէջ, թէ Կարապետ վարդապետը և Նախիջևանի քաղաքագլուխը՝ Ջաֆար-կուլի-խանը՝ եկել են գերիներին ազատելու և հաշտութիւն կնքելու հայերի և թիւրքերի մէջ։ Անկարագրելի եղաւ մեր ցնծութիւնը։ Շուտով մեզ մօտ եկաւ տանտէրը գիւղի մի քանի պատուաւոր թիւրքերի և ստրաժնիկների հետ և մեզ յայտնեց, որ եկել է գերիներին ազատելու։ Մի թիւրք ստրաժնիկ այդտեղ տանտիրոջն ասաց թէ՝ տղամարդկանց չպէտք է բայ թողնել, հազիւ են ձեռք ընկել, նրանց հարկաւոր է սպանել, իսկ կանանց և երեխաներին պէտք է բայ թողնել։ Բոլոր ներկայ գտնուող թիւրքերն էլ հակուեցին դէպի այդ դիտաւորութիւնը։ Ռուս ստրաժնիկները ոչինչ չհասկացան։ Իսկոյն տղամարդկանց բաժանեցին կանանցից և երեխաներից։ Անցաւ 15 րօպէ. տանտէրը, մաշադի Մամէդ Բայրամօվը, Նաջաֆկուլի Հաջի-Բայրամ-օղլի, Մաշադի-Ալի մօլլա Ահմէդ օղլի և նոյն այդ Ասադը՝ զինած արիւնոտ սրերով և հրացաններով՝ ներս մտան և տղամարդկանց զոյգ-զոյգ դուրս քաշեցին տանից։ Թշուառ գերիները դուրս չէին գնում և կարծես ընազդմամբ հասկանում էին, որ իրենց կեանքը իր վերջալուսին է հասել։ Զօռով դուրս քաշեցին։ Արիւնոտ սրերի շողշողիւնը, զոհերի լացն ու աղաչանքը, դահիճների ֆանտաստիկական հագուստը, գլխների կարմիր ֆէսերը, կարմիր ժապաւէններով զարդարուած բազուկները՝ մահուան տպաւորութիւն էին թողնում մարդու վրայ։ Ես (չարաուսվա փոթոթուած) օգտուելով այդ իրարանցումից, դահիճների գլուխը զոհերի հետ զբաղուած լինելուց, կամացուկ տանից դուրս ծլկեցի. երբ մտայ ծառերի մէջ, քայլերս արագացրի և հասայ գետին, որ հեռու չէր այդ սպանդանոցից ու այդտեղ չարաչաս դէն շպրտեցի։ Հեռուից ծառերի արանքից տեսայ, որ տանտէրը առաջին անդամ սուրը խրեց Միսակ Տէր-Աւագեանի կողը, մնացածները գնդակահար արին միւսներին, մի քանիսին էլ կոտրկոտոր արին, և այսպէս բոլոր տղամարդկանց մահացրին ամենասարսափելի կերպով. նրանց տներից քաշ տալով՝ նետում էին մտիկ փոսը։ Ես գետի միջով վազեցի դէպի ստրաժնիկների պօստը։ Հեռուից մի քանի դնդակներ սուրալով անցան կողքովս, ես անհետացայ անտառների մէջ և այդպիսով գլուխս ազատեցի. . .

Կոտորածի հենց առաջին օրը մեր տանից թալանած տպրանքները տարան յիշեալ Ասադ Հաջի-Աբիլ-Կասս օղլու տունը։ Թիւրք կանանց ուրախութեան և հռհռոցին չափ չկար, օրհնում էին խաներին և բէկերին, մաղթում էին նրանց արևշատութիւն, որ պատճառ դարձան իրենց հարստանալուն։ Եւ այդ բոլորը ստիկանութեան քթի տակ. . .

Երևան, 2 յունիսի

Նախիջևանի և Շարուրի կողմերից ամէն օր փուրգոններով գալիս են կողոպտուած ընտանիքներ, անպայման գնութեան կարօտ։ Գալիս են, առանց ոչ մի միջոցի, մի կոտոր չոր հացի կարօտ։ Մի ամիս առաջ իր սեփական յարկի տակ պատսպով ու ապահով ապրող մարդը, այսօր ձեռք է մեկնում ուրիշին, ողորմութիւն խնդրում։ Այս դժբախտների հաղորդած ցնցող լուրերը մարդ չի կարողանում հանդիստ լսել, այնքան յուզիչ են և աղէկարշ։

Երևան, 3 յունիսի

Մայիսի 26-ին Ղամարլում թիւրքերը յարձակուեցին հայերի վրայ և սկսեցին կրակ բաց անել։ Հայերը նոյն ձևով պատասխանեցին։ Կռիւը տեւեց մինչև ուշ երեկոյ երկու կողմից զոհեր տալով։ Գիշերուայ համատարած լռութեան մէջ հեռուից լսելի էին լինում չարագուշակ տրաք-տրաքոցի ձայները՝ աւելի մեղմ չափով։ Հետևեալ օրը՝ 27-ին, կրկին շարունակուեց մասամբ ընդհատուած կռիւը։ Թիւրքերի մի մասը զինուած էր հինգ կրակոց վերջին սիստեմի հրացաններով։ Երկրորդ օրը հայերի յարձակումը բուռն էր. մի քանի զոհեր ընկան թիւրքերի կողմից, իսկ վերջինները իրենց վրէժը առան, սպանելով մի ռուս ստրաժնիկ և երկաթուղու ճանապարհի վրայի բանուորներից մի վրացի և մի յոյն։

Երևան, 4 յունիսի

Խանլղլար գիւղի համար յունիսի 1-ի գիշերը ամենածանրն էր։ Գիւղում խմբուել էին Շարուրի 5 հայ գիւղերի ժողովուրդները։ Գիւղը չորս կողմից պաշարուած էր հազարաւոր խուժանով. երկու կողմից թափւում էր գնդակների տարափ։ 220 զինուորներից մի մասը փախչում է Նեզիլա, միւս մասը՝ Բաշնորաշէն և բաց դաշտը։ Հայ քաջերը շարունակում են յամառ դիմադրութիւնը։ Գաւառապետի օգնականը նոյնպէս փախչում է։ Այդ ծանր գիշերուայ ընթացքում գիւղից ցրիւ են գալիս նաև հայերը։ Այդ նոյն գիշեր 25 մարդ երկու սեռի, մեծ ու փոքր, փախչում են Խանլղլարից 25 վերստ հեռաւորութեամբ խաչէկ գիւղը։ Սակայն երեք օր անց՝ երբ վերադառնում են նորից Խանլղլար, դրանցից 10 հոգի անզէն՝ մի ձորի մէջ ենթարկուում է Բիլաւի և Ախուրի թիւրքերի յարձակման և դրանցից վեցը սպանուում են այդտեղ։ Յունիսի 8-ին, Քասլան գիւղի թիւրքերը քշեցին Խանլղլարի տաւարը։ Հաւարի հասան թէ գիւղացիները և թէ կողակները. տաւարը յետ բերեցին առանց մեկի և 13 հատ էլ թիւրքերի հ տից։ Ընդհարումների միջոցին թիւրքերից բանտարկեցին 98 հոգի, որոնց թիւում նաև մի մօլլա և մի սէիդ դր շարկով։ Բանտարկածներից մեկի մէջքին կապած էր Վարմանդեարի եկեղեցու աւետարանը։ Սոսկալի կերպով նկարագրում են այժմ ժողովրդի դրութիւնը։ Աւելի ևս ծանր է Խանլղլարի դրութիւնը. մ՝ա 6-7000 ժողովուրդ խմբուելով այդ միակ գիւղի մէջ՝ առաջ է բերել սոսկալի նեղուածք։ Մարդիկ

կանայք, երեխաներ թափուած են փողոցներում, բակերում միմիայն վրայ. գիւղում կանգնած է սոսկալի հոտ։ Եթէ այդպէս շարունակուի, տարափոխիկ հիւանդութիւնները անխուսափելի են։ Հացի նեղութիւն շատ են քաշում։

Երևան, 7 յունիսի

Հայ-թիւրքական ընդհարումների բեմ հանդիսացաւ Աշտարակի շրջանը, ուր թիւրքաբնակ Ուշի գիւղը ենթարկուեց յարձակման և աւերուեց։ Ահա մի քանի մանրամասնութիւններ։ Աշտարակի շրջանում գտնուում են մի քանի թիւրք գիւղեր— Ուշի՝ 164 տուն, Քիչիկքեանդ՝ 39 տուն, Կօթուր՝ 34 տուն, Սազմնասվանք՝ 28 տուն (այս երկու գիւղերում կան նաև հայեր), Ագարակ՝ 90 տուն, Թալբիա՝ 95 տուն, Նազրվան՝ 80 տուն, Պերսի՝ 55 տուն։ Ուշի գիւղը՝ ընկած Աշտարակից Ալէքսանդրապոլ տանող ճանապարհի վրայ, այդ գծի երթևեկութիւնը յոգնակի դարձնում է անհնարին։ Այդ բանը աւելի նկատելի եղաւ վերջին ժամանակներս, երբ Երևանի ընդհարումները գրգռեցին Նահանգի թիւրք ժողովրդի աւանդական հակումները։ Ուշին մոլեռանդութեան գագաթնակէտին հասաւ և այդ պատճառով վնասուեց։ Մայիսի 24-ին Կօթուր գիւղի թիւրքերը, միանալով Արագածի քրդերի հետ, յարձակուում են և հայերի նախիրը՝ 300 տաւար՝ քշում տանում են։ Կօթուրի հայ և թիւրք թաղերը բաժանուած են մի ձորակով։ Կօթուրի նախիրը յետ բերելու համար օգնութեան են գնում օշականցիք, և ընդհարման ժամանակ վիրաւորւում է Օհան անունով մէկը։ Այդ վերաւորին սայլի վրայ դրած, երբ տանում են Իլան-Չալան գիւղը, ճանապարհին ուշեցիք յարձակւում են, վերցնում վերաւորին սայլի հետ միասին։ Այս վարմունքը զայրոյթ է առաջ բերում հայերի մէջ։ Գաւառապետը գնում է այդ շրջանը և մի կերպ հանգստացնում։ Սակայն թիւրքերը չեն թողնում սպառնական դիրքը։ Քիչիկքեանդի, Կօթուրի, Սազմնասվանքի, Ագարակի, Փարբիի, Նազրվանի և Կոշի թիւրքերը քաշւում են Ուշի։ Այս համախմբումը աւելի ևս սպառնական է դառնում և այդ գիւղի մօտերքում, մայիսի 26-ին, սպանուում են երկու զաւաֆարցի հայեր։ Այդ կռուերով յարաբերութիւնը միանգամայն ընդհատուում է։ Ահա այս բոլորը միանգամից հասնում են շրջակայ հայ գիւղացիներին համբերութիւնից և յունիսի 4-ին, շաբաթ օր, Աշտարակից, Կարբիից և Իլան-Չալանից մի զինուած խումբ յարձակւում է Ուշի վրայ. տեղի է ունենում մի տաք կռիւ, սպանուում են շատ թիւրքեր։ Ժողովուրդը փախչում է և գիւղը ենթարկուում է թալանի և հրդեհի։ Վերև յիշած թիւրքաբնակ գիւղերը նոյնպէս յայտնի չափով ենթարկուել են հրդեհումների։

Թիֆլիս, 8 յունիսի

Նախիջևանի և նրա շրջակայ գիւղերի աւերն ու կողոպուտը աւելի չափազանց դրգռեց թիւրք խուժանի ախորժակը։ Յարձակումների կենտրոնը կազմում էր Նախիջևանի գաւառի Իթզուան գիւղը, որը մի առանձին հակումն ունենալով աւազակութիւնների՝ մեծ դեր է կատարել կոտրածի ու կողոպուտի մէջ։ Նախիջևանի դէպքերից յետոյ՝ Լուխ, Բղջով, Գեարմչաթաղ, Չաթմա և այլն թիւրք գիւղերից մի խուժան, իրեն առաջնորդ ունենալով Իթզուանի թիւրքերին, մայիսի 15-ին յարձակուում է Դարալագեազի սահմանի վրայ գտնուող Սուլթան-բէկ 89 տուն ունեցող գիւղի վրայ և թալանելուց յետոյ՝ այրում գիւղը։ Անոպասելի յարձակումը հնարաւորութիւն չէ տալիս ուժեղ դիմադրութիւն ցոյց տալու։ Նոյն խուժանը ապա յարձակւում է սահմանի վրայ եղող Սեռ գիւղի վրայ, 51 տուն, և թալանում։ Սուլթան-բէկի և Սեռի ժողովուրդը քաշւում է Մարտիրոս գիւղը։ Խուժանը շարունակում է առաջ գնալ և հասնելով Մարտիրոսի սահմաններին, քշում է 700 գլուխ ոչխար, սակայն այնտեղ տեղի է ունենում մի փոքր ուժեղ դիմադրութիւն և յետ խլում ոչխարի կէսը։ Խուժանի մի մասը աւելի ևս առաջ գնալով՝ պաշարում է 38 տուն ունեցող Ալմալու գիւղը, սակայն վերջինը իր դիմադրութեան շնորհիւ կարողանում է 18 օր շարունակ պաշարած մնալ մինչև որ տեղի է ունենում մի ուժեղ հակայարձակում հայերի կողմից։ Ալմալու գիւղի այդ պաշարման ժամանակ թիւրքերից սպանուում են մօտ 2՝ Կոզիի Մի քանի օրւայ ընդմիջումից յետոյ, Իթզուան սատանում է սպառնակներ մի նոր այժ, այս անգամ Դարալագեազի, Գէմրլու, Ջուլ և Ախտա գիւղերից, ինչպէս և Դարալագեազի հիւսիսային կողմի գիւղերից, ուր տաբեալ են բաւականաչափ աւարներ և ուր այժմ կան վերաւոր մարդիկ։ Այդ նոր, ստուարացած խուժանը, յարձակուելով Մարտիրոս գիւղի վրայ երրորդ անգամ, տանում է ոչխարը, իսկ այնտեղից էլ խուժում է 77 տուն ունեցող Փաշալան գիւղի վրայ և քշում նախիրը։ Խուժանը գնալով երես է առնում և առաջ ու առաջ խուժում։ Արդէն յունիսի 1-2-ին յարձակում է Աեարը գիւղի և Քէշիշ-Քեանդի վրայ լինում են ընդհարումներ, սպանուում է մէկ հայ։ Աեարցիք և Քէշիշ-Քեանդցիք ստիպուած են լինում քաշուել 164 տուն ունեցող Մալիջկա մեծ գիւղը։ Այս անգամ խուժանը այլևս առաջ գնալ չէ կարողանում։ Մարտիրոս և Մալիջկա գիւղերում խմբուած ժողովուրդից կազմուում է մի զինուած խումբ, Աւագ և Մկրտիչ անուններով երիտասարդների ղեկավարութեամբ, որը յարձակուելով՝ նախ քշում է մինչև այդ Ալմալու և Փաշալու գիւղերը պաշարող խուժանը և ապա արշաւելով Թալանի ու կողոպուտների կենտրոն կազմող Իթզուանի վրայ՝ տալիս է մի Ջարդ։ Խուժանը տեսնելով հայ քաջերի արշաւանքը՝ ցրուի է գալիս մեծ կոտրածներով։ Պատմում են որ 150-ի չափ սպանուածներ կան այդ գիւղի մէջ։ Գիւղը բոլորովին դատարկուում է. հայերը այդ գիւղում գտնում են իրենց աւարից շատ բաներ։ Այդպիսով տասնեակ գիւղեր թալանող, աւերող, և հազարաւոր մարդիկ անբախտացնող Իթզուանը նոյնպէս աւերուում է և հրդեհուում։ Այս հակայարձակումից յետոյ այդ շրջանը մի փոքր հանգստացել է։

Երևան, 9 յունիսի

Յունիսի 6-ին թիւրքերի և պարսկական քրդերի մի խումբ, գլուխ ունենալով մի մոլլա, յարձակուեցին Բիրալու հայ գիւղի վրայ, Երևանի գաւառում։ Ձիաւորները քշեցին տարան հօտը. հեռաւորներն ուզում էին կողոպտել գիւղը։ Սկսուեց հրաձգութիւն։ Հօտը յետ խլեց։ Գիւղն ազատուեց։ Սպանուած են 2 հայ և 40 չափ թիւրք ու քիւրդ։ Բռնուած են առաջնորդող մոլլան և մի թիւրք։

Նախիջևան, 10 յունիսի

Կառավարութեան գիրքը շարունակում է լինել անվստահելի։ Դրութիւնը քանի գնում լրջանում է։ Իշխանութիւնների գործողութիւնների եղանակը մնում է միևնոյնը՝ թոյլ երկդիմի։ Գիւղացիները չեն վերադառնում տուն։ Սկսել է նոյն իսկ գիւղացիների մասային գաղթ։ Զնչին գնով ծախում են տաւարը։ Գէոմուրի վրայ կատարուած երկրորդ յարձակումը երեկ յետ մղեցին Գերուսիից եկած կօզակները։ Գէոմուր ուղարկուած չօրս փուրգօնը, որոնք բեռնուած էին ալիւրով սովեալների համար, ենթարկուեցին թիւրքերի յարձակման։ Մայիսի 18-ին ժողովրդից թողուած նոյն գիւղը ենթարկուեց կրակի. այժմ այրուում է. ոստիկանութեան թուլութիւնը վրդովեցուցիչ է։

Կարս, 28 յունիսի

Երևանի և Նախիջևանի դէպքերը վերին ատիճանի խիստ ազդեցութիւն գործեցին այստեղի պարսիկների վրայ, որոնք քաղաքում, թէ մզգաւառներում և թէ մանուֆակտուրայի տեսակներով պարապողներ, հազիւ հասնում են 20 գերդաստանի։ Կան և ջրկիրներ ու արհեստաւորներ, որոնք առանց ընտանիքի են ապրում։ Այժմ նրանք վերջնականապէս վճռել են թողնել Կարսը և գնալ այնպիսի գիւղեր կամ քաղաքներ, ուր զուտ պարսիկներ են։ Այսպէս այժմ բոլորը ծախեցին և ծախում են իրենց ունեցած շարժական և անշարժ բոլոր դոյքը. մի քանիսը գնում են Աղբաբայի գիւղերը, խանութ են բաց անում, մի քանիսը Զարիշատի կողմերը, ոմանք էլ Գանձակ, Շուշի, Ասորստան և այնտեղ, ուր պարսիկները մեծամասնութիւն են կազմում։ „Մեզ համար այժմ կարսը հարամ է“. այսպէս են խօսում մեր դրացի պարսիկները։ Հայերը մի քանի անգամ յայտարարեցին նրանց, որ երբէք նախայարձակ չեն լինելու։

Նախիջևան, 30 յունիսի

Երեկ Պրինց Նապ լէօն ուղեկցութեամբ գեներալ Ալեխանովի և Մերսոպ վարդապետի շրջեց մի քանի գիւղեր։ Նա այցելեց քանդուած եկեղեցիները, գիւղերի բնակիչների թոզած տները։ Ամեն տեղ ժողովրդի ներկայութեամբ հրամայում էր զինուորներին գործածել զէնք յարձակողների դէմ։

Միևնոյն ժամանակ նա խոստացաւ. 1) Միջնորդել, որ վոխարքան թոյլ տայ ամեն մի վնասաւած գիւղին պահել մի քանի հրացաններ՝ ինքնապաշտպանութեան համար. 2) Կառավարել իր չարագործութեամբ յայտնի Ջահրիի տանուտերին; 3) Տալ նիւթական օժանդակութիւն նախնական կարիքների համար։ Կարծիք կայ, որ Պրինց Նապոլէոն հրապարակ պիտի բերէ գենեռալ Ալիխանովի գործած ոճիրները, և պաշտպան պիտի կանգնի խաղաղ ժողովրդին, եթէ Թիֆլիսից՝ փոխարքայի կողմից հակառակ հրահանգներ չտարուին *)։

Թիֆլիս, 30 յունիսի

Շուշուց եկող լուրերը ցոյց են տալիս, որ Թիւրքերը այնտեղ զգոյշ են պահում իրենց։ Երևանի դէպքերից յետոյ նրանք այն կարծիքի են, որ հայերի հետ լինելիք ընդհարումը իրենց շատ թանկ կարող է նստել։ Ընդհանուր կարծիք կայ, որ ոստիկանութեան և պանիսլամիստների դաւերը աջողութիւն չը պիտի ունենան։

Թիֆլիս, 30 յունիսի

Գենեռալ Ալիխանովի Նախիջևան ուղարկելը եղաւ մի մեծ չարիք։ Նա խրախուսեց Թիւրքը խուժանը՝ սիրտ տուեց ոճրագործ խաներին։ Վ.ՕՐՆՅՕՎ-ԴԱՇԿ վի՝ այդ քայլը համարում է ամենամեծ ապացոյց՝ որ նա ունի դաղտնի դիտումներ։ Կայր պէտք է լինել չհասկանալու համար, որ Նախիջևանի խաների բարեկամ Ալիխանովի տուքումը՝ մի աշկարայ խրախուսանք էր պանիսլամիստների համար։

Երևան, 30 յունիսի

Քաղաքում լուր է պատում, որ Կոմս Տիզենհաուզէն ազատ չէ իր գործողութիւնների մէջ։ Թիֆլիսից նրա վրայ ճնշում են գործ դնում։ Հակառակ դէպքում նահանգապետը հէնց սկզբից կարող էր ոչնչացնել պանիսլամիստական ագիտատորների ազդեցութիւնը։ Վատ դեր են կատարում նոյնպէս և մի քանի ռուս չինովնիկներ, որոնք իրենց հայատեացութեամբ թոյլ չեն տալիս նահանգապետին՝ զսպելու ոճրագործութիւնը։

Թիֆլիս, 30 յունիսի

Փոխարքայ Վ.ՕՐՆՅՕՎ-ԴԱՇԿՈՎ մերժեց հայերին զէնք տալու խնդիրը։ Հայ ազգաբնակութիւնը չի խնդրում կառավարութիւնից ոչ զօրք և ոչ էլ պաշտպաններ, այլ միայն իրաւունք զէնք կրելու և զէնք չեղած տեղում՝ հրացաններ ինքնապաշտպանութեան համար։ Կառավարչական շրջաններում շատ լաւ են համոզուած, որ այս միակ միջոցն է խաղաղութիւնը վերահաստատելու համար, բայց և այնպէս հայերին զէնք տալու միտքը հանդիպում է մեծ թշնամութեան պաշտօնեաների կողմից։ Թիւրքերը այդ հանգամանքից աւելի են սիրտ առնում։

ՆԱԽԱՄՏԱԾԻԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ)

Թիֆլիս, 14 յունիսի

Կառավարութեան ստեղծած դժոխային վիճակը շարունակւում է։ Օրէցօր աւելի և աւելի պարզւում է այն ծրագիրը, որի համեմատ տեղի ունեցան արիւնոտ դէպքերը։ Խնդիրը բարդ է և խճճւած։

Կան զանազան ֆակտորներ։ Ամենից առաջ Գոլիցինի կառավարութիւնն էր, որ ծրագրեց թուլացնել հայ տարրը, նրա դէմ հանելով տգէտ և ֆանատիկոս մահմէտական խուժանը, բայց գլխաւորապէս թիւրք (թաթար) և քիւրդ տարրը։ Կիսախելագար հրէշը հետևեալ մտածումն է ունեցել.—Թիւրքերին թոյլ կըտանք զինաւորուիլ, նրանց կը գցենք հայերի ջանին, իսկ յետոյ նրանց կը զարկենք մեր զօրքով, եթէ չեն բաւականանայ հայերով կամ այլ ինստինկտներ կ'արտայայտեն։ Գոլիցինը կամեցաւ ստեղծել միայն հակահայկական շարժում, բայց ստեղծելով այդ շարժումը՝ նա չկարողացաւ ըմբռնել, որ դրան կը հետևի հակաքրիստոնէական գուցէ և հակապետական շարժում։ Եւ այսօր, երբ հակահայկական շարժումը փոխւում և դառնում է հակաքրիստոնէական, սպառնալով հակապետական ուղղութիւն ևս ընդունել, նոր են աչքերը բացանում, զգում վտանգը և տեսնում, որ դժուար է հանգցնել բռնկւած կրակը։

Ահա մի քանի մանրամասներ այդ մասին։ Նախ քան Գոլիցինի ծրագիրը, Բագւում կազմւում է պանիսլամական կազմակերպութիւն, շնորհիւ Կ. Պոլսից եկած էմիսարների պրոպագանդայի։ Այդ կազմակերպութիւնը, որի ղեկավարներն են գլխաւորապէս „Կասպի“ լրագրի գործողները, իրեն նպատակ է դնում միացնել երկրի շիա և սիւնի մուսուլմաններին, աշխատելով նուազեցնել կամ քշել Անդրկովկասից քրիստոնեայ տարրերը և հեշտացնել նրա նուաճումը, երբ կըստեղծուեն քաղաքական նպաստաւոր հանգամանքներ։ Այդ կազմակերպութիւնը դրդում է Մաքուի ու Նախիջևանի խաներին միանալ իր հետ, պարզելով նրանց առաջ յոյսը՝ վերստին գրաւելու Նախիջևանի խանութիւնը և անկախութիւն ձեռք բերելու։ Կազմակերպութիւնը, ինչպէս երևում է, զինման գործը մեծ եռանդով առաջ է տարել տարիների ընթացքում Մաքուի ու Նախիջևանի խաների միջոցով, որովհետև այժմ հաստատւած է, որ Արաքսի մօտ „ուտէլ“ կայսերական „Արազիանա“ մեծ կալւածում (10 հազար դեսիատին) կառավարիչը, որ մի թիւրք է, հաստատել է զէնքի կենտրոնական պահեստ, տեղը շատ ապահով, որովհետև ոչ մի ոստիկանութիւն այդտեղ մուտք գործել չէր կարող, նամանաւանդ որ Նախիջևանի գաւառի պրիստաւները թիւրքեր են և Նախիջևանի խաների ազգականները։ Մաքուի խանութիւնից ահագին քանակութեամբ զէնք են փոխադրում այդ կալւածը և այդտեղից տարածում ամեն տեղ։

Երբ Բագւի կոտորածները միանգամայն համոզել թիւրքերին, որ ռուս կառավարութիւնը ոչ մի արգելք չի ցոյց տայ, ծրագրւեց հայ տարրի ջնջումը Երևանի նահանգում և Ղարաբաղում։ Այդ ծրագրի իրագործման գլուխ կանգնեցին Նախիջևանի խաները, գլխաւորապէս Ջաֆար զուլի խանը և Բահիմ խանը։ Սակայն Ղարաբաղի բէկերը — Ղարաբաղի խաների ժառանգները — չհամաձայնեցին յարել ծրագրին և այդ պատճառով Գանձակի նահանգը առայժմ զերծ է պատուհասից։ Գոնէ Ղարաբաղի բէկերը յայտնել են, որ նրանք թոյլ չեն տայ Ղարաբաղում յարձակում թուրքերի կողմից։

Որ Նախիջևան գաւառի կոտորածների ղեկավարները Նախիջևանի խաներն են և որ ներկայ շարժումը համիսլամական բնաւորութիւն ունի, դա կարելի է համարել անկասկածելի։ Բերենք մի քանի փաստեր.

1) Երբ Խանլուխլար գիւղը պաշարւած էր հրոսակներով, ժողովրդին օգնութեան եկած զօրքի ղեկավարները պարզ տեսան, որ մահմէտական խուժանի պարագլուխները ֆէս ունէին, կարմիր թևքեր, Մարգարէի սև դրօշակը, որի վրայ „ՉՀատ“ էր գրւած և բացի դրանից պրոկլամացիոններ՝ կոտորելու անհաւատ քրիստոնեաներին և տարածելու իսլամը։ 2) Տեղացի խուժանի հետ միասին կուում էին և զէնքի վարժւած մարդիկ, ինչպէս երևում է „համիդիէներ“, ուղարկւած Թիւրքիայից։ 3) Մի պրոկլամացիոնի մէջ ասւած է եղել, թէ պէտք է կոտո-

*) Մեր ստացած յետագայ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ խորհուրդները անամոթ միստիֆիկացիա են եղել։

ել հայերին, որովհետև նրանք էին, որ 100 տարի առաջ իսլամի տիրապետութեան տակ գտնուող երկիրները — Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանութիւնները — ռուսների տիրապետութեան ենթարկեցին։ 4) Թիւրքերը չեն բաւականանում հրդեհով կողոպուտով և սպանելով, այլ առանձին հաճոյքով պղծում են եկեղեցիները, անարգում սրբութիւնները, ստիպում հայերին իսլամութիւն ընդունել։ Բատամլու գիւղում ստիպել են 800 հայերի քահանայի հետ մուսուլման դառնալ, ածիլելով տղամարդկանց, թլպատելով երեխաներին և բռնաբարելով կանանց։

Ինչպէս յայտնի է, շարժումը սկսեց մայիսի 8-ին և 12-ին տեղի ունեցաւ Նախիջևանի կոտորածը։ Այնուհետև նա տարածուեց ամբողջ գաւառում և այնտեղից անցաւ Շարուր և այլ գաւառներ և եթէ չլինէին վերջին օրերի դիմադրութիւնը հայերի և մի քանի տեղ էլ զօրքի կողմից, շարժումը կը տարածուէր ամբողջ Անդրկովկասում։ Լուր եկաւ, որ Ջիբրայիլի կողմից (Խուտաֆերին կամրջի կողմից) 2,000 զինուած մահմեդականներ պատրաստւում են անցնել Արաքսը։ Մաքուի կողմից ևս մեծ թիւով զինուած քիւրդեր անդադար անցնում են սահմանը, վերսկսելու խլրտումները։

Կայ մի այլ, երկրորդական ծրագիր ևս. — Հայերին կոտորել կամ ստիպել գաղթել ուրիշ տեղեր և նրանց հողերին տիրանալ։ Եւ տարաբախտաբար հայերի գաղթականութեան հոսանքը Նախիջևանի գաւառից արդէն սկսել է։ Յունիսի 12-ին 100 ընտանիք հասաւ Թիֆլիս։ Եթէ չկարողանանք այդ հոսանքի առաջն առնել, Նախիջևանի գաւառը ամբողջովին պիտի դատարկուի հայերից։

Նախիջևանի գաւառում աւերուած են 25 գիւղեր և սպանուածների թիւը հասնում է 400-ի։ Նախիջևանում՝ 48 հոգի, Ջահուկ՝ 51, Հաջիվար՝ 9, Մամարզա՝ 5, Թմբուլ՝ 19, Նորս 50 և էլն։ Կողոպուտը, թալանը, նիւթական վնասը ահագին է։ Նախիջևան քաղաքի 182 հայ խանութներից մնացել են չորսը միայն։ Դաշտերում ցանքերը փճացուել, ոտնակոխ են եղել և այս ձմեռ սպառնում է սով։

Կատաղած այդ անլուր բարբարոսութիւնից՝ հայերը համբերութիւնից դուրս եկան և վճռեցին արեանը արեամբ պատասխանել։ Երևանի գաւառում հայ զինուած ուժերը աւերեցին 12 թիւրք գիւղ և շատ տեղերում լաւ դաս տուեցին թիւրքերին, առանց գործելու, իհարկէ, այն սոսկալի անգթութիւնները, որ թիւրքերին է յատուկ, այն է՝ կանանց ծծերը կտրել, արգանդը պատռել և երեխան հանել, մերկացնել, բռնաբարել աղջիկներին, կրօնական անօթները պղծել և էլն։

Ի՞նչ էր անում այդ բոլոր ժամանակ ռուս կառավարութիւնը, կը հարցնէք. ի՞նչ էր անում նոր փոխարքան, Վ.օրոնցով-Դաշկով, որ Կովկաս եկաւ այնքա՜ն մեծ խոստումներով, բայց որը ըէֆօրմների փոխարէն՝ բերեց արիւն և արտասուք. այդ մասին յաջորդ նամակով։

22 յունիսի

Երկրորդ օրն է, ինչ քաղաքի դրութիւնը բոլորովին փոխուած է։ Գործարանները կանգնած են, ելէկտրաքարշերը դադրած և համարեայ բոլոր խանութները փակ։ Գործադուլ անողները ուզում են մինչև անգամ քաղաքի ջուրը կտրել։ Մնում են բաց հացի խանութները, բայց կարող է պատահել, որ նրանք էլ փակուեն։ Փողոցներում շրջում են անընդհատ զինուորների և կօզակների խմբեր։ Գիշերը իւրաքանչիւր ոստիկան շրջապատուած է մի քանի զինուորներով,—դողում են ահաբեկիչներից։ Գործադուլ հրատարակելու գլխաւոր պատճառը այն է, որ ոստիկանութիւնը ժողովներ գումարելով, բացարձակ սկսել էր. զինել „Հայրենասիրական Միութիւն“ կազմող ռուս բանուոր-խուլիգաններին։ Ապաւինած ոստիկանութեան ուժին, այդ „հայրենասէրները“ յանդգնել էին նոյն իսկ տէռորներ կատարել կազմակերպուած բանուորներից մի քանիսի վրայ։ Ահա թէ ինչու բանուորների գլխաւոր պահանջն է՝ զինաթափ անել խուլիգաններին և ոստիկանութիւնը դնել քաղաքի հսկողութեան ներքոյ և կազմել քաղաքային միլիցիա։

Կայարանի մօտերքը շարունակ խուզարկութիւններ են լինում։ Գտել են 35 ատրճանակ, մի քանի հրացան և ռումբեր։ Գիշերները կառքով թէ ոտով շրջողներին յանկարծակի բռնում և խուզարկում են, իսկ քաղաքի ծայրերում նոյն բանը անում են և օր ցերեկով։ Ամէնքը լարուած դրութեան մէջ են։ Ցաւառ լուրեր են պտտում, որ ռուս խուլիգանները, միացած թիւրք սրիկաների հետ յարձակում են գործելու հայերի վրայ։

27 յունիսի

Դրութիւնը աւելի սարսափելի է դառնում. ամէն օր արիւն, կոտորած։ Ամէն ինչ կանգ է առել։ Փողոցներում խուզարկութիւնները աւելի են սաստկացել։ Երէկ-ւանից սոց.-դէմոկրատները (Փոքրամասնութիւն) սկսել են գործունէութիւն ռումբերով։ Մինչև այժմ գցել են 5 ռումբ։ Սպանուած են ոստիկաններ, կօզակներ. վիրաւորները շատ են. սրանց թիւն է և յայտնի հայատեաց պրիստաւ Գլէբովը, որը կազմակերպում և զինում էր թիւրքերին։

Փոխարքայի օգնական Շիրինկինը, որն է իսկապէս Կովկասի կառավարիչը, կանչել է քաղաքագլխի պաշտօնակատար Զերքեզովին և սպառնացել է թնդանօթի բռնել քաղաքը, եթէ այդ արիւնոտ գործադուլը կանգ չառնէ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆՈՐ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վան, 15 ապրիլի

Երկրի կացութիւնը վերին աստիճանի նեղ է. սովը տիրապետող համարեա բոլոր խաւերին։ Կառավարութիւնը օգուտ քաղելով այդ հանգամանքից, սկսեց „աչքակապուկ“ խաղալ։ Բարեգործութեան դիմակի տակ չարիքներ ստեղծելը այս երկրի համար օրէնք է։ Մի ամիս առաջ լուր տարածուեց, որպէս թէ կառավարութիւնը քաղցած ժողովրդեան նպաստներ բաժնելու բարի ցանկութիւնն ունի։ Եւ կատարուեց նպաստի բաշխման գերաշխարհային հանդէսը, լի թիւրք վարչութեան բազմատեսակ խաղերով։ Ամէն մի ընտանիքի պիտի վճարուէր հինգ դահեկանի պէս մի մեծ գումար։ Արդեօք սա էլ մի ծաղր չէ՞ քաղցած ժողովրդեան։ Բայց դա դեռ բոլորը չէ։ Ամէն մի ընտանիք պարտաւոր է ունենալ իր կնիքը, որպէս զի ստացականների տակ զարնէ իր մէօհրը։ Խեղճ գիւղացին պարտաւորուեցաւ 100 փարայի մի կնիք շինել տալ, ուրեմն իր [illegible]ստի—5 դահեկանի

կէսը պիտի յատկացուէր գործառնութեան վաւերացման։

Բայց պարզուեց, որ դա ոչ թէ նպաստ էր, այլ բանկային փոխառութիւն, որի դիմաց գիւղացին գրաւ պիտի դնէ իր արտերը. գուցէ և մի այլ նպատակի ծառայէ այդ չարագուշակ հինգ ղուրուշը։

Հայոց Ձորի, Թիմարի և մի քանի գաւառների ժողովուրդը, չհասկանալով բանը ինչումն է, ընդունեց. ուշտունցիք, մոկացիք և կառկառցիք մերժեցին բացարձակապէս։ Ուրեմն գնդակը միայն մասնակի նպատակին հասաւ։ Այս օրերս Ոստանի գայմագամութիւնը ազատ արձակեց Նարեկի դէպքի յայտնի ոճրագործներին. Վըրկոնիսայ շէյխ Ռաշիտի լամուկը, որ յայտնի բարբարոս է Ուշտունիքում և որը Նարեկի մէջ ամենամեծ դերն է կատարել, ազատ արձակեցին, որպէս միանգամայն անմեղ Նարեկի խնդրում։ Նոյն դէպքի մէջ յայտնի եղած Աւանին, որ մինչև հիմա փախստական վիճակ ունէր, Ոստանի գայմագամութեան կողմից ազատութիւն շնորհուեց, ի խրախոյս իր կատարած ոճիրների։

Նարեկցի Բագալ անուն անձը, որպէս քաղաքական յանցաւոր դատապարտուած է. Խալիլ էֆ. վկայել է, որ ոստիկան Արգիւլ Համիդի սպանողը Բագալն է և ինքը այդ տեսել է 3-4 քայլ հեռաւորութիւնից։ Զարմանալի բան. 18 Նարեկցիներ հրապարակօրէն սպանող քրդերն ու ոստիկանները անմեղ են ճանաչուում, իսկ մի ոստիկանի համար—որի սպանողն անյայտ է—քաղաքական յանցաւոր են գտնում նոյնիսկ Ամերիկայում։ Նարեկցի Արսէն անուն երիտասարդը, որ դէպքից երկու ամիս առաջ Ամերիկայ էր գնացել 8-10 տարուայ բանտարկութեան դատապարտուեց։ Մոխրաբերդ գիւղի Ռափայէլ վարժապետի համար, որ փախստական է, նոյնպիսի բանտարկութեան վճիռ է արձակուած։

Ներկայիս Ռշտունիքի երեք գիւղերում զօրք է դրուած։ Նոր-գիւղ 40, Նարեկ 18 և Փախնէր 40 զինուոր։ Փախների մէջ զօրքերը Մանուկ անուն սրիկայ անձի միջնորդութեամբ բռնաբարել են մի քանի կանանց, որոնց անունները անկարող եղանք ձեռք բերել։ Նոր-գիւղ և Նարեկ սարսափելի բռնութիւններ են գործ դրուում. ծեծում են, գոմերի մէջ բանտարկում են, կաշառք են առնում։ Կարճկանի Մուսա բէյը վերսկսել է իր վայրագութիւնները։ Մարտի վերջերին նրա հրահանգով՝ իր մարդիկը յարձակուել են նոյն գաւառի Սորբ գիւղի վրայ՝ մի քանի յայտնի մարդկանց սպանելու. տղամարդիկ գիւղից փախչում են, ու քիւրդերը ձեռք ձգելով անտէր մնացած կանանց՝ բռնաբարում են առանց հասակի խղճութեան։ Նոյն բէյը սպառնում է գաւառի բոլոր յայտնի մարդկանց կեանքին, որոնք չտանելով Մուսա բէյի անսահման լկանքները, միւդիրութեան պաշտօնից ձգեցին նրան՝ կուսակալին աղերսագիր ներկայացնելով։

Թողնենք քրդական բարբարոսութիւնները, դառնանք եւրոպական հիւպատոսներին։ Ֆրանսիական հիւպատոսը տասն օր առաջ ցանկանալով գնել Աղթամարի կաթողիկոսարանի ձիերից մէկը, կառավարիչը իսկոյն ձին ղրկում է նրան և գինը յայտնում։ Հիւպատոսը երկու մէճիտիէ նէբէ է տալիս ձին տանողներին ու հեռացնում։ Երեք օր վերջը կաթողիկոսարանը դրամական նեղութիւն ունենալով, մի գրութեամբ ձիու գինն է խնդրում։ Հիւպատոսը զայրացած՝ յետ է խլում իր նուիրած երկու մէճիտիէն և քակել տալով ձիու պայտերը, ծեծել է տալիս կաթողիկոսարանի մարդկանց, դուրս վռնդում և սպառնալով կաթողիկոսարանին, անմիջապէս վազում է կուսակալի մօտ։ Նրանց մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը անյայտ է. այսքանը միայն գիտենք, որ Ատհամ բէյ, խլելով ձին՝ նորից ղրկում է հիւպատոսին։ Վճարի տալը անյայտ է։ Տանջուած ժողովրդին այդ տեսակ դէպքեր էին պակաս։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՎԷՃԸ ԴԵԼԿԱՍԷԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Դիւանագիտութեան ոճրագործ խաղերի շնորհիւ՝ մի նոր փոթորիկ է սպառնում այսօր քաղաքակիրթ աշխարհին, մի նոր պատերազմ, որի պատճառած արհաւիրքներից երկար ժամանակ չի կազդուրուի արևմտեան քաղաքակրթութիւնը։

Բարեբախտաբար, ընդհարումը առայժմ զուտ դիւանագիտական բնոյթ ունի միայն և մեծ յոյսեր կան, որ Մարոկկոյի առթիւ ստեղծուած ճգնաժամը չի սրուի մինչև այն աստիճան, որ Ֆրանսիան և Գերմանիան, բոլոր խաղաղ միջոցները սպառելով՝ դիմեն, ինչպէս ասում են, ultima ration-ին, վերջին միջոցին—թնդանօթին... Հրդեհը այդ դէպքում պիտի տարածուէր, հաւանականօրէն, Մեծ Բրիտանիայի վրայ ևս, որը չափազանց շահագրգռուած է Ֆրանս-գերմանական հակամարտութեամբ և որին չափազանց մտատանջում է Գերմանիայի զինուորական հմայքի արագ աճումը։

Մարոկկոն դառնում է երկրորդ Թիւրքիայ մի նոր կուսլանձոր, միջազգային սուր մրցակցութեան մի ահաւոր կրկէս։ Ներկայ ծանր ճգնաժամի մէջ՝ անգլօ-գերմանական հակառակութիւնը աւելի մեծ դեր ունի, քան ֆրանս-գերմանականը։ Եւ այդ հանգամանքների պատճառները խոր են, նրանց պէտք է փնտրել ոչ Մարոկկոյում։

*

Տրանսվալեան պատերազմից յետոյ Անգլիան փորը ինչ խելքի եկաւ և նպատակ դրեց ոչ այնքան նոր-նոր նեաճումների քաղաքականութիւնը, որքան հների պահպանումը։ Պէտք էր ամրացնել ու ապահովել գաղութային տիեզերական պետութիւնը, որ վաղուց բոլորի նախանձն է շարժում և որի հսկայական տարածութեան վրայ, ինչպէս ասում են, արևը երբէք մայր չէ մտնում։ Պէտք էր ապահովել նրան երկու սպառնացող մեծ ուժերի դէմ—Ռուսաստանի և Գերմանիայի։ Ռուսաստանը սպառնում է նրան Ասիայում, Գերմանիան՝ ծովերի վրայ։ Վերջինը, ըստ երևոյթին, աւելի խոշոր հակառակորդ է յայտնուում Բրիտանական քաղաքագէտների աչքում։ Իր աշխարհածաւալ առևտրով ու արդիւնաբերութեամբ և իր յարձակուն նաւային ուժերով՝ նա հանդիսանում է „ծովերի թագուհու“ ամենասարկու ախոյեանը, որ աչք է դրել նրա ընդարձակ, հարուստ գաղութների վրայ և յաւակնութիւն ունի ժառանգելու նրա համաշխարհային տիրապետութիւնը։

Ռուսաստանի յարձակողական ուժը չէզոքացնելու համար՝ Անգլիան դաշն կապեց 1902 թուին Եապոնիայի հետ, որով նա պարտաւորուում էր օգնութեան հասնել իր դաշնակցին, եթէ այդ վերջինի վրայ յարձակում գործեն մէկից աւելի ցամաքային պետութիւններ (դիցուք, Ռուսաստանի հետ Ֆրանսիան)։ Մենք այժմ արդէն տեսնում ենք այդ նշանաւոր դաշինքի առաջին հետևանքները,—Ռուսաստանի մեկուսացումն ու տագնապը՝ հզօր ու յաղթական Եապոնիայի առջև։ Անգլիայի դէմ այլևս հնարաւոր չէ ոևէ եւրոպական նիզակակցութիւն։

Գերմանիային սանձահարելու համար՝ Անգլիան ձգտեց նախ և առաջ շահել Ֆրանսիայի բարեկամութիւնը։ Եւ այդ ճանապարհի վրայ նա հանդիպեց մի մարդու, որ միևնոյն ձգտումն ունէր՝ թուլացնել Գերմանիայի ուժը, ըստ կարելւոյն կղզիացնել նրան, հեռացնել նրա ազդեցութիւնը

լատին ցեղերից, հարուած տալով երեքպետական դաշնակցութեանը։ Անհրաժեշտ էր Անգլիային բարեկամանալ միջերկրական այն պետութիւնների հետ, որոնք ընկած են նրա ծովային հաղորդակցութեան գծերի վրայ,—Ֆրանսիայի, Իտալիայի, Սպանիայի, Պորտուգալիայի հետ։ Բրիտանական քաղաքականութեան նպատակը չէր յարձակողական դաշնակցութիւններ կազմել, այլ միայն մասնակի համաձայնութիւններ՝ իր հաղորդակցութեան մեծ ճանապարհը ապահովելու համար։

Այդ ճանապարհի վրայ է ընկած և աֆրիկական Մարոկկոն։ Լինելով սահմանակից Ֆրանսիական Ալժիրին, այդ բռնապետութիւնը, իր ներքին անիշխանութեամբ, վայրենաբարոյ, խուժդուժ ցեղերի մշտնջենական շարժումներով ու ասպատակութիւններով՝ լուրջ վտանգ է ներկայացնում ֆրանսիական գաղութի խաղաղ ու նորմալ բարգաւաճման համար։ Այդ պատճառով Ֆրանսիան, բոլոր միւս պետութիւնների շարքում, ամենից աւելի է շահագրգռուած Մարոկկոյի ճակատագրով, նրա ներքին կարգով ու խաղաղութեամբ։

Բրիտանիան պատրաստ է յանձնել Մարոկկոն Ֆրանսիային և առհասարակ լատին ազգերին, վստահ լինելով նրանց բարեկամութեան վրայ, բայց նա միանգամայն դէմ է աշխարհագրական այդ վտանգաւոր դիրքում ուժ գիջում թոյլ տալու իր ծովային սխոյեան Գերմանիային, որը սաստիկ փափագում է մի նաւահանգիստ ունենալ այնտեղ։ Ահաւասիկ խնդիրներ, որոնք չափազանց կնճռոտում են Մարոկկոյի շուրջը ստեղծուած տագնապը։

Գերմանիան ուշիուշով հետևում էր երկու պետութիւնների կողմից իր դէմ լարուող դաւերին, իրեն մեկուսացնելու յամառ ձգտումներին, որով տոգորուած էր մանաւանդ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասէ։ Եւ երբ կայացաւ անգլո-ֆրանսիական հռչակաւոր համաձայնութիւնը, երբ յայտնուեց, որ այդ համաձայնութեամբ Ֆրանսիան իր բացառական հովանաւորութեան տակ է առնում Մարոկկոն և ստանձնում էր այնտեղ ռէֆորմներ մտցնելու պաշտօնը, առանց անգամ խորհրդակցելու Գերմանիայի հետ, որը նոյնպէս ունէր այդ երկրում իր տնտեսական շահերն ու քաղաքական միտումները, այն ժամանակ կայսրը այլ ևս չհամբերեց. խօսեց. և խօսեց յանկարծակի, փոքր ինչ վայրագ տոնով։ Նա գնաց անձամբ Մարոկկոյի սուլթանի մօտ և լարեց նրան Ֆրանսիայի դէմ։

Սկսեց Տանժերի սովորական, նենգաւոր խաղը, որ տարիներից ի վեր յաղթութեան դափնիներ է վաստակում Բոսֆորի ափերում։ Եւ զարկեց ահակոչնակը, Եւրոպան յուզեցաւ, ասես պատերազմի շէփորն էր հնչում Մարոկկոյի մայրաքաղաքից։ Ֆրանսիան էլ սթափուեց և զարմանքով ու զարհուրանքով տեսաւ, որ ծանր վայրկեանի պատասխանատուն իր սեփական դիւանագիտութիւնն է, մինիստր Դելկասէն է, որը տարիների ընթացքում ինքնագլուխ վարելով արտաքին գործերը, մի շարք վրիպումներով հասցրել էր երկիրը վաղուց ի վեր չտեսնուած ճգնաժամի։ Շիտակ ու վճռական մի թափով նա վայր գլորեց միահեծան մինիստրին և ուղեց ցոյց տալ դրանով իր լոյսեալ ընթացքը Գերմանիայի նկատմամբ և իր խաղաղ ու հաշտարար տրամադրութիւնը։

Վիլհելմ Բ. չբաւականացաւ դրանով։ Նրա գործակալները շարունակեցին գրգռել Մարոկկոյի սուլթանին, որը, ի վերջոյ, Գերմանիայի ճնշման տակ ու նրա թելադրութեամբ հրատարակեց մի շրջաբերական, որով հրաւիրում էր պետութիւններին խորհրդաժողովի՝ լուծելու համար Մարոկկոյի կնճիռները։ Եւ այդ առթիւ այսօր Պարիզն ու Բերլինը բանակցութեան մէջ են տակաւին։

Միաժամանակ Գերմանիայի բուրժուազիան մամուլը իր տոնը բարձրացրեց, ռազմական հովը առաւ, Վիլհելմի մտերիմները սպառնացին Ֆրանսիային՝ աւեր ու կործանումով... Սպառնացին նաև Անգլիային։ Նրանք այնուամենայնիւ խոստովանեցին, որ Գերմանիայի նաւային ուժերը չնչին են Բրիտանիայի հսկայ նաւատորմի դիմաց (13 ղրահանաւ ընդդէմ 35-ի) և որ վերջինը ջարդ ու փշուր կ'անէ առաջինին, կ'աւերէ գերմանական նաւահանգիստները։ „Սակայն—ասում են Բիսմարկեանութեան դաժանադէմ խնկարկուները—հնարաւորութիւն չունենալով մերձենալու բրիտանական կղզիներին, մենք կը հեղեղենք մեր զօրքերով Ֆրանսիայի հողը, վրէժխնդիր կը լինենք նրանից, կը ջարդենք, կ'աւերենք և կ'առնենք այնքան պատերազմական տուգանք, որքան հարկաւոր է մեր կորուստները վերականգնելու համար"...

Ահա ամբարտաւան միլիտարիզմի տրամաբանութիւնը, նրա մտածելու և զգալու եղանակը։ Տարաբախտաբար, քաղաքակրթութիւնը ասես տակաւին մատնուած է այդ գարշելի ոճրագործների քմահաճոյքին։ Բանաւորական կուսակցութիւնները ըմբոստանում են, ճիշտ է. Բեբելները և Ժորէսները բողոքում են կատաղութեամբ, բայց արդեօք կը կարողանա՞ն նրանք սանձահարել ռազմատենչ դիպլոմատների ու զինուորականների ախորժակները և կանխել ամենասոսկալի ոճիրներից մինը, որ պատրաստւում է քաղաքակրթութեան, մարդկայնութեան դէմ...

* * *

Դելկասէն գնաց։ Եօթ տարի մինիստրութիւն—հապաւադէպ երևոյթ ֆրանսիական հանրապետութեան կեանքում։ Եօթ տարի նա վայելում էր իր հայրենակիցների յարգանքը և, իբրև ճարպիկ դիւանագէտ, ընդհանրապէս խաղաղարար, որոշ հմայք էր վաստակել նաև Ֆրանսիայից դուրս։ Բայց այժմ հեռացաւ, գրեթէ նեղուած նոյն հայրենակիցներից, բողոքների ու պարսաւանքների տարափի տակ։

Դուրս է գալիս, որ սխալուած են եղել նրա ընդունակութիւնների և խաղաղասէր զգացումների վերաբերմամբ։ Նա հանդէս է գալիս այժմ, որպէս մի չար ոգի, մի մեծամոլ ինտրիգան, որ նպատակ ունէր իսպառ մեկուսացնել Ֆրանսիայի աւանդական հակառակորդին, Գերմանիային, և պատրաստել ռըվանշի, վրէժխնդրութեան. մեծ հարուածը, որը, սակայն, ռըվանշի տեղ կարող էր մեծամեծ աղէտներ բերել նախ և առաջ իր հայրենիքին, Ֆրանսիային։

Մինիստր Դելկասէն քիչ դեր չխաղաց և թիւրքական Արևելքի գործերում։ Նա սուլթանական տիրապետութեան հակառակորդ էր և ատուած էր Եըլդըզ Քեօսկում։ 1901 թ. Ֆրանսիական նաւային ցոյցից ի վեր (որը, ինչպէս յայտնի է, վերջացաւ Ֆրանսիայի պահանջների յաղթանակով) սուլթանի աչքը վախեցած էր Դելկասէից։ Եւ այդ վախը առանձնապէս շեշտւում էր Կ. Պոլսում ամէն անգամ, երբ հայկական խնդիրը հրապարակ էր նետւում Ֆրանսիական մամուլի և մանաւանդ պարլամենտի մէջ։

Կային րոպէներ, երբ թիւրքահայ ժողովուրդը ոգեւորւում էր Դելկասէով և նրա վրայ յոյսեր էր դնում։ Եւ իրօք նա լաւ էր տրամադրուած մասնաւորապէս դէպի հայերը և ուզեց անել ու անել տալ ուրիշներին մի քանի համեստ քայլեր ժողովրդի ապահովութեան համար (հիւպատոսների աւելացումը թիւրքաց Հայաստանում, կորոկի ազդարարումները թիւրք կառավարութեան առաջ՝ նոր խմբական կոտորածներ սպառնալու դէպքում և այլն)։ Հանուսու-ձիւաղից յետոյ, Դելկասէն մի հրեշտակ էր հայութեան համար։

Սակայն շուտ պաղեց հայի ոգևորութիւնն էլ։ Վճռական րոպէներում երբ հայոց ճգնաժամի արմատական լուծման խնդիր էր դրւում հրապարակի վրայ, այդ հրեշտակը ևս դաւաճանեց մեզ—յիշենք նախորդ տարեայ Սասունի ապստամբութիւնն ու տագնապը, ֆրանսիայի վարանումներն ու յապաղումները — և ապացուցեց, որ գիտէ հլու սպասաւոր լինել ցարի կառավարութեան ու „պլիանսին"...

Ի՞նչ տիպարի մարդ կը լինի արդեօք Դելկասէի յաջորդը—ապագան ցոյց կը տայ։ Յամենայն դէպս այժմից արդէն մի հանգամանք պարզ ցոլում է հասարակական կարծիքը վարող մամուլի մէջ.—այն որ Դելկասէի անձնաւորութեան հետ մի ամբողջ դիւանագիտական սիստեմ է տապալւում, որ Ֆրանսիան այլևս տրամադիր չէ իր դիւանագիտութիւնը ստորադրել ցարիզմի քմահաճոյքներին։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի՞ՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՕՏԱՐՆԵՐԸ

(ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ)

Այս էլ մի դժբախտութիւն է, որ կովկասահայի անօրինակ ճգնաժամին զուգադիպում են միջազգային քաղաքականութեան ծանրակշիռ խնդիրներ, որոնք շեղթայում են հանրային ուշադրութիւնը իրենց հրատապ ու ահաւոր այժմէութեամբ։ Մի ուրիշ դժբախտ հանգամանք էլ կայ. մարդկանց նեարդերը կարծրացել են ամենօրեայ արհաւիրքներից, պատերազմի և ցարիզմի պատճառած աղէտներից, Ռուսաստանում սովորական դարձած հեկատոմբներից և դուք այլևս շատ չէք յուզում նոյնիսկ ամենազգայուն հրապարակախօսներին, երբ պատմում էք նրանց կովկասեան դժոխքի մանրամասները։

Այնուամենայնիւ, ռուսահայերի ծանր, բացառիկ փորձութիւնները գտնում են արձագանք եւրոպական և մասնաւորապէս ֆրանսիական և անգլիական մամուլի մէջ։ Ամենախիստ ոճով նշաւակում են աղէտի համար պատասխանատու բռնապետութիւնը... Մի չնչին սխալանք, ընթերցող... Մի հանգամանք, սակայն, որ հայ ժողովրդի արիւնահոս վէրքերը գէթ մասամբ կազդուրելու բնոյթը չունի. նա անկարող է թուում, տարաբախտաբար, նոյնիսկ կանխելու նորանոր ոճիրները, սահման դնելու մարդ-գազանի ախորժակներին։ Եթէ եւրոպացի հրապարակախօսների զգայնութիւնը կոշտացել է յաճախակի մասսային դժբախտութիւններից, ապա այդ դժբախտութիւնների գլխաւոր հեղինակ ցարիզմը ևս սովորել է անխռով դիտել ոչ միայն իր նիւթած գարշանքները, այլ և հասարակական կարծիքի այս կամ այն տրամադրութիւնը, լուսաւոր մարդկութեան ցասումն ու խարազանումները։

Ոճրագործի նեարդերը չէ՞ որ աւելի կարծր են լինում. պարտաւորութեան զգացումը իսպառ չքանում է նրա մէջ և... մարդկային դժնդակութեան ու յարաճուն գազանութիւնների դիմաց՝ թշւառ, լքած, արեան մէջ լողացող զոհերին մէկ ելք է միայն մնում, — ապաւինել ոչ թէ հանրային կարծիքին, ոչ թէ քաղաքակիրթ մարդկութեան պլատօնական համակրութիւններին ու ցոյցերին,—ո՛չ, չարաբախտ հայրենակիցներ, ո՛չ, հալածական հայ ժողովուրդ, քեզ մնում է ընտրել ինքնապաշտպանութեան, զենուած դիմադրութեան ճանապարհը, որ թելադրում է քեզ կեանքի անսիրտ տրամաբանութիւնը, գոյութեան կուի անողոք փաստը, վերջապէս, մարդկային տարրական արժանապատուութեան զգացումը։ Եւ եթէ այս անգամ էլ դու կ'արհամարես քո ըմբոստ զաւակների պաղատագին յորդորները, եթէ այս դէպքում էլ անզէն ու անկորով ողջակէզի պէս կը գալարուես խուժանի վայրագ ձեռքերում, այն ժամանակ կը մնայ խաչ դնել միանգամ ընդմիշտ մեր կուլտուրական առաջադիմութեան ու քաղաքացիական արիութեան վրայ, այն ժամանակ էլ զուր կը դիմես աղաչանքներով Եւրոպայի հանրային կարծիքին, քաղաքակրթած ազգերի օգնութեան,—քեզնից բոլորն էլ արհամարհանքով երես կը դարձնեն, դու համաշխարհային նշաւակութեան առարկայ կը դառնաս, ամբողջ մարդկութիւնը կը դրօշմէ քո ճակատին ամօթի և ստրկութեան անջնջելի կնիքը...

*

Եւրոպական մամուլը յոգնել է հայի զազրելի համակերպութեան պատմութիւններից — այդ մենք տեսնում ենք բոլոր երկրների լրագրութեան մէջ — բայց, միւս կողմից, որպիսի գոհունակութեամբ է նա արձանագրում հայկական կեանքի դրական կողմերը, առնական ըմբոստութեան նշոյլները, յեղափոխական այլևայլ ձևի արտայայտութիւնները։

Հայ ֆէդային, հայ մարտական կազմակերպութիւնը իր հերոսական անվեհերութեամբ, կարող է աշխարհի հիացմունքը շարժել, բայց ի՞նչ է նա հայութեան ճնշող մեծամասնութեան առջև, որ ընդհանուր առմամբ շարունակում է մնալ մի ներսը զանգուած, դիւրաւ համակերպող, առանց գործօն նախաձեռնութեան... Ի՞նչ դիմադրական ուժ ցոյց տուեց նա Բագուի վիթխարի աղէտի միջոցին, երբ „Դաշնակցութեան" մի բուռն կտրիճները ջարդում ու քշում էին վայրենի խուժանը, ազատելով քաղաքը անհամեմատ աւելի մեծ աղէտներից ու անպատուութիւնից։ Ի՞նչ ասէ օտարը այդ անշարժ ու անձայն ընդհանրութեան մասին։ Ի՞նչ ասել, երբ տասնեակ հայկական գիւղեր են կործանւում այսօր և բնակիչները անպաշտպան ջարդի կամ փախուստի մատնուում, մինչդեռ բոլորից ստուգուած իրողութիւն է, որ զենուած կտրիճների մի փոքրիկ խումբ բաւական է ամէն մի գիւղում՝ արիւնռուշտ վոհմակներին յետ մղելու համար։ Ի՞նչ ասեն օտարները, ի՞նչ ասենք մենք նրանց...

Մեր առջև դրուած է անգլիական *The Contemporary Riview* հեղինակաւոր ու տարածուած հանդէսի մի համարը։ Էմիլ Դիլն, Ռուսաստանում ապրող ու կեանքին լաւատեղեակ՝ հոչակաւոր հրապարակագիրը նկարագրում է այդտեղ, մի հրահանգիչ յօդուածի մէջ, ռուս կայսրութեան ճգնաժամն ու աստիճանաբար քայքայումը և մեծ տեղ է նուիրում կովկասեան տագնապին ու Հ. Յ. Դաշնակցութեանը։

„Ո՞վ սրբազան Ռուսաստան" (Սվետտայա Ռուս) — հէգնութեամբ ու դառնութեամբ բացականչում է նա, յիշելով Էջմիածնի դռների խորտակումը, վանքերի ու եկեղեցիների կողոպուտը։

„Ազգը ազգի դէմ, եկեղեցին եկեղեցու դէմ, դասակարգը դասակարգի դէմ, շահը շահի դէմ՝ լարում է յարաժամ ռուս կառավարութիւնը, և երբ բանը հասնում է ընդհարումների ու արիւնհեղութեան,—ոստիկանութիւնը կանգնում ու դիտում է *tertius gaudens*-ի (երրորդ խնդացողի) դերում։

„Կովկասը այն երկիրն էր, ուր քաղաքական այդ հին միջոցը (ազգերի փոխադարձ դրգռումը) առաջ տարուեց մեծ չափերով։ Այդ ընդարձակ երկիրը իր երկու ղեկավար ժողովուրդներով, հայերով ու վրացիներով ապստամբութեան մէջ էր"...

Այստեղ հեղինակաւոր ու ճարտար լեզուով Դիլն պատմում է գալիցիանեան ոչէիմի բոլոր սքանչելիքները, որոնք իվերջոյ յանգեցին եկեղեցական գոյքերի յափշտակութեան և հայ ժողովրդի յեղափոխական ուժերի բռնկման։

„Այն ժամանակ և միայն այն ժամանակ, դրօշակեանների դալստեան ընկերութիւնը, որ կազմուած էր թիւրքահայերին աջակցելու համար, անհրաժեշտ սեպեց դարձնել իր ուշադրութիւնը և իր ուսուցիչ հայրենակիցների վրայ։ Նա իր դիրքն առաւ ուսուցիչներին, որոնց կառավարութիւնը դուրս էր արել հայ դպրոցներից, և զրկեց նրանց՝ ժողովուրդը լուսաւորելու։ Կոմիտէն ստեղծեց դասական ասեանների մի ամբողջ սիստեմ՝ գիւղացիների մէջ արդարադատութիւնը արագ ու անաչառ կերպով առաջ տանելու և լուծելու համար այն բոլոր վէճերը, որոնք ծագում են թէ գիւղացիների և թէ ազգաբնակութեան տարբեր հատուածների մէջ։

Եւրոպական մամուլը յոգնել է հայի զազրելի համակերպութեան պատմութիւններից — այդ մենք տեսնում ենք բոլոր երկրների լրագրութեան մէջ — բայց, միւս կողմից, որպիսի գոհունակութեամբ է նա արձանագրում հայկական կեանքի դրական կողմերը, առնական ըմբոստութեան նշոյլները, յեղափոխական այլևայլ ձևի արտայայտութիւնները։

Հայ ֆէդային, հայ մարտական կազմակերպութիւնը իր հերոսական անվեհերութեամբ, կարող է աշխարհի հիացմունքը շարժել, բայց ի՞նչ է նա հայութեան ճնշող մեծամասնութեան առջև, որ ընդհանուր առմամբ շարունակում է մնալ մի ներսը զանգուած, դիւրաւ համակերպող, առանց գործօն նախաձեռնութեան... Ի՞նչ դիմադրական ուժ ցոյց տուեց նա Բագուի վիթխարի աղէտի միջոցին, երբ „Դաշնակցութեան" մի բուռն կտրիճները ջարդում ու քշում էին վայրենի խուժանը, ազատելով քաղաքը անհամեմատ աւելի մեծ աղէտներից ու անպատուութիւնից։ Ի՞նչ ասէ օտարը այդ անշարժ ու անձայն ընդհանրութեան մասին։ Ի՞նչ ասել, երբ տասնեակ հայկական գիւղեր են կործանւում այսօր և բնակիչները անպաշտպան ջարդի կամ փախուստի մատնուում, մինչդեռ բոլորից ստուգուած իրողութիւն է, որ զենուած կտրիճների մի փոքրիկ խումբ բաւական է ամէն մի գիւղում՝ արիւնռուշտ վոհմակներին յետ մղելու համար։ Ի՞նչ ասեն օտարները, ի՞նչ ասենք մենք նրանց...

Մեր առջև դրուած է անգլիական *The Contemporary Riview* հեղինակաւոր ու տարածուած հանդէսի մի համարը։ Էմիլ Դիլն, Ռուսաստանում ապրող ու կեանքին լաւատեղեակ՝ հոչակաւոր հրապարակագիրը նկարագրում է այդտեղ, մի հրահանգիչ յօդուածի մէջ, ռուս կայսրութեան ճգնաժամն ու աստիճանաբար քայքայումը և մեծ տեղ է նուիրում կովկասեան տագնապին ու Հ. Յ. Դաշնակցութեանը։

„Ո՞վ սրբազան Ռուսաստան" (Սվետտայա Ռուս) — հէգնութեամբ ու դառնութեամբ բացականչում է նա, յիշելով Էջմիածնի դռների խորտակումը, վանքերի ու եկեղեցիների կողոպուտը։

„Ազգը ազգի դէմ, եկեղեցին եկեղեցու դէմ, դասակարգը դասակարգի դէմ, շահը շահի դէմ՝ լարում է յարաժամ ռուս կառավարութիւնը, և երբ բանը հասնում է ընդհարումների ու արիւնհեղութեան,—ոստիկանութիւնը կանգնում ու դիտում է *tertius gaudens*-ի (երրորդ խնդացողի) դերում։

„Կովկասը այն երկիրն էր, ուր քաղաքական այդ հին միջոցը (ազգերի փոխադարձ դրգռումը) առաջ տարուեց մեծ չափերով։ Այդ ընդարձակ երկիրը իր երկու ղեկավար ժողովուրդներով, հայերով ու վրացիներով ապստամբութեան մէջ էր"...

Այստեղ հեղինակաւոր ու ճարտար լեզուով Դիլն պատմում է գալիցիանեան ոչէիմի բոլոր սքանչելիքները, որոնք իվերջոյ յանգեցին եկեղեցական գոյքերի յափշտակութեան և հայ ժողովրդի յեղափոխական ուժերի բռնկման։

„Այն ժամանակ և միայն այն ժամանակ, դրօշակեանների դալստեան ընկերութիւնը, որ կազմուած էր թիւրքահայերին աջակցելու համար, անհրաժեշտ սեպեց դարձնել իր ուշադրութիւնը և իր ուսուցիչ հայրենակիցների վրայ։ Նա իր դիրքն առաւ ուսուցիչներին, որոնց կառավարութիւնը դուրս էր արել հայ դպրոցներից, և զրկեց նրանց՝ ժողովուրդը լուսաւորելու։ Կոմիտէն ստեղծեց դասական ասեանների մի ամբողջ սիստեմ՝ գիւղացիների մէջ արդարադատութիւնը արագ ու անաչառ կերպով առաջ տանելու և լուծելու համար այն բոլոր վէճերը, որոնք ծագում են թէ գիւղացիների և թէ ազգաբնակութեան տարբեր հատուածների մէջ։

„Այդ ատեանները, որոնց դատավարութիւնը միշտ աչքի է ընկնում իր անսովոր արագութեամբ և որոնց վճիռները ուշադարակ ներշնչուած են լինում արդարութեան նուրբ զգացումով, դարձել են վերին աստիճանի ժողովրդական մի ազգի մէջ, որ մինչև օրս սովորած էր սպասել ամիսներ ու տարիներ՝ ստանալու համար այնպիսի դատավճիռներ, որոնք երբեմն դէմ էին ակներև ճշմարտութեան և յաճախ անհամաձայն օրէնքի բառին։

„Այդպէս, բոլորովին վերջերս ռուսական արդարադատութեան երևանեան բաժնի ներկայացրած պաշտօնական հաշուեքննութեան մէջ զարմանք էր յայտնուած, որ գիւղացիների աշխարհում ամէն տեսակի վէճերը ահագին չափով նուազել են։

„Բանտեր չունենալով իր տրամադրութեան տակ, կոմիտէն պատժում է սեփականութեան դէմ կատարուած յանցանքները զանազան եղանակներով, որոնք բաւական օրիգինալ են և զաւեշտական։ Օրինակ նա ստիպում է որոշ կարգի յանցաւորին՝ կանգնել ամբողջ օրը հրապարակի վրայ և բարձրաձայն յայտարարել ամէնքին, որ ինքը անագնիւ է, գող է։ Այնուհետև կոմիտէն թոյլ է տալիս նրան ոտն վերադառնալ և աշխատել վերականգնելու իր կորցրած վարկը։

„Դժգոհ հայերի օրինակին հետևեցին վրացիները, որոնք հիմնեցին „Սակարթվելո“ ընկերութիւնը, ճիշտ „Դրօշակ“-ի գծերով։ Այդ ընկերութիւնը տարածուեց զարմանալի արագութեամբ, իր կենտրոն Փոթիից՝ դէպի Բաթում ու ամբողջ Վրաստան։ Երկու շարժումների ղեկավարներն էլ, անտարակոյս, ուժեղ կամքի տէր մարդիկ են և օժտուած կազմակերպելու հաղթագիտ կարողութեամբ։ Նրանք յաճախ կաշառում են ոստիկանութիւնը, որը մատուցանում է նրանց դնահատելի ծառայութիւններ։

„Այդ գաղտնի կոմիտէները իրօք կազմում են իրենց ազգային կառավարութիւնները, որոնք վարում են հայերի ու վրացիների բազմաթիւ գործերը“...

Մի կողմ ենք թողնում Դիլօնի տուած ուրիշ մանրամասնութիւնները Հ. Յ. Դաշնակցութեան ուժի ու հմայքի և հայ ժողովրդի վրայ ունեցած նրա ազդեցութեան մասին։ Ցիշատակուած կէտերի մէջ էլ ընթերցողն ինքը կը շտկէ աչքի ընկնող անճշդութիւնները։ Հայ յեղափոխական մարմնի գործունէութեան ինքնատիպ եղանակների առթիւ՝ ես հիացման բացագանչութիւններ շատ եմ լսել օտարներից և նոյնիսկ հուչակաւոր յեղափոխական մտածողներից ու գործիչներից։ Թող դա լինի խրախոյս՝ մասնաւորապէս մեր գաւառական կոմիտէների համար, որոնք կոչուած են, ահագին պատասխանատուութեամբ, վարելու միլիոնաւոր գիւղական մասսայի ճակատագիրը...

*

Այնուհետև Դիլօն պատճառաբանում է ազգայնական ատելութեան անսովոր բռնկումները Անդրկովկասում, նշաւակում է բարձր կառավարութեան նողկալի դերը, նրա բացարձակ մեղսակցութիւնը։ Հայ և վրացի գաղտնի կազմակերպութիւնների համերաշխութիւնը աւելի ոյժ տուեց կառավարութեան ծրագիրներին։ Այդ վերջինը, թղթակցի ասելով, աշխատեց նախ ընդհարումներ առաջացնել հայերի ու վրացիների միջև, „սակայն հայերը միշտ խաղաղութեան կողմն էին, վրացիներն էլ, բաւականաչափ քաղաքակիրթ լինելով, չէին կարող գործիք դառնալ ոևէ ոճրի։ Այն ժամանակ թիւրքերին գրգռեցին հայերի դէմ“։

Եւ անգլիացի հրապարակագիրը պատմում է երկար—փաստերով, քաղուածներով—Բագուի զարհուրելի ողբերգութիւնը, որի դժոխային մանրամասները նա համեմատում է Ֆրանսիական Յեղափոխութեան սարսափների հետ։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

***

Temps-ի թղթակիցը հեռագրով հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում յուլիսի 21-ին սուլթանի կեանքի դէմ կատարուած փորձի մասին *).

Պոլիս, 23 յուլիսի

Պայթիւնն առաջացրեց մի դժոխային մեքենայ, որ դրուած է եղել օտարականներին բերող կառքերի մէջ։ Մեքենան պարունակած պէտք է լինի 15 կիլոգրամ դինամիտ, գնդակներ և երկաթի կտորներ։ Որոտը զարհուրելի էր և լսուեց մօտ տաս կիլոմետրի վրայ։ Ռումբը մի մետր տրամագծով և յիսուն սանտիմետր խորութեամբ փոս առաջացրեց և սպանեց 23 մարդ, վիրաւորեց 67, ջարդուփշուր արեց 30 կառք՝ սպանելով 50 ձի. դեսպանների և թիկնապահների պավիլիոնների բոլոր ապակիները փշրուեցին օտարականներին յատկացուած հիւրանոցի մօտ։ Մզկիթի ժամացոյցի աշտարակը ճեղքուեց և ժամացոյցը փշրուեց։ Սպանուածների թիւմն է մի ներքինի, որ գտնուում էր մզկիթի դրսի բակում. օտարականներից վիրաւորուած է մի գերմանուհի և մի իտալուհի։

Փորձի հեղինակը տակաւին անյայտ է։ Դա հաւանակա՝ նաբար մի բուլգար է, որովհետև վերջին ամսում կառավարութիւնն իմացել էր, որ բուլգարական կոմիտէները պատրաստուում են սուլթանի դէմ սպանութեան փորձ կատարել։

Սուլթանը նշանակել է մի մեծ քննիչ յանձնաժողով, որի մէջ մտած են զինուորական մինիստրը, սուլթանի առաջին քարտուղարը և իտալացի գեներալ Բօմէի փաշան։ Ընդհանուր կարծիք կայ, թէ բուլգարական կոմիտէները կամեցել են շփոթութիւն ծգել զօրքերի մէջ, յուսալով, որ սրանք այնուհետև կը սկսեն քրիստոնեաների կոտորած։

Բուքարեստ, 23 յուլիսի

Սուլթանի դէմ եղած փորձը ահագին տպաւորութիւն թողեց բուլգարական մայրաքաղաքում։ Ժողովրդի մեծամասնութիւնը, որ աւանդական քէն ունի պահած այն բոլորի համար, ինչ որ թիւրքական է և մասնաւորապէս ատում է սուլթանին, որպէս բուլգարների գլխաւոր թշնամու, ընդհանրապէս ցաւում է, որ փորձն անյաջող է անցել։

Պաշտօնական շրջանները ընդհակառակը գոհ են, որ սուլթանը փրկուել է, որովհետև, կարծում են նրանք, եթէ փորձը յաջողութիւն ունենար, դժուար է ասել, թէ ինչ հետևանքներ կ'ունենար Բալկանեան թերակղզու առանց այն էլ վտանգաւոր կացութեան համար։ Այդ շրջանները երկիւղ են կրում, թէ մի գուցէ Թիւրքիան առիթ բռնի այդ փորձը և սաստկացնի հալածանքները բուլգարների դէմ Մակեդոնիայում և Անդրանապօլսի վիլայէթում։ Վերջին դէպքում թիւրքո-բիւլգար յարաբերութիւնները աւելի կարող են սրել։ Հետաքրքիր է իմանալ մակեդոնացիների կարծիքը։ Ի պատասխան այն հարցերին, որ ես առաջարկեցի ներքին կազմակերպութեան կարևոր անդամներից մէկին, վերջինս ասաց. «Եթէ «Ներքին կազմակերպութիւնը» ցաւում է այդ փորձի համար, այդ միայն ի նկատի ունենալով Թիւրքիայի դժբախտ քրիստոնեայ ազգաբնակութեան վիճակը, որը կարող է սուլթանի վրէժխնդրութեանը ենթարկուել. Անդրիւ-հատիղը ինչպէս և իր միւսիւլման հպատակները այս առիթը բաց չեն թողնի պատասխանատու բռնելու ամբողջ Մակեդոնիան

---

*) Այս եպիսի դէպքի մանրամասնութիւնները մենք կը հրատարակենք շուտով յատուկ „Յաւելուածով“։

կամ նրա մի մասը։ «Ներքին կազմակերպութիւնը» յայտարարում է վճռականապէս, որ անօգուտ է փնտռել այդ փորձի հեղինակներին իր անդամների մէջ ինչպէս և Մակեդոնիայի ուրէ այլ յեղափոխական խմբի մէջ։ Պոլիսը մեր գործունէութեան ասպարէզից դուրս է»։

* * *

Vossische Zeitung'ի 324-րդ համարում զետեղուած է թիֆլիսից մի թղթակցութիւն, որից բերում ենք ամենակարևոր տեղերը.

Բաքւի ոստիկաններից յետոյ, որին վերջ դրեց „Հ. Յ. Դաշնակցութեան" զինուած միջամտութիւնը, տեղի ունեցան հոգևոր և աշխարհական խաղաղասիրական ցոյցեր։ Հայերը հանգստացած դարձան իրենց սովորական պարապմունքներին։ Բայց դէպքերը նոր և աւելի ուժեղ թափով կրկնուեցին Երևանի նահանգում (Նախիջևան և Դիլիջան)։ Մի քանի տասնեակ գիւղեր քանդուեցին, մի քանի հարիւր հայեր կոտորեցին։ Սորա հետևանքը այն եղաւ, որ „Հ. Յ. Դաշնակցութիւնը" ժողովեց իր բանակը, զինեց, խմբերի բաժանեց և ուղարկեց տեղնուվտանգած վայրերը։ Այն ժամանակ իրերը ընդունեցին այլ կերպարանք. այդ դերը Երևանին էր վերաբերուած։ Մայիսի 23-ի թիւրքերի տմարդի յարձակմանը 20-ի չափ վերաւոր ու սպանուած տալուց յետոյ, հայերը ընդունեցին յարձակողական դիրք և երկրորդ օրը դիմաւորեցին թիւրքերի ամբոխին գնդակների տարափով։ Երկու օրւայ ընթացքում հայերի կողմից արձակուած է 10,000-ից աւելի գնդակ, ռումբերով կործանուած են երկու տուն, որոնց մէջ սպանուած են 47 թիւրք։ Միայն սպանուած թիւրքերի թիւը 200-ից անց է. հայերինը՝ 5 սպանուած և վերաւոր։ Հայերը դարձել են քաղաքի տէրը. թիւրքերը՝ փակուած իրենց տներում՝ շուտ նեղ դրութեան մէջ են։ Նախիջևանում հայերը քանդել են մօտ 20 թիւրքական գիւղեր, որոնք ամենից շատ մասնակցած են եղել հայկական գիւղերը քանդելուն ու կողոպտելուն։ Թիւրքերը ահաբեկուած դիմում են կառավարութեան, խնդրելով թոյլ տալ իրենց դաղթել թիւրքիա։ Թղթակցութեան վերջում բերուած է Հ. Յ. Դ. Կովկ. Պատ. Կենտ. Կոմիտէի հրամանագիրը, ուղղած Կովկասեան վարչութեան։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Հայ ժողովրդին

Հայութիւնը ապրում է պատմական ծանր օրերում։

Մեր դրացին՝ թիւրքը՝ անընդունակ հասկանալու և սիրելու մեր իդէալները, որոշել է սրով և հրով ոչնչացնել այն ամէնը, ինչ որ հայը ձեռք է բերել անդուլ աշխատանքով, երկար դարերի ընթացքում։ Ռուս կառավարութիւնը նպաստում է նրան ամէն կերպ։ Համիդիական բարբարոսութիւնը—թերևս վերջին անգամ—գալիս է կատաղի ալիքներով մեր կուրծքը ջախջախելու։

Հայի հայրենիքը վտանգի մէջ է։ Վտանգի մէջ է հայ քաղաքակրթութիւնը, հայ ժողովրդի կեանքը և պատիւը. ջախջախելու վրայ են մեր բոլոր իդէալները։

Արդ, ազատութեան բիւրաւոր մարտիրոսների վաղընջական ժողովուրդը, հայ ժողովուրդը, քաղաքակրթութեան և լոյսի այդ արի ու յամառ առաջապահը, պիտի թողնէ, որ յօշոտեն իր սիրտը, կտրտեն իր ջղերը, մեռցնեն իրեն ամբողջապէս և մի կողմը նետեն, որպէս դիակ։ Պետոների, Բաբկէն-Սիւնիների, Սերոբների և Քրիստափորների հայ ժողովուրդը պիտի կամենա՞յ նորից արաբական և սելջուկեան արշաւանքների սեւ օրերը կրկնել։

Անշուշտ կը սխալուի համայն հայութիւնը—այր և կին, աշխատաւոր և հարուստ, չինական ու գործաւոր—կը ժողովի իր ոյժերը և կ'ելնի պաշտպանելու իր գոյութիւնը, պատիւը, քաղաքակրթութիւնը և այն ամէն սուրբ աւանդները, որոնց համար ապրել են ու մեռել մեր հայրերը և եղբայրները։ Անշուշտ կ'ըմբռնի հայ ժողովուրդը արդի պատմական վայրկեանի այնքան վեհ ու այնքան ծանր լինելը, որ կեանքի ու մահուան այս կռուի մէջ նա ցոյց կը տայ մի անօրինակ անձնազոհութիւն, և այնպիսի մի զօրութիւն, որ յարգանք ու միաժամանակ սարսափ կ'ազդի այն ամէն տարրերին, որոնք հայ ժողովրդի վրայ ձեռք բարձրացնել համարձակեցան։

Մի յուսաք օգնութիւն կառավարութեան կողմից, որովհետև կառավարութիւնն է կայացրել ձեզ կոտորելու որոշումը։ Մի յուսաք օգնութիւն ոստիկանութեան և զօրքի կողմից, որովհետև ոստիկանութիւնն է ղեկավարում կոտորածը, և զօրքը ձեզ ճնշելու համար միայն գոյութիւն ունի։

Յուսացէ՛ք միայն ձեզ վրայ։

Ժողովեցէ՛ք, խորհեցէ՛ք և, որ գլխաւորն է, կազմակերպուեցէք, որ լաւ կարողանաք պաշտպանել ձեզ և ձեր մեծաւոր ու հեռաւոր արիւնակիցների կեանքն ու պատիւը։ Կազմակերպուեցէք, որովհետև արդի անկազմ ու եռամոլ դրութեան մէջ թիւրքի և ռուս կառավարութեան արի ու հրի խայտառակ զոհերը պիտի դառնաք։ Գիտցած եղէք, որ կազմակերպութեան մէջ է ձեր միակ ուժը և, ուրեմն, ձեր փրկութիւնը։ Մէկը ամէնքի համար, ամէնքը մէկի համար։ Այսպէս միայն պիտի կարողանաք դսպել այնքան լիտիացած ու յիմարացած դրայուն և ձեր կեանքն ու պատիւը փրկել։

Այն հայը, որ միայն իր անձի պաշտպանութեան մասին կը մտածէ և կը մոռանայ իր հարևանին, ստոր դաւաճան պիտի կոչւի այսուհետև։ Այն համայնքը կամ գիւղը, որ կը բաւականանայ իր սահմանները պաշտպանելով և օգնութեան չի հասնիլ վտանգւած հարևան համայնքին, արժանի պիտի համարւի ամբողջ հայ ազգի և մարդկութեան նախատինքին։

Յամառ, յարատև կազմակերպւած ու բոլորանւէր պիտի լինի քո կռիւը, հայ ժողովուրդ։ Եւ այդպէս կռուելով միայն պիտի կարողանաս տանել յաղթութիւնը։

Հ. Յ. Դ.

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ

ՆԻՒԹԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ *ստացած է՝*

Ռուսաստան.—ԴՐԱՄ կոմիտէէն՝ 40,000 ֆրանք։

Շուէյցարիա.—Անցորդից՝ 100 ֆրանք։

Գերմանիա.—Հայդելբերգի ուսանողութեան կողմից յօգուտ Հայ Ուսանողական Ռազմական Փոնտի Կովկասում՝ 105 ֆր. 90 ս.։

Գումար 40,805 ֆրանք 90 սանտիմ։

ԺԼԱՏԻ *կեդր. կոմիտէն՝*

1905 թ. յունուարից մինչեւ մայիսի 31.—

Հետեւեալ խմբերից՝ Անդրանիկ 24 ռուբլի, Թորգոմ ա. 16, Քեռի 30, Արարատ 24. 10, եւս 8. 35, Արշալոյս 112, Ս. Սահ.-ից 5, Կարօ 50, Քեռի 16, Ցոյս 11. 62, եւս 40, Արարատ 16. 30, եւս 18, Քեռի 11. 58, աւետիսից 200, Արարատ 8. 50, եւս 8, եւս 5, Թորգոմ բ. 4. 80, Թորգոմ ա. 13. 50, Արամայիս 7. 50, աշակերտ. Վարդան երեկոյթ. 15, Քեռի 12. 50, Ջալլաղ 9, Ցոյս բ. 3. 70, եւս 6. 25, Կարօ 12, եւս 28. 67, Թորգոմ 27, Արարատ 12, եւս 3. 85, Վազգէն 2. 85, Ցոյս 3. 10, Արամայիս 6. 50, եւս 6. 25, Կարօ 10, Քեռի 14, Սերովբ 32. 50, Ջալլաղ 9, Պետո 21. 70, Ցոյս ա. 2. 5, Ցոյս բ. 2. 85, Մայրերի 6, Կարոյի 6. 50, Թորգոմ բ. զին. 10. 30, Ա. Ջ. Շ.-ի հանգ. 10, աշակերտ ու աշակերտուհիների երեկոյթ. 22. 45, Ծլատում տեղի ունեցած ներկայաց. 50, Թորգոմ բ. 10, Արծւի Սեւազգեստից 60, Բերդի աւետիսից 231, Խարիսխ 50, Սերոբ-աղբիւր 35. 50, Բելզբացու աւետիսից 36, Անահիտ 12, Հաւատ 10. 90, Ցոյս 8, Սէր 14, Անծնապաշտպանութեան խմբ. 5. 50, Սերոբ-աղբիւր 25. 50, Գործակատար 18, եւս 7. 5, Կրէտացի 20, Ցոյս 23. 20, Սէր 30, Անծնապաշտպանութեան խմբ. 20, Վրէժ 11. 10, Գարուն 12, եւս 18. 50, Լոյս օրդ. 7. 80, եւս 13. 50, Արուսեակ 15, Խարիսխ 30, Դժոխք 15, Հաւատ 10, Բերդ կ. անդամ. 10. 50, համերգից 36. 50, Առատ կ-ի հզօրիկ 8. 50, Փարուան 12, Կրակոտ 7. 50, Կաւիճ 7, Թուանք 6. 25, տօնածառից 28. 91, աւետիսից 36. 10, Հայկազն 3. 50, մնացորդ առ 1-ն 1-ի 42. 33, հզօրիկ 6, Փարուան 15. 50, Կրակոտ 11. 50, Կաւիճ 6, Թուանք 6. 25, Համր 7. 50, Նորածին ենթակում. 150, Բուժարանի կ-ի խմբերից 99. 20, Միրաւից 100, Հին ապառիկ 28. 55, Ցոյս հին հաշւից 11, Թղթ-

թախաղից 20. 44, Սեւ-այրի 20. 50, Սմբուլ 21, Արծուենիկ 16. 50-Լեռնցի 17. 50, Միրզ 8. 75, Սմեզսիոնի հին ապառիկ 16, Ջաւաղ 6, Արծուենիկ 17, Լոռեցու ապառիկ 4. 50, Սեւ-այր 18. 50, Սմբուլ 23, Կտրիճ 11, Մուրճ 8. 55, Լեռնեցի 16, Սեւ-այր 17, Արծուենիկ 17. 75, Ցոյս 17. 75, Սմբուլ 23, Կտրիճ 10. 10, Մուրճ 9. 35, Լեռնեցի 16, Ազիզ 5. 50, Նոր-աւան կ-ի Ց. Աղ. 30, Ա. Մար. 100, Անդրանիկ 71. 6, Աւազ 71. 50, Շապշից 100, Սարգ. 300, Կեր. 50, Ծղ. Ցովս. 50, Ցոյս 14, Ի. Ս.-եան 250, Ա. Նազար. 200, Ռուշտունեաց Մարտ 10, Բ. Կուս. 200, Աւազ 66, Գ. Մուր. 250, Կանուղից 50, Ց. Թորոս 500, Պ. Դորոս. 500, եղ. Սէֆէր. 500, եղ. Ակլլավդ. 250, Լուսաստղ ենթ. կ. Պանդուխտ 14. 20, եւս 9. 90, Դիտող կանանց խ. 18. 75, Կայծակ 71. 80, Քարափ ենթ. կ.-ի Փնջիկ 8, վիճակախաղից 40, Թղթից 1, ճրագից 1904 թ. եւ 1905 թ. 45. 60, ճարտարից 10. 55, Գաղթական 15. 25, Փնջիկ 7. 75, եւս 44. 66, Գաղթական 13. 50, ճարտար 16, ճրագ 32. 50, Արծիւ կ-ի Սեւազգեստի միջոցով 44, Արծիւ 8. 50, աւետիսից 210, Ներկայացումից 90, Կառնարող 16. 50, Կ. Զ. 100, Ցոյս 59, Մժեղ ենթ. կ. տեղական խմբ. 14, եւս 25, զինու ապառիկ 40, խմբից 17. 35, Մժեղ կնիքով թերթի № 155 հանգ. 25. 75, Կրէտացի ենթ. կ.-ի աւետիսից 43, ամսավճար 50, խմբի ամս. 28. 10, Պ. Խաչատրից 25, ամսավճ. 25, ամսավճ. 27, Գաղութ-կարթ ենթ. կ-ի Որսորդ խ. 10, Շէկ-աւան ենթ. կ.-ի Թուրգիկ 11, բերդեցիների գնած զէնքի օգտ. 10. 45, 525 Քարունկի ծայր-ի վաճառ. 42, 1 հատ եօթնեակ 1 ռուբլի: Գումար 7541 ռուբլի 79 կոպէկ:

ՆԱԼԲԱՆԴ կոմիտէն՝

1905 թ. յունուարի 1-ից մինչեւ մայիսի 31.—

Աւետեսից եօթն խմբով հաւաք. 312. 90 ռուբլի, Մ. Թ.-ից աւետիսի հաշւին 20, Ց. Մ. 5, Գ. Սլ-ից աւետիսի հաշւին 5, Ար. Ա.-ից 3, Զար-խափան խմբի միջոցով նէր Գ. Զ.-ից 1, Աքլարից 1, Լ. Հ. Բ-եան 5, բժ. Ա. Ք. աւետիսի հաշւին 25, Ն. Դրբ-ից 10, Աստղից 25, բժ. Բ. Տ-ից աւետիսի հաշւին 10, Ապոլոն Վիկտորեանից նէր Արօր խմբի միջոց. 1, Բաքկէն խմբի միջոցով նէր զանազան անձերից 1. 37, Ար. Ա. 3, Լ. Մեծեանից 5, Մ. Տ. 5, Գ. Մ. 5, Կ. Թ. 2, Թ. Զ. 2, Ն. Ց. 3, Մ. Զ. 5, Վ. Տ. 2. 15, Վ. Տ. 1, Գ. Զ. Զար-խափանի միջոց. 1, Ար. Ա. 3, ծախւած շորերի արժէք 18. 50, Մ. Գ. Խ. 4, Ասլան-բալասի ներկայաց. 225. 49, Ապոլոն Վիկտորեան Զարխափանի միջոց. 1, Խմբակից 1, Ար. Ա. 3, Արծուիկ 6. 50, մի ոմն 5, Լ. Ղ. Մ. 25, Ապոլոն 1, Զորս համակրողներից նէր Դժոխք ենթակոմիտէի միջոց. 3, Մի համակրողից 1, Աղաւէի 5, Գ. Գ. 3, Գ. Գ. 2 ռուբլի: Հետեւեալ խմբերից՝ Վօրոնիժի Քար 6. 50 ռ., Լուսատու 12. 50, Հրաշք 12. 50, Զար-խափան 7, Սրամեան 4. 30 Շղթայ 5. 60, Աղբիւր 10. 50, Աղբիւր 1. 15, Արծուիկ 6. 50, Թնդանօթ 13, Արօր 6, Բարիսովիչ 3. 76, Օձոտ 2. 50, Անշինչ-խէթ 23. 50, Թումանեան 23, Բաքզէն 4. 65, Նոյն խմբի ծախած բաց նամակներից 10, Կամաարական 3, Շահամեանի միջոցով նէր Նիկոլայից 25, Սերմացան Նոր խմբ. 30, Վօրոնիժի Քար 23, Աղբիւր 9. 35, Հրաշք 12, Նետ 6. 90, Արօր 6. 50, Լուսատու 9. 50, Բաքզէն 6. 45, Մեղու 14. 30, Մովսէս 6, Արծուիկ 7, Գալիբուն 2. 10, Օձոտ 2. 50, Շղթայ 5. 60, Մեղու 12, Սրամեան 4. 80, Անշինչ-խէթ 10, Հրաշքի նէր օր. Զ. 12. 50, Ցոյս Նոր խմբ. 2, Զար-խափան 7, Բաքզէն 5. 20, Լուսատու 13, Աղբիւր 9. 35, Սրամեան 4. 30, Արօր 5. 50, Զար-խափան 7, Արծուիկ 7, Կամաարական 3, Մովսէս 6. 50, Շղթայ 6. 30, Շահումեանի մասցորդ առ 1-ն յունուարի 42. 65, եւս 29, Մելքիսեթէք 14, Ափրօ 9, Նիկոլ 12, երեկոյթից 5. 53, Հրանդ 14. 25, Աստուածատուր, 10. 25, Օձոտ 3, Անշինչ-խէթ 9. 50, եւս 5. 50, Մովսէս 5. 50 Շղթայ 1, Մեղու 6. 80, Հրաշք 12. 50, Գալի-բուն 1. 50, Լուսատու 13, Մովսէս 5. 50, Պանդուխտ 8. 20, Թռչէի 5, Շղթայ 4. 50, Աղբիւր 9. 40, Սրամեան 4. 60, եւս 4. 30, Արօր 5. 50, Զար-խափան 14, եւս 17. 50, եւս 7, Մովսէս 5, 50, Լուսատու 12, Վրէժ 4, Հրաշք 11, Նպատակ Նոր խմբից 6, Բաքզէն 5. 70, Անգր Նոր խմբ. 7, Քրիստափոր Նոր խմբ. 6, Զարեւանդ ա. 18, Նոյն խմբ. բ. 15. 30, Մեղու 38. 10 ռ. Գումար 3701 ռ. 10 կոպէկ:

ՍԵՒԱՀՈՂ կոմիտէն՝

1903 թ. յուլիսից մինչեւ 1904 թ. դեկտեմբեր.—

Մշուշ 90 ռուբլի, Կայծակ 90, Թռփալ, Մէլիք, Քուր-գետ, Վարդապետ 54-ական, Գուրգէն 36, Գառ, Անտուն, ճգնաւոր 18-ական, Պատիժ 9, Ղեւոնդ 9, Աշխարհեան 85, Քեսայ 85, Մորեխ, Ցիգան, Մալբաւան, Փայլակ 51-ական, Վահէ, Ատոմ, Արծաթ 34-ական, Ոչխար 25. 50, Սիպակ, Քաջայր, Ժիրայր, Կրակ, Անչեւր 17-ական, Արազ 9, Մեծ-արազ 9, Գոմէշ 5, Դաբաղ 2, Արտեմ 2, Բարեխիղճ 6, Լեւոն 18, Գիժ 6, Խաչիկ 3, Թար 3, № 35-ից 52, Վան 12, Կայծ 6, Մարգարէ 6, Ռաման 110, Կարմիրիկ 110, Խորագէտ 77, Փեղչեան, Սաիւ, Դրախտ, ճանճեան 55-ական, Սրամիտ 45, Ոտոգտիզ 33, Մեղր 26, Սոխակ 22, Վարժապետ 11, № 33՝ 40, № 34՝ 70, Շահից 20, Վարդան 14, Ջուր 14, Ասլան 15, Գեղամ 2. 50, Անանասից 8, Ենհաշտ 2, Խաղաղ 6, Կորած 15, Վարդ 15, Երկանեան 50, Որսկան 25, Այլեան 10, Բզնունի 5, Վահան 4. 80, Ցիրուցան 4. 75, Կաւալեր 3, Թաթուլ 2. 50, Աշոտ 2. 50, Սիրող 1. 25, Մելքոն 50 կոպ., հանգանակ. ծննդեան եւ պոստ կ. 103. 88, Ջերմուկ քաղ. ամս. եւ երեկոյթ. 1618. 86 ռ.: Գումար 3937 ռուբլի 94 կոպէկ:

ՆԱԽԱՀԱՆԳՍՑԻ կեդր. կոմիտէն՝

Տեղական կոմիտէն 1905 թ. մարտ.—

ՁՈՐՍՓՈՐԻ ենթակոմիտէն հետեւեալ խմբերից՝ Մայր 139. 50 ռուբլի, Գեբսեւան 80. 50, Արուսեակ 83. 90, ..խոյեան 176. 5, Փետոն 16. 40, Թորգոմ 44. 25, Ամրոն 39. 50, Կիլիկիա 8. 25, Արուսեակ խմբի մասն. Եինջովկայի Արցոս խ. 67, Գեսարոի Արամեան խ. 5. 45 ռուբլի: Գումար 660 ռուբլի 80 կոպէկ:

ՆԱԽԱՋԱՆԳՍՑԻ խմբերից՝ Բագրատունեան տապան 21 ռուբլի, Առիւծի Տայիից 5, Թափառական 6, Խաչէն 75, Ցոյս 53, եւս 56, Գէօսա-Տաղ 11, Բէգից 10, Իբխանի ակ 24, Աղբիւր ա. 9, Գէորգ Զաւուշ 80, Մաւեղ 25, Ցար. Ազիզեանից 3, Արարատ 1, եւս 16, Սիպան 42, եւս 10 ճարանդամներից 36, Մանջաւէր 31. 50, եւս Ցովհաննէսից 5, Արիւն 18, Առիւծի Գաբրիէլից 2, Լուսաբեր 46, Մախեն Ամարանցի նիւղից 46, Կայծակ 55, Երնկատար 39, եւս 24. 40, Գէորգ Զաւուշի Ծերուկից 60, Ծովասար 20. 40 ռուբլի: Գումար 820 ռուբլի 30 կոպէկ:

ԿԱՐՄԻՐԻ „Ծիլ" կոմիտէն 1904 թ. նոյեմբերից մինչեւ 1905 թ. թ. մարտի 10-ը. — Մի խումբ համակրողներից 14. 50 ռուբլի, Իւպիտէր խմբ. 97. 5, Օգնութիւն խ. 25, Խոշ. շան 150, Ցով. Ալ. 100, Գոնար 25, Գերբէ Տէմ. 300, Եգիպտացի խ. 58. 50, եւս 20, Երկաթեան 100, Ոմն նամ. 1-ից 100, Գէրիզ 50, Ղ. Երէ. 500, Մ. Պոպ. 200, Լուս. Արզ. 200, Լ. Մի. 160, Սարի նզմելի Մէնմէն աղա 200, Տ. Եղիսաբեթ 100, Թանմ. 500, Օնն. 400, Բեշ. 50, Խլուդ 300, Տ. Խրիմցի 200, Երից. 100, Պ. Պեսր. 100, Շաքարեան 100, Հրայր խ. 17, Խաչատիայ խ. 10, Յովհաննէս 500, Պարոն 100, Առաքել 50, Սօսի խ. 4, Ոսկէան 100, Օգնութիւն 50, Ալիխան 100, Վիճակախաղ 12. 75, աւեցիս ման գալուց 270. 80, Զախ.-եան 100, Հրայր խ. 17, Սօսի 12, Խաչատիայ խ. 9. 50, Ռեհանից նէր մի բէրան, Պողոս աղայից տասը նաս որսի բէրան իրենց բոլոր պարագաներով: ԽԱՌՆ քաղաքից՝ Եգիպտացի խ. (1904 թ. յունիսից մինչեւ 31 դեկտ. 1904 թ. 33 ռուբլի: Նարինջ 20, Սիրուն 10: Գումար 5566 ռուբլի 10 կոպէկ:

ԴԱՇՏԻ „Կարմիր Խաչի" մասնաճիւղ՝ 1905 թ. յունուար ու փետրուար ամիսներին.—Առաջնորդ Արծիւ խմբից՝ Աշխէն, Աստղիկ, Արուսեակ, Արմենուհի, Զուարթ, Լոյս, Համբերուբիւն, Սանդուխտ, Փառանօեմ, Հրանոյշ, Վերգինէ 6-ական ռուբլի, Աշխատանք, Ազնիւ, Զարուհի, Թամար, Հայկանուշ, Սիրանոյշ, Նուարդ, Վարդանոյշ 2-ական, Կայծեր, Ցոյս, Մարս, Լուսաբեր 1-ական, Հրաւէր խմբ.՝ Հաւաս, Լուսնթագ, Արուսեակ 1-ական ռուբլի, Սաթենիկ, Փեսրար 2-ական, Եսթեր, Լուսին, Փայլածու 50-ական կոպէկ: Գումար 92 ռուբլի 50 կոպէկ:

ՆՈՐ ԲԱՂԱՔԻ ենթակոմիտէն՝ 1904 թ. հոկտ. 1-ից մինչեւ 1904 թ. դեկտ. 31.—Զաւէն խմբէն՝ Ե խ. 25 ռուբլի, Մ. Պ. 50, Բ. Ե. Զ. Ա. Պ. Ա. 30, Սուրենեան խ. 9, Լ. Կայծակ 3, Տարօն խ. 54, տուգանք երկու հոգուց 11, Անաբեկիչ խ. 62. 50, Զաւէն խ. 78. 50, Ղեւոնդ 5, Տիգրան խ. 39, Նոր սերունդ խ. 46, Յուսիկ 2, Սեւան խ. 15, Սերոբ Աղբիւր խ. 60, Եփրատ խ. 33. 50, Հարազատ խ. 37. 50, Շանթ խ. 15, Եփրատ խ. Մանիկոն 4, Պատնաւ ջուր խ. 20, Զաւէն խմբից՝ Վանրամ 20, եւս 2, Սեպուհ 6, ՅՈՅՍ գիւղից՝ Մասիս խ. 39. 20, Աւարայր խ. 36. 30, Արարատ խ. 68. 85, Լեռնցիից 10, ԱՆՅԱՏԱԿԻՑ 29. 30 ռուբլի: Գումար 811 ռուբլի 65 կոպէկ:

ԱՄԱՌԱՆՈՅՑԻ ենթակոմիտէն՝ 1905 թ. յունուար եւ փետրուար ամիսներին. — Հետեւեալ խմբերից՝ Արարատ 16. 40 ռուբլի, Պանդուխտ Պատանեաց 10, Ման 14, Կլորիկի Փիւր-ջաղաց 85, Նոյն խմբի Լուսնեակ 80, Արքուն 28. 50, Սրբոյ 26. 50, Կախաղբիւր 20. 50, Արիւնարբու 21. 50, Զրաբերդի Աստղիկ 22. 50, Զրաբերդի Լուսաբեր աստղ 11. 50, Պանդուխտ Պատանեաց 15, Կաթաղբիւր 20. 50, Ման 14. 50, Արիւնարբու 20, Պանդուխտ Հայրենեաց 54. 40, Սրբոյ 26. 50, Արարատ 22. 20 ռուբլի: Գումար 509 ռուբլի 50 կոպէկ:

ԳԱՂԹԱՎԱՅՑԻ կոմիտէն՝ Վառօղ 5 ռուբլի, Թնդանօթ 5, Առիւծ 15:

ՀՐԻՒԱՆԴԱՆԻՑ 260 ռուբլի, հետեւեալ անձերից՝ Միհսու 150 ռ.: Ասլան 50, Դանուլ 50, Բալի 5, Դաիլ 5 ռուբլի:

Ընդհանուր գումար 8745 ռուբլի 85 կոպէկ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ կեդր. կոմիտէն՝

ՖԻԶՊՐԿԻ կոմիտէն՝ 1904 յունուար 1-էն 1904 դեկտ. 25. — Մ. Ա. 100 դոլար, Ա. Գ. 20, Մ. Կ. 17, Ե. Ե. 10, Ա. Թ. 16, Մ. Թ. 16, Գ.

Ճ. 10, Ս. Գ. 2, Գ. Պ. 2, Բ. Յ. 5, Մ. Ա. 1, Յ. Խ. 1, Ս. Տ. Կ. 1, Մ. Մ. 1, Ս. Ե. 2, Ռ. Ճ. 2, Ս. Մ. 10, Բ. Տ. Ա. 10, Ց. Պ. 1, Մայլէնպուրէ գոյացած 12. 26, Ագարակի մէջ խնջոյրէ մը գոյացած 1. 45 դոլար: Գումար 240 դոլար 71 սենտ:

ՆԷՇՈՒԷի կոմիտէն 1904 թ. — Կ. Պ. 50 դոլար, Մ. Յ. 40. 71, Երուանդ 36. 50, Խրլախ 31. 50, Վարդ 31, Ն. Կ. 30. 5, Բ. Տ. Գ. 27, Գ. Մ. 26, Գարեգին 26, Գ. Տ. Գ., Հայր, Պ. Կ. 25-ական, Պաղտասար, Պ. Գ., Պ. Պ. 20-ական, Կ. Յ. 18, Մ. Փ. 17, Ա. Մ. Պ. 17, Մ. Յ. 17, Յ. Ղ. 16. 50, Կարօ 16, Զ. Կ. 16, Պ. Գ. 16, Ա. Ա. 16, Ա. Ռ. 15. 50, Պ. Ս. 15. 50, Մ. Մ. 15. 25, Յ. Տ. Պ. 15. 25, Եղբայրէ Գ. 15. 25, Մ. Կ. 15, Տիգրան 15, Բաբկէն 10. 10, Արմէն 10. 9, Հրաչ 10, Խ. Մ. 10, Խ. Գ. 8, Գ. Կ. 5. 30, Լօուլցի ընկերներ 5, Տիկին Ա. Վ. Ի. 5, Տ. Ժ. 3, Մ. Պ. 3, Բագրատունի 2. 50, Ռմն, Ս. Կ., Ծ. Գ., Ռմն, Յ. Գ., օր. Ա. Գ., Յ. Կ., Տ. Ն. 2-ական, Յ. Յ. 1. 50, Տ. Բ. 1. 50, Բ. Պ. 1. 50, Յ. Գ., Ն. Պ., տիկ. Փ., տիկ. Շ., Լեւոնիկ, տիկ. Բ., Լ. Ն., Ռմն, Ս. Գ., Ռմն 1-ական, Ս. Գ. 60 սենթ, տիկին Մ. Գ. 50 ս., Ա. Ա. 50 ս., Իզմիրեան 10, Ծանուցումներէն ու այլեւայլ աղբիւրներէ 42 դոլար 45 սենտ: Գումար 836 դոլար 57 սենտ:

ՊԱԼԿԱՆԵԱՆ կենդր. կոմիտէն՝

ՌՈՒՍՀՈՒԳԻ կոմիտէն 1904 թ.—Խանասոր խրբ. 24. 50 լէվ, Շամէ խ. 33, Տեւոր խ. 130, տիկնանց Սօսի խ. 29, Թարոլ խ. 20, Սամովիդի Աւրկան խ. 100, Սամովիդի ընկերներ 10, Շիբոդի Կայծակ խ. 56, Ազնաւոր 5, Ռ. Թորոսեանէ 7, Ճորնովայի ընկերներ 6 լ.: Գումար 4_0 լէվ 50 սանտիմ:

ՊՈՒՐԿԱԶԻ ենթակոմիտէէն 1905 թ.—Սասուն խ. 69 լէվ, Արամ խ. 63, Անտօմ խ. 44, Եփրաս խ. 39, Բուվի քարեր խ. 31, Ալբամար խ. 25, Օժանդակ խ. 54. 80 լէվ: Գումար 325 լէվ:

ՊՈՒՐՍԼԻՇԻ ենթակոմիտէէն 1904 թ. նոյ.-դեկտ. — Սէրէմնեան խ. 27 ֆրանք, Ֆէդայի խ. 11, Նէվրուզ խ. 45, Շամէ 92, Վազէգն 11, Կայծ խ. 21, Զէյթուն 42 ֆր.: Գումար 186 ֆրանք:

ԴԱԼԱՑԻ ենթակոմիտէէն. — Ծերունի խ. 35 ֆրանք, Արծիւ խ. 30, Տալորիկ խ. 30, Տարօն խ. 24, Գայլ խ. 81 ֆր.: Գումար 200 ֆրանք:

ՍՕՖԻԱՅԻ կոմիտէն 1905 թ. յունուարէն մինչեւ մայիս. — Հրայր խ. 34. 50 լէվ, Սեպուհ 47, Սերոբ-աղբիւր խ. 33, Երեք ընկերներէ 10, Թարոլ Զարմանեան խ. 20, Անդրանիկ խ. 41: Գումար 185. 50 լէվ:

Ընդհանուր գումար 931 լէվ եւ 386 ֆրանք:

ԱՊՈՌԱԺԻ կոմիտէն՝

1905 թ. յունուարից մինչեւ ապրիլի 20. —

Խաչէնի Զանգ գիւղի խմբից 6. 15 ռուբլի, եւս 5. 40, Խաչէնի Խանաբերդ խ. 8. 10, Բերդաձորի Հրաբ 6. 50, եւս 5, Բերդաձորի Անանուն խ. 4. 70, Բերդաձորի Ղւակսան (տուգանք մի յանցաւորից) 75, Զրաբերդի Յուրս աղբիւր 15, Ապառաժի Բլրաբէն գիւղի խմբերից եւ զանազան աղբիւրներից 148. 55, Դեռձակների ընկերութ. 20, Կայծ խ. 2. 55, Կարեկցող հոյրեր 5. 25, Պ. Թանդէ 10, Կայծ խ. 11, Կարեկցող հոյրեր 2, Գասախսուր. 02. 32, Կովկաս խ. երեկոյթ. 63, Բլբաբէն գ. խմբերից 50, Մի տիկին ամսավն. 20, Տուրֆալու վան. ա. բաժին 126, բ. բաժին 76, գ. բաբին 123, Պոդպաս խ. 15. 65, Զան ֆէտա խ. 15. 5, Վերին ձոր գ. խ. 4. 50, Կէլիէ-գուզան խ. 36, Արազի ջրս դրամական խ. եւ մի կ. խ.-ի 51. 90, Բերդաձորի Միսբան գ. Ոյժ խ. 13. 30, Ակնաղբիւր գ. Գրիչ 11. 20, Ներքին-Վարդաբէն 14. 55, Հակաձորի ենթակոմիտէն Աւրտա խ. 28. 20, Լոյս խ. 28, Հակաձորի Նամուս խ. 20, Հրաբուխ խ. 10. 50, Բարեբար բ. խ. 20. 20, Բարեբար գ. խ. 18. 80, Բար. դ. խ. 12. 50, Բար. ե. խ. 3. 50, Բար. է. խ. 10. 50, Բար. ը. խ. 2. 50, Բունդից 4, Անցորդ 10, եւս 9, Պոչոս-ասեղ 2, Ալմաս բ. 3, Հարսանիքից (Բաղտց) 7, Բէկ 2, Զանազան բարեբարներ 7, Մարզպետունի 2, Բէկ 13. 20, Հարսանիքներից 76. 63, Աւեսիս. հանգ 89, Երեկոյթից 54, Կողմնակի մուտ 3. 80, Սար գ. Զէնի խ. 16. 65, Սար ա. գ. Արուսեակ խ. 10. 40, նոյն գ. աւեսիսից 6. 50, Սար բ. գ. Բոպէ խ. 6. 25, Բոլտաղ գ. Կրսեր խ. 10. 80, Սրբաբէն գ. խմբեր 27. 10, Սաթանուզ գ. խմբեր 4. 40, Լեռնարանի խմբեր 5, Փշոտի խմբեր 16. 15, Կաղ գ. խմբեր 45. 5, Փոր գ. խմբեր 3, Հանդապալ եւ Ալան խ. 45, Գեսաւի խմբեր 48. 55, Բոլաբերդի խմբեր 11. 60, Սեպուհի միջոց. հարսան. 45. 5, Բերդ գ. խմբեր 11. 85, Անտառ գ. 10, Ուխտաղ գ. 10, Զնտից գ, 6, Ծառ 25, Միրոյի միջոց. 23. 50, Կարօ 6, Սեպուհի միջ. տուգ. 31. 75, Ամրոց գ. Մխիթար ա. խ. 41, Մեսակ գ. խմբեր 16. 4, Վասակ գ. խմբեր 60. 50, Բերդ գ. խմբեր 32. 40, նոյն գիւղից 10, Անապատ գ. խմբեր 4. 15, Հորիզոն գ. խմբեր 23. 45, Ծաղկեվանք գ. խմբեր 54. 55, Մեծ ու Փոքր Բարձրաբերդ գ. 62. 20, Բերդիկ գ. 8. 35, Բերդիկամ Շանէվանուց 25, Կարմիր-վանք գ. 34. 10, Անի գ. խմբեր 14, Ծերենց գ. 24. 20, Կայծեր գ. խմբեր 24. 60, Բարատսան գ. 35. 20, Փոքր-քաղաքի խմբեր 16. 25, Ղզուեց գ. խմբեր 2. 70, Մելիք գ. խմբեր 32. 40, Անտառանոր գ. խ. 13. 20, Գոմշաթող գ. խ. 14. 40, Աղբիւր գ. խ. 19. 50, Զուր գ. խ. 5. 15, Լուսին գ. խ. 33. 60, եւս տուգանք 60, Մուշ գ. խ. 28, Կարմիր-վանք գ. խ. 12. 50, Կապ գ. Ազնիւ խ. 5. 20, Սրբաբէն գ. խ. 10, եւս տուգանք 4, Ամրոցի խ. 49. 15, Սարալանջի խ. 11. 80, Լեռնարանի խ. 5, Փշոտ գ. խ. 6. 20, Բոլաբերդ ա. բ. գ. 12. 10, Ամրոցից տուգանքներ 7. 26, տամակից ստացած 24. 10, Կապ գ. Ազնիւ խ. 5. 90, Պ. Զորոպեան 52. 20, Կապ գ. տուգ 13, Սարալանջ գ. խ. 4. 16, Լծէն գ. խ. 3, Սարաղի հանգ. 3, Նախկին հաշիւների մնացորդ 1. 80, Ապառիժի Կեանք գ. մի դասի առքիւ. 10, Մեսդ մի դասի առքիւ 5, Զոր 24. 90, Աղբիւր գ. 10. 45,, Կարմիր քար 20, Աւարայր գ. 9. 10, Ամառանոց գ. 10. 45, եւս տուգանք 3, Ցաղբանակ գ. 55. 55, Մաթալ-Սուր գ. 18. 5, Օջախ գ. 16. 80, Վազգ գ. խ. 7; Պ. Զ. 10, Շրջիկ Հակիկեանի միջ. հանգանակուած՝ Վարդ գ. հասարակութ. 33. 70, Զորաբէն գ. 10, Թալանաբէն գիւղ 6. 56, Ցաղբանակ բ. գիւղ 82, Զուղա բ. գիւղ 25, Բեղ բ. 32. 50, Աւարայր 20, Բեղ գիւղ 31. 50, Ամառանոց 50. 70, Թլակեան 20, Զորաբերդ 10, Վերին-Վարդաբէն 25. 10, Բարդ ա. 47, Ներքին-Վարդաբէն 21. 63, Շէնիկ 79. 50, Անտառ 15. 40, Փելաւ 15, Տէլի-գազան 61. 50, Ղազբար 2_. 62, Ծաղիկ 9. 38, Նպաս գիւղի հասարակ. 56, Աթոռանիստ 25. 30, Շաւարշան 12. 60, Պալիւ 25, Զուլում 32. 50, Նամուս 60, Միսք 26. 75, Գիրանաձոր 13, Ծմակին-գլօլ 12. 75, Բլբլան 18. 20, Գեօլ 12. 8, Տարան 5. 5, Աթոռանիստ վրէժի միջ. 20, Գաղթականի Դաւթի միջոց. 30, Միջագէտ 261, Ճակատից Ալանի միջ. 7. 15, Ծաղկավանք 7. 51, Սրուբ-աղբիւր 6. 75, Նահատակ 19. 50, Հակառակ 13. 20, Առիւծ 14. 10, Ուխտաձորի 25. 36, Բարէ-աղբիւր 25. 15, Մի դասի առքիւ 11, Ապակի գ. հասարակ. 12. 50, Միջագեսի ենթակոմիտէն՝ Նիկոլ խ. 57. 50, Գորգիթ խ. 11. 40, Սպիտակ խաչ 10, Ոսկի 11. 50, Զմենակ 8. 50, Տեղակ 5. 35, Նիկոլ խ. 34. 50, Տեղակ 12. 10, Զմենակ 5. 75, Սպիտակ խաչ 25, Գորգիթ 7. 70, Ոսկի 3, Տեղակ 17, Նիկոլ 34. 50, Գորգիթ 7, Զմենակ 5. 50, Ոսկի 5. 5, Սպիտակ խաչ 9, Ա. Ն. 30, Շ. բէկից 10, Մի պսակուող 10, պր. Սուրհանդակ 3, Մի Յանցաւորից տուգանք 25, Մի դասից 25, Աւետիք 38. 61, Նիկոլի հոգեւնանգիսս. հանգ. 65. 55, Թոմասի հոգ. հանգ. 57. 56, ա. երեկոյթից 104. 14, բ. երեկոյթ. 241. 35, դ. երեկոյթից 8_. 25, Կարմիր խաչի Գարուն խ. աւետիսից 40, եւս ամսավն. 41. 95, Յոյս 5. 55, Եռանդ 8. 30, Գարուն բ. 7. 20, Երամ խ. 7. 70, Ոյժ խ. 1. 95, Բնար խ. 10. 36, Նուէրներ 12. 10, Առիւծ գիւղի Պիդ. խ. 8. 20, Ոսկի խ. 6. 85, Ուխտակորիստ Բրիստափոր խ. 8. 45, Նպատակ դ. Պատիճ 10. 95, Բարէ աղբիւր գ. Ռուսիդ 4. 75, Անտառ գ. Խելի 10, Աթոռանիստ Վրէժ 8. 35, Արազից Թովմասից Աժդանակ եւ Մասիս խ. 40. 90, Փեշա գիւղի Եռանդ խ. 14, Ծաղիկ Վարդ խ. 10. 90, Բարէ-աղբիւր Ռուսիդ 6. 35, Կէլիէ-գուզանի, Շէնիթի, Ծաղէ վանքի 29, Բերդաձորի 6. 50, Էլէ-գազանուշ աւեսիսից հանգ. 23. 40, գրքերի վաճառումից 16. 30, Միջագեսի Կարմիր Խաչից 18, ԽԱՉԷՆԻ շրջանից՝ Տիգրանագեսի գիւղի խմբերից 10. 81, նոյն գիւղից նուէր 2. 54, Փարազան գիւղ 6 65, Սասուն գիւղի 12 խմբերից 10. 30, եւս 7. 85, Վասպուրական գ. 11 խմբեր 16. 15, Իշխանաբերդ գ. խմբեր 4. 40, Խարազանի ներքին շէնից 7. 50, Վասպուրական գիւղ 11. 25, Զոր գիւղի Անանուն խ 5, Կիրն գ. խ. 4, Նազար գ. խ. 8. 95, Սեւ գիւղի խմբեր 3. 50, Մեղրաձորի 8 խմբեր 20. 95, Փոքրիկ գիւղի 12 խմբեր 18. 80, Անապատ գիւղի 6 խմբեր 10. 90, եւս 33, Մեղրաձորի խմբեր 18. 10, Արշակաւան գիւղ 10. 85, Տիգրանակերտ գիւղ 10. 81, Սասուն գիւղի 12 խմբեր 10. 30, Վասպուրական գիւղի 11 խմբեր 16. 15, Խարազան վերին եւ ներքին 8. 60, Ժայռ գիւղ 14. 86, Մանչուր 10, Կիրն գիւղ 4, Զոր գիւղ 11. 15, Փոքրիկ գիւղի 12 խմբեր 32. 20, Ժայռ գիւղի 2 խմբեր 4, Ղարաղումանի 8 խմբեր 19. 11, Անապատի 6 խմբեր 10. 15, Խաչէնի շրջանի 6 խմբեր 10. 15, Խաչէնի շրջանի 4 խմբեր 4. 20, Թարխանաբերդի 11 խմբեր 54. 95, Աւեսարան գիւղի խմբեր 32. 49, ՋՐԱՌԵՐԻԻ շրջան՝ Անապատ գ. խմբեր 8, Վանստական գիւղի խմբեր 4, Մեղրասարի խմբեր 5. 30, Վրէժի խմբեր 3. 60, Սարսափի խմբեր 24. 90, Խաչ քարերի խմբեր 1. 55, Վասպուրականի խմբեր 5. 90, Մռոլի խումբ 5 60, Լաչենի խումբ 4. 95, Վարդոյի խումբ 5. 90, եւս 5. 80, Արձագանքի խումբ 4. 55, Զրաբէնի խումբ 15. 89, Ծակ-քարի խումբ 2. 40, Խանաթուի խումբ 7. 65 ռուբլի:

Գումար 6274 ռուբլի 18 կոպէկ:

Մեր խմբագրութեան հասցէն՝

Rédaction du „DROSCHAK“, Genève (Suisse)

ՀՈՍԱԿ

1905 № 8 ՕԳՈՍՏՈՍ

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ ՍՈՒԼԹԱՆԻ ԴԷՄ

ՌՈՒՄԲԸ ԵԼԼԴԸԶԻ ՄՕՏ

Հրեշը մի անգամ էլ դուրս սողաց մահւան ճիրաններից, ոճիրը մի անգամ էլ յաղթանակեց տէրրորիստի ահաբեկող շանթերի դէմ...

Տասնեակ տարիներից ի վեր ամբարւած թոյնը դուրս ժայթքեց ահաւոր որոտումով և սասանեցրեց Եըլդըզի շրջակայքը։ Մի վայրկեան աւելի ուշ, մի քանի քայլ աւելի մօտ—և թագակիր մարդասպանը պիտի շնչասպառ գետին փռւէր իր ամբողջ կամարիլլայով...

Դաւը վիժեց—մէկը այն հոյակապ ձեռնարկներից, որոնք ոսկէ տառերով են արձանագրւում Ազատութեան տարեգրութեան մէջ. մէկը այն շեշտակի հարւածներից, —ի՞նչ ենք ասում—միակը՝ որ ընդունակ էր համաշխարհային իրարանցում առաջ բերել, որ կարող էր անսովոր պայքարների թատր դարձնել սուլթանական մայրաքաղաքը, նոր կացութիւն տնօրինել Օսմանեան կայսրութեան մէջ, նոր դարագլուխ բաց անել թիւրքահպատակ ազգերի համար։

Ո՞վ է նա, անյայտ, խորհրդաւոր վրիժառուն, որ նետւել էր, իր դժոխային գործիքով, սուլթանական աղօթարանի մօտ...

Ով որ էլ լինի նա—ազատութեան պատգամաբեր է բռնակալութեան անմատչելի ապաստաններում, ժողովրդային ցաւերի ծնունդ է, դաժան, արիւնոտ օրերի ծնունդ, խիզախ տենչերի խիզախ արտայայտիչ։

Ով որ էլ լինի նա—անսովոր յանդգնութեամբ ու անհնարին զոհողութիւններով է հրապարակ եկել. նրա ժեստը՝ վսեմ, հրապուրիչ՝ կաշկանդում է բոլոր մտքերը. նրա գործը խրախոյս է գտնում բոլոր հալածական ժողովուրդների մէջ, ամբողջ զգացող ու խորհող աշխարհում, որ այսօր ողբում է նրա վրիպումը, ցաւում է սրտանց, որ նրա քայլը չը պսակւեց յաղթանակով։

Եղե՞լ է արդեօք մէկը համաշխարհային պատմութեան մէջ, որ այնքան ատելութիւն ու գարշանք յարուցանէր ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան կողմից։ Պատահե՞լ է արդեօք քաղաքական խոշոր սպանութեան մի դէպք, մի դաւադրութիւն, ուր բուրժուազական մամուլը չ՝արտայայտէր իր ցասումն ու պարսաւանքը դաւադրութեան հեղինակներին, ուր նա չը շեշտէր, չը փառաբանէր մարդկային անձի անբռնաբարելիութեան մեծ սկզբունքը։

Դիտեցէք, սակայն, համաշխարհային մամուլը։ Ո՞րպիսի հրահանգիչ լռութիւն։ Ո՞րպիսի անօրինակ, շշմեցուցիչ անտարբերութիւն Եըլդըզի կալանաւորի համար, որին մեղադրում է միայն Norddeutsche Allgemeine Zeitung-ի և նման զաղջը բիսմարկեան օրգանների կեղծ համակրութեան ծանուցումներով։

Այո՛, մարդկային անձնաւորութիւնը յարգելի է, անբռնաբարելի, բայց Եըլդըզի թշւառականը մի բացառութիւն է այդ օրէնքից. նա դուրս է համարւում մարդկութիւնից, — *un despote au ban de l'humanité!* — բարձրաձայն յայտարարում էր մի քանի օր առաջ հուչակաւոր սօցիալիստ պարագլուխ Էմիլ Վանդերվելդ, բելգիական պարլամենտում, ի պատասխան կառավարութեան, որը ուզում էր փայլել Օսմանեան վեհապետի առջև, իր շնային սերվիլիզմով։

Եւ ահա սակայն, ճակատագրի մի անհեթեթ քմահաճոյքով՝ „մարդկութիւնից արտաքսւած ու արհամարհւած“ այդ բռնաւորը շարունակում է ապրել այն ժամանակ, երբ ժողովրդական դատի հզօր, գաղափարական առաջամարտիկները նահատակւում են խորտակւած յոյսերով, այն ժամանակ, երբ բովանդակ երկիրը նոյն այդ բռնաւորի յամառ ջանքերով վերածւած է հսկայական մի դագաղի, լի մեռելների ոսկորներով, ուր որդերը կրծում են անդադրում ազատութեան բողբոջները, ձգտելով խպառ լափել, ոչնչացնել—ապարդիւն...

Epur si muove! „Եւ այնուամենայնիւ նա պտտւում է“—այդ վիթխարի դագաղի մէջ անգամ վրէժխնդրութեան կրակը դեռ մնում է անշէջ, ազատութիւնը ծըլում, ծաղկում է և մահասարսուռ ճայթիւնով սասանեցնում բռնաւորի գահը։ Դեռ վառ է սրբազան ատելութիւնը դէպի ժողովրդի, ազգի թշնամին, դեռ կանգուն է ըմբոստ վրիժառու, խիզախ սերունդը, որ գիտէ իրագործել անկարելին, որ գիտէ յաղթահարել անհնարին խոչընդոտները և հարւածներ տեղալ նոյնիսկ այնտեղ, ուր Համիդը բնաւ չէ սպասում,—այնտեղ, ուր նա իրեն ազատ է զգում դաւադրի շանթերից, այնտեղ, ուր նա հեռու է նոյնիսկ իր հարազատ ժողովրդի աչքից, շրջապատւած ահագին տարածութեան վրայ իր զրահապատ լեգէոնների, այնտեղ, ուսկից նա ամեն շաբաթ անցնում էր ցնծագին աղաղակների մէջ, ժպտուն ու յաղթական, սիրալիր ու ողորմած հայեացքներ նետելով աջ ու ձախ... և ահա հէնց այնտեղ, ոճրագործի այն պարսպապատ դարանում, երկնային պատուհասի պէս պայթում է սոսկալի արկածը, վայրկենաբար դարձնելով փայլուն հրապարակը արհաւիրքների մի դաշտ, ծածկւած դիակների բեկորներով... սարսափելի է, սարսափելի։ Վերջին զբօսավայրն էլ թունաւորւեց, վերջին յոյսերն էլ մարեցին ազատ ու անվրդով երթևեկութեան...

դեռը ճողոպրեց, բայց ի՞նչ վիճակում... Դժոխային սարսափով հմակուած, մահը սրտի մէջ, նա սրարշաւ փախաւ անիծեալ աղէտավայրից դէպի իր մահահոտ ոճրանոցը, և ահա այնտեղ վերսկսեցին այլասեռուած մանիակի ջղաձգութիւնները, ահա նա վերստին մոլեգնութեան թափեր առաւ, արթնացան նրա մէջ արիւնածարաւ քնազդումները... բռնե՛լ, շտ՛ուտ, շուտ, կախել, յոշոտել, խմանալ, արդեօք քրիստոնեա՞յ են դաւադիրները—հա՞յ, բուլգա՞ր, մակեդոնացի՞՝ որպէս զի տիրանը իր աւանդական սովորութեան համեմատ՝ թափէ իր թոյնը անմեղ ու անպաշտպան ժողովրդի վրայ...

Ահա նա ճչում է անզօր կատաղութեան մէջ, չը գտնելով դաւի հեղինակներին և նոյն իսկ վրէժխնդիր է լինում իր անմիջական շրջապատից, աքսորում է պալատականներին, բանտարկում է անգամ իր եղբօրը—թագաժառանգին. ահա նա նորից փչում է կատաղութեամբ ռէակցիայի փողը, հրահանգում է մասսային ձերբակալութիւններ և բազմամբոխ մայրաքաղաքը նորից դարձնում լրտեսական վոհմակների շահատակութեանց ասպարէզ։

Հին մեթոդ, մաշած ու սնանկ, ապարդիւն ու անհեթեթ... եւ այդպէս մշտնջենական տագնապի մէջ, ահով ու զարհուրանքով, դաւերով ու հալածանքներով, կը շարունակէ առաջ ընթանալ իր սեփական բռնակալութեան ղո՝ Եըլդըզի մենաւորը, առանց երբէք խրատուելու կեանքի դասերից, առանց երբէք ականջ դնելու իր գահի պատուանդանը փորող ժողովուրդների աղերսներին ու սպառնալիքներին—այդպէս կը շարունակէ ընթանալ կարմիր Խելագարը, մինչև որ վրայ հասնի յեղափոխական Նեմեզեդայի անվրէպ բազուկը, մինչև որ իրագործուի տիեզերական արէօպագիհրամայական և անագորոյն դատավճիռը։

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Daily telegraph-ի Պոլսոյ թղթակցէն (Ֆիլիպէի գծով)։

Երէկ սէլամլըգի արարողութեան ատեն սուլթանի կեանքի դէմ զարհուրելի փորձ մը կատարուեցաւ։ Լուրը ձեզ ուղղակի հեռագրած էի, բայց իմ հեռագիրս Պալատան մէջ սրբագրուելէ յետոյ ինձ վերադարձուեցաւ։ Այսուհանդերձ կը հաւատամ, որ գործակալութիւններուն պաշտօնական ազդարարութիւն մը եղած է։ Անգլիացի մը, որ ներկայ գտնուած է, հետևեալ մանրամասնութիւնները տուաւ ինձ։

Երբ սուլթանը մէկիթէն դուրս ելաւ և կը պատրաստուէր իր կառքը մտնելու, մօտաւորապէս հարիւր եարտա հեռաւորութեան վրայ կառքերու և զօրքերու խառնուածքի մէջտեղէն զարհուրելի պայթում մը առաջացաւ։ Անմիջապէս վերին աստիճանի խառնաշփոթութիւն մը տիրեց և աւելի սաստկացաւ փոշիի և ծուխի ամպէն։ Ձիեր ամէն կողմ կը փախչէին։ Մէկիթի, դեսպաններու յատուկ բէօշկի և պալատին պատուհաններու ապակիները ռումբի կտորներէն փշրուած էին. մինչդեռ ձիերու կտորներ, մարդկանց դիակներ և կառքերու բեկորներ խոշոր հեռաւորութեան վրայ նետուած էին։ Բոլոր սպաները և փաշաները խուժեցին դէպի սուլթան, խնդրելով անոր որ մէկիթ դառնայ՝ վախնալով երկրորդ պայթումէ մը, բայց Ն. Վ. հափառութիւնն իրական վտանգի հանդէպ արտակարգ քաջասրտութիւն և պաղարիւնութիւն ցոյց տուաւ։ Նա պնդեց որ մինակ կառքը պիտի նստի և ինք անձամբ վարելով՝ մտրակը շաչեցուց ազդարարելով բազմութեան, որ ճամբայ բանան։ Երբ հիւրանոցին առջևէն կ՚անցնէր, օտար հիւրերու խառն բազմութիւն և դիւանագէտներ ցնծութեամբ ողջունեցին զինք, որոնք սուլթանի քաջասիրտ ընթացքէն խորապէս տպաւորուած էին։ Ն. Վ. շատ ուրախ էր և կրկին ու կրկին կը բարևէր։

Պալատը հասնելուն առանձնապէս իր ներկայութեան հրաւիրեց Աւստրիոյ դեսպան Պ. Քալիչէն, որ սէլամլըգին ներկայ էր, ու երկար խօսեցաւ անոր հետ։ Դեսպանը սուլթանին պաղարիւնութեան վրայ մեծապէս զարմացած էր։

Երբ մէկիթը կը թողուր սուլթանը անշուշտ վերին աստիճանի գոհ մնացած ըլլալու է հաւատարմութեան այն ինքնաբուղխ պոռթկումէն, որ արտայայտեցաւ իր պաշտօնեաներու կողմէն, որոնք իր կառքը շրջապատեցին սուսերին քաշած և ուղեկցեցան մինչև պալատին դուռը։ Պայթուցիկը սարսափելի ուժ ունէր, և կը հաւաստեն որ ռումբը իր մէջ կը պարունակէր մօտ 15 քիլօ նիւթ։ Սուլթանը 100 եարտա հեռաւորութեան վրայ ըլլալուն՝ պայթումէն պաշտպանուեցաւ ժամացոյցի աշտարակէն, որ վնասուած է։

Տակաւին գոհացուցիչ ոչ մի ծանօթութիւն՝ թէ ինչպէս ռումբը գործածուած է։

Նետելու համար շատ խոշոր՝ ռումբը կ՚երևի պահուած էր կառքի մը մէջ, բայց յայտնի չէ թէ ինչպէս սուլթանի մօտ կարողանային պիտի պայթեցնել զոյն, որովհետև կառքերը խիստ կերպով կը պահուին զօրքերու շղթայէն և հեռու սուլթանի բռնած ճամբայէն։

Ոմանք կը պատմեն որ փորձի հեղինակը ժամացոյց մեքենան լարեց և հեռացաւ, իսկ ուրիշներ դիպուածի կը վերագրեն։

Վերջապէս մարդասպանի ով ըլլալուն մասին ոչինչ յայտնի չէ։ Ռումբը լեցուած էր գնդակներով և երկաթեայ կտորներով։ Պայթումի վայրը խոշոր փոս մը բացուած էր, մինչդեռ ճամբու վրայ փռուած էին կառքերու բեկորներ և մարդկանց ու ձիերու մասեր, որոնք բառին իսկական նշանակութեամբ, կտոր կտոր եղած էին։ Ձիու մը ոտքը յիսուն մեթր հեռու նետուած էր։ Նիզակաւոր գունդը դէպի առաջ շարժած ըլլալուն՝ դէպքը նեղ վտանգաւոր էր, քան ինչ որ կարող էր լինել, բայց և այնպէս 23 մարդ և 50 ձի սպանուած և 57 մարդ վիրաւորուած են։ Սուլթանի շքախմբի քանի մը անդամները վիրաւորուած են և մէկը մէկիթի բակի մէջ սպանուած։ Օտար հանդիսատեսներ անվտանգ փախած են, բացի երկու գերմանացիէ և մէկ իտալացիէ, որոնք թեթև վերքեր ստացան։ Պայթումը ամբողջ քաղաքի մէջ և քանի մը մղոն հեռաւորութեան վրայ լսուեցաւ։

Կ. Պոլիս. շաբաթ, 22 յուլիս.

Reuter. Սուլթանի կեանքին դէմ կատարուած փորձի մասին տեղական թերթերուն մէջ երևցած պաշտօնական զեկուցում մը կը յայտնէ, որ պայթումը Համիտիէ մէկիթէն 100 եարտա հեռաւորութեամբ հանդիսատեսներու կառքերը սպասելու յատուկ տեղի վրայ և Հեծելագնդի ետևի կողմը տեղի ունեցաւ։

Իշխանութիւնները ամէն մի ենթադրութիւն կամ հաւանակութիւնը աչքի առջև ունին։ Օրինակ՝ եղեռնագործը օտար անիշխանական մըն է, կամ ինչպէս ուրիշներ կը մտածեն, փորձը Մակեդոնացիի մը, Պուլկարի մը և կամ յեղափոխական Հայու մը գործն է. և կամ ուրիշ ենթադրութեան մը համեմատ պէտք է վերագրել դժգոհ մոլեռանդ Արաբի մը կամ երիտասարդ Թիւրքերու կուսակցութեան։

Ռումբի պայթումէն վնասուածներու մէջ կը գտնուի ըստ երևոյթին օտարական մը, որու իսկութիւնը Պոլսոյ մէջ յայտնի չէ։

Մեռածներու մէջ են սուլթանի տղուն դաստիարակը Պէհա պէյ և մի քանի զինուորներ, ոստիկան մը և սուլթանի մէկ թիկնապահը, որու արիւնաթաթախ համազգեստը երևան եկաւ Մզկիթի անկիւնը, ուր գանուեցաւ Պէհա պէյ։ Այս վերջինին գլխի մէջ ռումբի կտոր մը մտած էր։ Ընդհանուր առմամբ քսանը չորս մարդիկ սպաննուած են և յիսունը եօթը վիրաւորուած։ 27 կառքեր ջախջախուած և 55 ձիեր սպաննուած են։

Ականատեսներ կը պատմեն, որ տեսարանը պայթումէն անմիջապէս յետոյ սրտաճմլիկ էր։ Մարդեր և ձիեր մեռած կը պառկէին մօտ երկու եարտա գետնի վրայ ռումբէ բացուած լայնութեամբ խոշոր փոսի մը շուրջ, և մարդկանց կտորներ կը գտնուէին բաւական հեռաւորութեան վրայ՝ պայթումէն նետուած։

Հաւանական է, որ երբէք կարելի չի պիտի ըլլայ աղէտի իսկական մանրամասնութիւնները ճշտել, քանի որ անմիջական մօտաւորութեան վրայ գտնուողները բոլորը սպաննուած են։ Կը կարծուի թէպէտ, որ երբ սուլթանը մզկիթէն դուրս ելաւ, անձ մը ռումբը նետելու վրայ էր, ճիշտ այն միջոցին մօտը գտնուող մէկը զայն արգելել ուզեց, և ռումբը իյնալով պայթեցաւ. կամ դիպուածով գետին ձգելով՝ պայթումը ժամանակէն առաջ տեղի ունեցաւ։

Կը հաւաստեն, որ իշխանութիւնները քանի մը օր առաջ զգուշացուած էին, թէ այսպիսի թշնամութիւն մը դաւադրուելու վրայ է, բայց կարևորութիւն չէ տրուած, որովհետև ճշմարտանման չեն գտեր։

Ոստիկանութեան կողմէն զգուշական արտակարգ միջոցներ ձեռք են առնուած, և մաքսատան պաշտօնեաները երկիրը ձգող բոլոր ճամբորդներու գոյքերը մանրակրկիտ կերպով կը խուզարկեն և ոչ մի կառքի թոյլ չեն տար Բ. դռան բակին մէջ մտնելու։

—

Պոլիս, 22 յուլիս

Ըստ Իգտամի ուրբաթ օր 24 մարդ սպաննուած և 55 հոգի վնասուած են։

Սուլթանի հրամանով վիրաւորուածները զանազան հիւանդանոցներ փոխադրուած են և նոյնպէս սուլթանը հրահանգած է, որ զոհերու ընտանիքներու նպաստներ բաշխուին։

Գոհաբանական մաղթանքներ կարդացուեցան այսօր Պոլսոյ և գաւառներու բոլոր եկեղեցիներու, ինչպէս նաև հրեաներու սինակոկներուն մէջ։

Թիւրք թերթերը կը շարունակեն թշնամական արարքը ուժգնօրէն և խիստ լեզուով դատապարտող և սուլթանի վրայ Նախախնամութեան պահպանութիւնը փրկող յօդուածներ հրատարակել։

REUTER

Neue Freie Presse-ին գրում են Կ. Պոլսից յուլ. 22.

„Ստորերկրեայ ականի պայթիւմից ընկան մօտ 80 մարդ, մի մասը սպանուած, միւս մասը ծանր վիրաւորուած։ Զոհերի թւումն են՝ Մէհմէդ փաշա, Դէնիզ փաշա և մի ծեր գերմանացի պաշտօնական անձ, Լօրիբօնել անունով։ Պայթիւմը առաջացրեց գետնի մի ահռելի դղրդոց, որ զգացուեց ամբողջ քաղաքում։ Սարսափը աննկարագրելի էր“։

—

Բելգիական *Matin*-ի թղթակիցը գրում է Կ. Պոլսից, յուլիս 22.

„Եկել էի այստեղ իմ գործերով ուրբաթ առաւօտ և մտադիր էի նոյն օրը ներկայ գտնուել Սելամլիքի արարողութեան, շնորհիւ լաւ յանձնարարականների։ Դիւրին բան չէ սուլթան Համիդին տեսնելը, որ սովորաբար ամուր փակուում է Եըլդըզ-Քեօսկում, և ես շատ էի ուզում օգտուել առիթից, առաւել ևս, որ բարեկամներիցս մէկը ասել էր ինձ. „ձեռքից մի թողնէք, մանաւանդ այդ տեսարանը, չը կայ նրանից աւելի հետաքրքրականը“։ Եթէ գնայի, ինչպէս որ հաստատապէս որոշել էի, կարծեմ շշմելուց վայր պիտի գլորուէի, որովհետև սուլթանը մզկիթից դուրս գալուց՝ ողջունուեց մի ռումբով, որ 80 կոհ պատճառեց։

„Ստիպուած էի, այցելութիւնների պատճառով, հրաժարուել հռչակաւոր Սելամլիքից, մնացի հիւրանոցումս և հանգիստ զբաղուած էի իմ տուալետով, երբ, ժամը մօտ մէկ ու կէսին, լսեցի մի խուլ որոտում, որը կարծես մի ահաւոր բան էր ծանուցանում։ Կպայ պատուհանից և քիչ յետոյ տեսայ գալիս են երեք կառք, որոնց ձիերը ծածկուած էին վէրքերով և որոնց վրայից արիւն էր հոսում։ Կառքերը բերում էին վիրաւորներին, որոնցից շատերը ծանր հեծկլտում էին“...

„Ռումբը, ինչպէս ինձ ասաց մի պաշտօնական անձ, շինուած է եղել ժամացոյցի մեխանիզմով և ունեցել է պայթելու մի անբեւեկայելի ուժ։ Նա դրուած է եղել մի կառքում, որքան կարելի է՝ մզկիթին մօտ։ Մեխանիզմը այնպէս է եղել լարուած, որ պայթիւնը տեղի ունենայ ճիշտ սուլթանը անցնելու միջոցին։ Բայց, հակառակ սովորականին, սուլթանը փոքր ինչ աւելի ուշ դուրս եկաւ մզկիթից, և այդ էլ փրկեց նրան։ Թիւրք լրագիրները դեռ թոյլտուութիւն չեն ստացել՝ ծանուցանելու սպանութեան փորձը։

—

Նոյն լրագրի մի այլ համարում զետեղուած խմբագրականի մէջ՝ պերճախօս կերպով փաստաբանուում է սուլթանի սպանութեան փորձը, յիշուում են Պոլսի, Սասունի, Ուրֆայի, Տրապիզոնի մասսային ջարդերը՝ արիւնաներկ բռնաւորից հրահանգուած, յիշուում են Գլադստոնի սասանեցուցիչ ու վրէժխնդիր խօսքերը՝ արտասանուած հայկական կոտորածների յաջորդ օրը, յիշուում են փտած, այլասերուած բռնակալութեան բոլոր ոճիրները, որոնցով „կարմիր սուլթանը“ ձգտել է միշտ խեղդել հպատակ ժողովուրդների ազատութեան ճիգը...

—

Freie Presse, 22 յուլիսի.

Տաճկական թերթերը ծայրայեղ կատաղութեամբ են խօսում սուլթանի դէմ եղած սպանութեան փորձի մասին, որ նրանց կարծիքով, „ուղղուած է քաղաքակրթութեան և մարդկայնութեան դէմ։“

Նոյն թերթի մէջ, 22 յուլիսի.

Մի շաբաթ սրանից առաջ, Հայդար փաշա կոչուած տեղում, որ գտնւում է մայրաքաղաքի շրջակայքում, ոստիկանութիւնը խուզարկեց Նազարէթ անունով մի հայի հիւրանոցը և գտաւ դինամիտային ռումբերով լի մի արկղ։ Հայը ձերբակալուեց։

—

Berliner Tageblatt 22 յուլիսի

Թւում է թէ փորձի հեղինակը հայ է, պատկանող այն միջազգային Կոմիտէին, որ ապստամբութիւն է պատրաստում ռուսական և թրքական Հայաստանում։

Բազմաթիւ կասկածելի մարդիկ ձերբակալուած են, սակայն բուն հեղինակը դեռ չէ գտնուած։ Հաւանաբար երէկ պայթումի միջոցին նա զոհ է գնացել։ Պալատի հսկողութիւնը անմիջապէս սաստկացրուեց։

Սուլթանի կեանքի դէմ եղած փորձը, եթէ ի նկատի ունենանք Տաճկաստանում իշխող յեղափոխական հոսանքներն և խռովութիւնները, չըպիտի զարմացնէ մեզ. ամենաշատը՝ մենք կարող ենք զարմանալ, որ այդ փորձը չէ կատարուել սրանից շատ առաջ։ Սուլթանի կառավարութիւնը տեսնում էր իր գերագոյն պարտաւորութիւնը՝ իր տիրոջ կեանքը պահպանելու մէջ և ինքը սուլթանը չէր ճանաչում աւելի բարձր նպատակ, քան ամեն մի հնարաւոր վտանգից ինքզինքը հեռացնելը։ Նա ոչ ոքի չէ վստահում, և ոչ ոք նրան չէ վստահում։ Այս անգամ ատենտատը նրա բաղդից անվտանգ անցաւ, նրա կառքը փշրուեց և նրան շրջապատողներից մի մասը սպանուեց կամ վիրաւորուեց ռումբի կտորտանքներով, իսկ Աբդիւլ Համիտը մնաց անվնաս և նոյնիսկ, հակառակ իր առասպելական երկչոտութեան, պահպանեց արտաքին հանգստութիւն։ Թերևս նրան մխիթարում էր իր թշնամիներից վրէժխնդիր լինելու յոյսը, որովհետև նրա անգթութիւնը համարեա աւելի մեծ է, քան նրա վախկոտութիւնը„...

—

Frankfurter Zeitung, կ. Պոլիս, 22 յուլիսի։

Եթէ փորձ անողը երէկ Սէլամլիկի վերջում իր զարհուրելի հարուածը մի կէս րոպէ էլ յետաձգած լինէր, սուլթանն էլ, որդիներն էլ պալատականների մեծագոյն մասն էլ անկասկած կը զոհւէին։ Փորձը արուած է 50 մետր հեռաւորութիւնից։ Այն վայրկեանին, երբ սուլթանը մզկիթից ելնում էր, „սալամ դուր" ազդարարութեամբ զինուորները պատիւ արին։ Հազիւ էր լսուել այդ ազդարարութիւնը, և ահա լսուեց մի սարսափելի դղրդիւն, որը կրկնուեց հինգ կարճ ընդմիջումներով։ Դուրս նետուեցին այնպիսի ուժգին ծխի և փոշու սիւներ, որ ամեն ինչ մի րոպէի ընթացքում կորուեց մթութեան մէջ։ Տիրեց մի սարսափելի իրարանցում մզկիթի բակի դռրսում և ներսում։ Սորան հետևեցին անհասկանալի աղաղակներ, դոռում-գոչումներ և շատերի ահաբեկուած փախուստ։ Սուլթանին ամենամօտ մարդկանց շրջանում նկատելի էր սաստիկ վախ, որովհետև մարդ չէր կարողանում հաշիւ տալ իրեն, թէ ինչ է պատահել։ Մարդկանց ու ձիերի մասեր թռչում էին ու ընկնում դէս ու դէն։ Մզկիթի հրապարակի վրայ գտնուող շէնութիւնների բոլոր լուսամուտները փշրուեցին, նոյն „Համիդիէ Մզկիթի", որտեղ սուլթանը րոպէ առաջ աղօթում էր, բարձր մինարէից շաչիւնով ծանր կտորներ էին թափթփում։ Երբ դղրդիւնը վերջացաւ և ծխի ամպերը ցրուեցին, ներկայ եղողների առջև բացուեց մի սարսափելի տեսարան. մօտ 40 մարդ և 50 ձի ուղղակի կտոր-կտոր էին եղած և 80 մարդից աւելի ծանր կամ թեթև վիրաւորած։

Սարսափելի դէպքի ամբողջ ընթացքում սուլթանը կանգնած էր գուսան, սակայն, ինչպէս միաբերան հաստատում են բոլոր վկաները՝ սառնասիրտ։ Յետոյ նա իր ամենասիրելի որդու հետ կառք նստեց, հրամայեց բարձրացնել կառքի ծածկոցը, որը առհասարակ միշտ իջեցրած է լինում, և անձամբ վարելով կառքը՝ ուղղակի արիւնալի կատաստրոֆի տեղից դիմեց պալատ ոգևորութեան գոչերի ուղեկցութեամբ։ Կառքը շրջապատուած էր հարիւրաւոր մարդկանցով, որոնք հանել էին իրենց սրերը պատեաններից, այնպէս որ ամբողջ տեսարանը մի վայրկեան վայրենի մի ֆանտազիայի տպաւորութիւն էր թողնում։ Միայն երբ գաղտնի ոստիկանութեան գլխաւորը՝ տոքտորհուչակ գեներալ Ֆէհիմ-փաշան, շատ էր մօտ գնացել, ստացաւ սուլթանից մտրակի մի ոչ այնքան ողորմած հարուած։ Կարելի է հաստատապէս ասել, որ սուլթանը միայն իր սառնասրտութեամբ և գլուխը չը կորցնելով փրկեց իսկապէս կրիտիկական դրութիւնը։

Այն հարցը, թէ ո՞վ է փորձի հեղինակը, այժմ զբաղեցնում է բոլորին. առաջ կարծում էին, որ հայ է, յետոյ բուլղար, երիտասարդ Թիւրք, Սիրիացի և վերջապէս — անիշխանական։ Ենթադրւում է, որ նա ոսպանուած է, կարծում են նոյնպէս, որ նա պայմաններին քիչ է ծանօթ եղել. այսպէս, օրինակ, „սալամ դուր" ազդարարութեան ժամանակ, որ տեւում է սուլթանը մզկիթից դուրս գալու ժամանակ, նա կարծել է, թէ սուլթանի կառքը արդէն շարժւում է։ Եթէ այդպէս լինէր, սուլթանը անշուշտ ոսպանուած կը լինէր։ Ռումբի ներգործութիւնը այնքան սաստիկ էր, որ սուլթանից 5 մետր հեռու կանգնած նրա թիկնապահը սպանուեց, մի քանի աւելի մօտ կանգնած անձնաւորութիւններ վիրաւորուեցին։ Ներկայ եղողներից իտալական դեսպանատան Էրլօտտա տուում էր, որ ինքը քանիցս ներկայ է եղել փորձնական մեծ թնդանօթաձգութիւնների, սակայն այսպիսի ուժգին թնդիւն երբէք չէ լսել։ Կարող է լինել, որ փորձը կատարուած է եղել ոչ թէ ռումբով, այլ „դժոխային մեքենայով" կործում են նոյնպէս, որ դա տորպերկրեայ է եղել։ Իսկայն ձեռք առած պաշտպանները ոչնչով չը հաստատեցին այդ։ Գաղտնի ոստիկանութիւնը գործում է անդադար. արուած են անհաւատալի թւով ձերբակալութիւններ։ Սուլթանը կարդեց իսկայն երեք միմեանցից անկախ քննիչ-յանձնաժողովներ, որոնցից մէկը նստում է Իլդիզ-Քիոսկում։ Կէս գիշերից շատ անց՝ այս վերջինը սուլթանի ներկայութեամբ հարցաքննութիւններ կատարեց։

Փորձի հետևանքը կը լինի անկասկած այն, որ տէռորը (կառավարչական), որից այնքան տուժում ու տանջւում են սուլթանի բոլոր հպատակները—մինչև իսկ օտար գաղութները, աւելի կը սաստկացնի. սուլթանը որոշ ժամանակ կը լինի կատարելապէս սարսափելի ուրբաթի ազդեցութեան տակ։ Ոչքան քիչ կարողացաւ գաղտնի ոստիկանութիւնը փորձի առաջն առնել, այնքան աւելի նա կ'աշխատի սուլթանին գրրգռուած պահել և իր միասակար ազդեցութիւնը աւելացնել։ Գործին տեղեակ մարդիկ նախատեսնում են արիւնալի օրեր „ժուրնաիների" խմբի համար,—այսպէս են անւանում գաղտնի ոստիկանները ժողովրդի կողմից։

Այս դէպքը առաջացրեց և մամուլի ահաբեկումն. նոյն իսկ կարծ հեռագիրները, որոնք երէկ իսկայն փորձից յետոյ ուղարկուեցին, շնորհիւ այդ ասիական պայմանների, տեղ չեն հասել։

—

Բերլինի *Lokal-Anzeiger*'ի

Սոֆիայի թղթակիցը հեռագրում է, որ Պոլսից ամսոյս 23-ին Սոֆիա են եկել մի խումբ գերմանացի տուրիստներ՝ տղամարդիկ և կանայք, որոնք ներկայ են եղել վերջին Սալամլիկին և պատմում են հետևեալը։

Ծամը 1-ից 20 րոպէ անց, երբ սուլթանը մզկիթից դեռ դուրս չէր եկել, լսեցինք մի սարսափելի պայթում։ Մեր աջ կողմից, մ՝ 100 քայլ հեռու, բարձրացաւ մի ամպ։ Կառքերի կտորտանք, մարդկանց ու ձիերի դիակների մասեր էին թռչում օդի մէջ։ Մի կատարեալ հրաբխային ժայթքում էր այդ։ Մեր առջև կանգնած գեներալների ձիերը կատաղութեամբ սկսեցին պտոյտներ գործել։ Այդ րոպէին մզկիթի բակում տեսնուեցաւ սուլթանը, շրջապատուած փաշաներով, իր կառքի մօտ կանգնած...։

—

Die Zeit· յուլ. 26

„Տաճկական թերթերը կիսապաշտօնական կերպով հաղորդում են, որ 82 ընտանիք և մօտ 400 մարդ սգի մէջ են։ Ծանր ու թեթև վիրաւորների մէջ կան 17 զինուորներ և ժանդարմներ, 12 նշանաւոր տաճիկ բաղաքացիներ և մի ջահէլ աւստրուհի, օրիորդ Վօնէլա։ Սպանուած ու վիրաւորուած ձիերի թիւն է 70, կոտրատուած կառքերի թիւը 32։ Պայթումի եղանակի մասին սենսասիօնել լուրեր են պտտում։ Ասում են, օրինակ, որ նա առաջ է եկել փոքրիկ օդապարիկի միջոցով, որը արծւի ձև է ունեցել։

„Պայթումի միջոցին սպանուած սուլթանի երկու ծառաները ամենևին վէրք չունին, նրանք մեռել են սարսափից առաջացած սրտի պայթումից“։

—

Berliner Tageblatt յուլ. 27.

„Կ. Պոլսում շրջող լուրերի համեմատ փորձի հեղինակը պալատական պաշտօնեաների, նոյնիսկ սպաների օգնութեամբ է ձգել ռումբը։ Ռմբաձիգը իբր թէ նըպատակ է ունեցել ոչ թէ սպանել սուլթանին, այլ միայն վախեցնել նրան և ստիպել ռէֆորմներն իրագործել։

—

Frankfurter Zeitung-ին հեռագրում են Կ. Պոլսից, 29 յուլիսի.

„Բուլգարական նաւային ընկերութեան բոլոր պաշտօնեաները ձերբակալուած են։ Դեռ շրջում է մինչև օրս չը ստուգուած լուրը՝ իբր սուլթանի դէմ եղած սպանութեան փորձը արել են բուլգարները։

„Ոստիկանական շրջաններում ասում են, թէ սպանութեան փորձի առթիւ ձեռնարկուած քննութիւնը յանգում է այն եզրակացութեան, որ իբր փորձը հայերն են արել։ Այլ շրջաններում կարծում են, թէ փորձի հեղինակին տաճիկների մէջ պիտի փնտռել։ Ամենախիստ հսկողութիւն է նշանակուած երկու գահաժառանգների վրայ“։

—

Daily Telegraph-ի Վիէննայի թղթակիցէն։

30 յուլիսի

Գահաժառանգ Բէշատ էֆ.-ի բանտարկութեան լուրը, որ վերապահութեամբ ձեզ հաղորդած էի, ստոյգ կ'երևի։ Աւստրիական դեսպանատան նոր հասած տեղեկագիրը կըսէ, որ ուրիշ գահաժառանգներու շուրջ հսկողութիւնը աւելի խիստ է։

Զըրաղանի պալատէն սուլթանին գրած նամակով մը Բրէնս Բէշատը ազդու կերպով կը բողոքէ իր բանտարկութեան դէմ։ Անիկա կ'սպառնայ մեծ պետութիւններու դիմում ընել, եթէ անմիջապէս ազատ չարձակի։

Կը հաղորդուի, որ Բրէնսը իւր ձեռքի տակ ունի իր եղբօր Մուրատի յիշատակարանները, որ Ապտիւլ Համիտի կողմէն գահընկեց եղած և բանտարկուած էր Զըրաղանի պալատան մէջ, ուր և մեռաւ անցեալ տարի։ Այս յիշատակարաններու մէջ պատմուած է Մուրատի գահընկեցութիւնը և խիստ ամբաստանութիւններ արուած են արդի Սուլթանի դէմ։ Պալատի ոստիկանութիւնը մեծ ջանքեր ըրած է այս փաստաթղթերը ձեռք անցնելու։ Բրէնս Բէշատը ըսած է, որ զանոնք հրատարակութեան պիտի տայ, եթէ ազատ չը թողուի։ Գաղտնի ոստիկանութեան պետ Ֆէհմի փաշայի, իր աքսորումէն առաջ, առաջին գործը եղաւ Բէշատ էֆէնդին բանտարկելը։

Հաւանականօրէն Ֆէհմին մատնեց Բէշատը, իբր դաւադրութեան սադրիչը, ոստիկանութեան պետի իր դիրքը փրկելու նպատակով։

Բայց և այնպէս ռումբի պայթումէն յետոյ Ֆէհմի փաշա շնորհազուրկ եղաւ և Ասիա աքսորուեցաւ։

—

Die Zeit-ին գրում են Կ. Պոլսից 30 յուլիսի։

„ԵԼԼԴԶԸ և Բ. Դուռը լուրջ դիմումներ են անում բուլգար կառավարութեան մի յօդուածի առթիւ, որ զետեղուած է „Վիէրնա պօչտա“-ի մէջ և որը պատճառաբանում է սպանութեան փորձը։

„Նորագոյն տեղեկութիւնների համեմատ, թւում է, թէ կարևոր նշաններ կան հետքը գտնելու համար։ Վերջերս այստեղ եկած Ռիպս անունով մի ռուսահպատակ, իբր թէ կոմիսիօներ, սպանութեան փորձի օրը անհետացել է։ Կառքը, որ փորձի մէջ դեր է խաղացել, պէտք է նրան պատկանած լինի“։

„Այդ կառքը, որի մէջ եղել է դժոխային մեքենայ, ամբողջապէս փշրուել է և կառապանը կտոր կտոր է եղել։ Ռիպսը պէտք է եկած լինի այստեղ Վիէննայից, ռուսական անցագրով։ Մեկնելուց առաջ Ռիպսը՝ Ադոլֆ Սօրիկօ անունով մի ծանօթ բելգիացու միջոցով յայտնել էր Մուրատովիչին, որ ինքը երկար ժամանակ բացակայ է իր տանտէր լինելու։ Սօրիկօն, որ ձերբակալուած է, պէտք է օգնած լինի Ռիպսին փախչելու“։

„Սպանութեան փորձի առիթով տեղի պիտի ունենայ մեծ փոփոխութիւն ԵԼԼԴԶԻ և ոստիկանութեան պաշտօնեաների մէջ“։

—

Freie Presse-ին հեռագրում են, յուլ. 31.

Էկզարխատի բուլգարական դպրոցների վերատեսուչ Նաումով ձերբակալուում է. կարծում են, որ նա վերջերս երկու ռումբ է տեղաւորել Էկզարխատում։

Ձերբակալուած էր և մի ֆրանսիացի, որի տունը խուզարկուած է։ Ֆրանսիական հիւպատոսի միջամտութեամբ նա արձակուեց։

Ձերբակալուեց և մի ուրիշ դալմատացի։ Այժմ նորից թերթում են դէպի այն կարծիքը, որ սպանութեան փորձը բուլգարական ծագում ունի։ Ընդհանրապէս թերթերը „NeueFreie Presse“-ն հետևեալն է ասում, ի միջի այլոց, իր խմբագրականի մէջ.

“Ատենատի հեղինակին պէտք է փնտռել երեք բանակներում,—բուլգարների, հայերի կամ երիտասարդ թիւրքերի մէջ։ Բոլոր երեք բանակների մէջ էլ երկար ժամանակից ի վեր տիրում է մեծ զրգռումն ու ատելութիւն դէպի սուլթանը։ Հարկաւոր է միայն յիշել Աբդիւլ Համիդի արիւնոտ արշաւանքը հայերի դէմ, Տաճկահայաստանում“։

Այդ ընդարձակ խմբագրականի մէջ՝ ոչ մի համակրական խօսք դէպի Համիդը, ոչ մի պարսաւանքի դարձուած դէպի սպանութեան փորձի հեղինակը։

—

Temps-ին հեռագրում են Սոֆիայից, 31 յուլիսի.

„Թիւրք պաշտօնական շրջաններում տարածուած այն կարծիքը, թէ սուլթանի դէմ արուած սպանութեան փորձի հեղինակը բուլգար է, այստեղ հերքում է բացար-

ձակապէս մակեդոնական ներքին ու արտաքին կազմակերպութեան անդամների կողմից, մանաւանդ որ հայերի ու մակեդոնացիների միջև կայացած համաձայնութեան համեմատ՝ կ. Պոլիսը չէ մտնում վերջինների գործունէութեան ջրջանը"։

—

Berliner Tagblatt-ին հեռագրում են կ. Պոլսից, 1 օգոստոս.

Արժանահաւատ լուրերին նայելով, երէկ ձերբակալուած է Նըզգըզում պալատական մի պաշտօնեայ, որին սաստիկ կասկածում են սպանութեան փորձին մասնակցելու մէջ։

—

Die Zeit-ի իրաւեկ թղթակիցը երկար, մանրամասն գրում է (օգոստ. 1) կ. Պոլսում կատարուող քննութեան ու ձերբակալութիւնների մասին։ Ոչ մի դրական հետևանքի չէ հասնում քննութիւնը, որովհետև անհետ չքացել են խորհրդաւոր կառքի թէ կառապանը, թէ տէրերը, որոնք իբր թէ եղել են ծպտեալ ռուսահայեր, և թէ այն ֆրանսերէն ու իտալերէն խօսող պարոնը, որը ստացել է կառքը մաքսատնից։

„Պայթիւնը հայերին վերագրելու փորձը ապարդիւն անցաւ, որովհետև դեսպանները ապացոյցներ ունեն, որ հայ յեղափոխական կոմիտէի կարծեցեալ շրջաբերականը Թիւրքական աղբիւրից է ծագում։ Քիչ են հաւատում նաև այն լուրին, որի համեմատ՝ իբր թէ անիշխանականներն են փորձի հեղինակները"։

—

Die Zeit, օգ. 1։

„Թրքական շրջանները միշտ աւելի և աւելի գալիս են այն եզրակացութեան, որ սպանութեան փորձը իրագործել են մակեդոնական և ռուս յեղափոխական կոմիտէները՝ միացած"։

—

Freie Presse-ին հեռագրում են, օգ. 3.

Մի հայուհի, ռուսահպատակ, Պետրովա անունով, խիստ կասկածելի է երևում, կարծում են, որ նա է արել սպանութեան փորձը սուլթանի դէմ։ Նա եկել է Ցուանատանից փորձի նախընթաց օրը և մի օր յետոյ գնացել է Ռումանիա։ Քննութիւնը ցոյց տուեց, որ Պետրովան Եւրոպայից վերջերս եկած նոր կառքի ետևի մասում թագցրած է եղել մի դժոխային մեքենայ։ Կարծում են, որ նա աշխատում է երեք տարուց ի վեր։

—

Նոյն լրագրին հեռագրում են յուլիսի 29.

„Երեկուայ Սելամլիքի տոնի միջոցին ամենուրեք զգացուում էր մի տեսակ պողպատեայ ծանրութիւն։ Զօրքերի շղթան կրկնապատկուած էր և մզկիթի հրապարակը 300 մետր տարածութեան վրայ փակ էր չը հրաւիրուածների համար։ Այն վայրկեանին, երբ սուլթանը թողնում էր մզկիթը, կարծէք սպասուում էր նախորդ ուրբաթ օրայ զարհուրելի անցքը"։

ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Արտասահմանեան մամուլի մէջ լոյս տեսած կարծիքներից, տեղի սուլթանի պատճառով, բերում ենք առայժմ հետևեալները՝

Daily Telegraph՝ Լոնդոնի խոշոր պահպանողական թերթը, որ վերջին ժամանակներս լաւ է տրամադրուած դէպի սուլթանն ու նրա կառավարութիւնը, նուիրում է Պոլսի դէպքին մի խմբագրական, ուր Համիդի դէմ եղած սպանութեան փորձը գտնում է „բացատրելի", եթէ ոչ „ներելի"։

„Մի միապետ, որ ցոյց է տուել այնքան անսիրտ խստութիւն, հաստատապէս գիտէ, որ իր ընթացքով ներշնչում է մոլեռանդ ատելութիւն։ Նա չըվարանեց" պետական նպատակներով" հանդուրժել, եթէ ոչ դրդել հայերի կոտորածը։ Մինչև օրս տաճկական սուլթանները շատ վախեցել են պալատական դաւադրութիւնից, որը ընդունում է զինուորական յեղափոխութեան ձև։ Ուրբաթ օրայ բռնափորձը ակներևօրէն ընդօրինակուած է այն փորձերից, որոնք բաւական սովորական են Ռուսաստանում։ Պէտք է շնորհաւորել Եւրոպային, որովհետև ոչ ոք չէ կարող ասել, թէ ինչ քաղաքական հետևանքներ կ՝առաջանային, եթէ օսմանեան գահը յանկարծակի թափուր մնար։ Ներկայ ռուս-եապոնական պատերազմի և ռուսական հմայքի զգալիօրէն թուլանալու բազմաթիւ հետևանքներից մինն է Թիւրքիայի յարաճուն անհանգստութիւնը, Թիւրքիայի, որ առժամապէս ազատուած է իր գոռոզ հարևանի յարատև սպառնալիքից։ Արևելեան Եւրոպայի քաղաքագէտները, սնդիկի պէս փոփոխական, հոգեպէս քայքայուում են որևէ անախորժ անցքի պարագայում և սուլթանի սպանութիւնը նոր սարսափ կը ձգէր դիւանատների վրայ, որոնք առանց այնէլ շատ յուզող խնդիրներ ունեն իրենց ձեռքում։ Ինչպէ՞ս է ձգուել ռումբը, առայժմ անբացատրելի է, բայց նշաններից երևում է, որ դա մի զարհուրելի բան է"։

—

„*Vorwarts*"-ի „Թիւրքական ռումբ՝ խորագրով յօդուածի մէջ՝

„Ուժի միջոցով բռնապետութիւնը տապալելու փորձը, որ այժմ սասանեցնում է Ռուսաստանը, գործադրուում է և Թիւրքիայի նկատմամբ, Եւրոպայի այն պետութեան՝ որը Ռուսաստանի պէս փակում է ինքնիրեն նոր ժամանակի զարգացման առջև և որի պետը, ցարիզմի նման, արիւնալի բռնութեամբ ճնշում է ամեն մի շարժում դէպի ազատութիւն և քաղաքացիական իրաւունք։ Ուրբաթ օրը լուր եկաւ Պոլսից ռումբի մի սարսափելի պայթումի մասին, մի փորձի, որը ուղղուած է եղել սուլթան Աբդիւլ-Համիդի դէմ և որը, սակայն, նպատակին չէ հասել։

Ոչ պակաս քան „համառուսական ցարը"՝ սուլթանը հարկադրուած է իր կեանքը մեկուսացման ամենահրեշաւոր միջոցներով ապահովել փորձելու։ Նա ապրում է Եըլդըզ-Քիօշքում, ամբողջովին կտրուած աշխարհից, և միայն ուրբաթ օրերը թողնում է իր պալատը՝ հանդիսաւոր թափորով Եըլդըզ-Քիօշկի մզկիթը գնալու համար։ Զօրքերի շարքերը այդ ժամանակ փակում են ամբողջ ճամբան։ Ոչ մի պարզ մահկանացու, ոչ մի ուղղափառ մահմեդական իսկ չէ կարող մօտենալ սուլթանին... Սպանուել են բազմաթիւ մարդիկ, զինուորներ, Թիւրք մեծամեծներ և նրանց հետ միասին, ըստ երևոյթին, և փորձի հեղինակը։ Ենթադրութիւնները յանգում են նրան, որ կամ երիտասարդ Թիւրքերի կուսակցութեան անդամներից մէկն է արել փորձը, կամ դա հայկական վրէժի և պատժի մի ակտ է։

Դէպքը դարձնում է Եւրոպայի ուշադրութիւնը նորից դէպի իրերի դրութիւնը Թիւրքիայում։ Փոխէփոխ գալիս են լուրեր կամ անհանգստութիւնների մասին Մակեդոնիայում և բուլղարական սահմանի վրայ, կամ թէ շարունակ կրկնուող սարսափների մասին Թիւրքահայաստանում։ Այն փորձը, որ արուել է սոցիալ-դեմոկրատիայի կողմից, նոյնպէս և գերմանական ռայխստագում, կառավարութեան վրայ ազդելու, որպէս զի վերջինս՝ համաձայն 1878 թ. Բերլինի դաշնագրի՝ ռեֆորմներ մըտցընել տայ Թիւրքաց պետութեան մէջ, անհետևանք է մնացել։ Երկու պետութիւններն էլ, որոնք ամենից շատ են շահագրգռած Բալկանում — Ռուսաստանը և Աւստրիան — միշտ համաձայնութիւն են տուել հոգալու Թիւրքիայի դրութիւնը բարւոքելու և ռեֆորմներ մտցնելու մասին։ Սակայն հէնց մեծ պետութիւնների մրցումն է եղել, որ շարունակ թոյլ է տուել սուլթանին պատասխանել արևմտեան Եւրոպայի գրգռուած հասարակութեանը միայն խոստումներով և երբէք այդ խոստումները չը կատարել։ Արդէն լոկ „ընդհանուր միջամտութիւն“ խօսքը, մի ֆրանսիական դիպլոմատի ասելով, հանգստացնում է Թիւրքին։ Այդպիսով իրերի դրութիւնը Թիւրքիայում այսօր աւելի լաւ չէ, քան տասնեակ տարիներ առաջ“...

—

Թրնէվ հրատարակուող Երիտասարդ Թուրքերու „Իճթիհատ ամանթերթի սուլթանի դէմ սպանութեան փորձի առթիւ հետևեալ խորհրդածութիւնը կ'ընէ.

„Մարդկային կեանքի դէմ եղած սպանութեան փորձի համար պէտք է ցաւիլ, բայց կարելի է ցաւ զգալ ապարածի մը համար, որ գիշեր ցերեկ հաղարաւոր գարշելի ոճիրներ կը գործէ, առանց խղճմտութեան իր երկիրը կը կործանէ և իր կայսրութեան զանազան տարրերու միջև ատելութիւն կը սերմանէ։

Իր անձին դէմ ուղղուած դէպքէն սուլթանը կ'ուզէ օգտիլ և երկիրը արեան հեղեղով լեցնել՝ վերագրելով գործը Երիտասարդ Թիւրքի մը, Պուլղարի մը կամ Հայու մը, բայց երբէք այն անիշխանական վիճակին որ կը տիրէ երկրին մէջ։

Փորձի հեղինակին ազգութեան մասին մենք առայժմ ոչինչ պիտի ըսենք, մինչև որ կ. Պոլսէն մեզի աւելի ընդարձակ տեղեկութիւններ հասնին։ Համիդական աղբիւրներէ բղխած լուրերը մեզ կրնան միայն մոլորեցնել։

Սուլթանը նորէն կ'ուզէ իր պժգալի դերը խաղալ և մոռնալ այն, որ մեր հայրենակիցները կը տառապին՝ իր դիտակից չարութեան պատճառով։

Կը յուսանք, որ ժամանակի և կրկնուած փորձերու հետ միասին բոլոր ցեղ է և կրօնէ մեր հայրենակիցները աւելի լաւ պիտի հասկնան, թէ ո՞ւր կը գտնուի չարութեան աղբիւրը և հրամայողական պարտք պիտի զգան ճակատէն քաշելու հասարակաց հայրենիքի բոլոր զաւակներու հետ՝ կռուելու համար բոլոր բռնապետներու՝ ամենուս իսկական թշնամիներու դէմ։

Ինչ որ մեզ աւելի կը զարմացնէ, այն է, որ կը գտնուին եւրոպական թերթեր, որոնք կ. Պոլսոյ ժողովրդին զգացումներու թարգման ցոյց կուտան զիրենք, յայտնելով իբր թէ ազգաբնակութիւնը զայրացած ըլլար այս փորձէն։ Քանի որ այս հաւատարմութեան զգացումներու ծայրը մինչև Եւրոպա հասած է,— որու մասին նախ ինք սուլթանը լաւատեղեակ ըլլալու է— ինչո՞ւ ուրեմն անգղի մը պէս թառած է Եըլդըզի բարձունքներուն վրայ, շրջապատուած ամրապարիսպներով և կղզեցած մարդկային բնակարաններէ։

Ինչո՞ւ ինքզինք պարտաւորուած կը տեսնէ նոյն բարձունքներու վրայ շինելու այդ մզկիթը, իր ճգնութեան պալատին մեծ դրան դէմ առ դէմ։

Ինչո՞ւ միմիայն իր անձին է յատկացուած մզկիթը, որու մուտքը, հակառակ կրօնական օրէնքներու՝ արգիլուած է մինչև իսկ կ. Պոլսոյ ազգաբնակութեան, որը իբր թէ զինք այնքան կը սիրէ։

Ինչո՞ւ ամենասիրելի վեհապետը կը բարեհաճի իր շուրջը հաւաքել հաղարաւոր զօրքեր՝ երկու քայլի ուխտագնացութեան մը համար։

Ինչո՞ւ դպրոցէն ելած ոչ մի սպայ չպարունակեր այն բանակը, որու է յանձնուած սիրուած և յարգուած անձին պաշտպանութեան գերագոյն պարտականութիւնը։

Ինչո՞ւ դժբախտ Ռուսերուն հայրիկին հետ սիրով կը համաձայնի և Թիւրքաց մէջ ապստամբութեան մը պարագային իր անձին պաշտպանութեան ապահովութիւնը անկէ կ'ստանայ։

Դժբախտ օսմանցուց Մեծ-հայրը աներևակայելի չարութեան գանձերը ունի, բայց թո՞ղ լաւ զգուշանայ, որ այս գանձերը օր մը սպառելով զինք կորուստի չտանին։ Հակառակ եւրոպ. կառավարութիւններու շտապողական շնորհաւորումներու, ապահովագրական ոչ մի ընկերութիւն սուլթանին կեանքը պիտի ուզէ երաշխաւորել՝ ցորչափ իր գարշելի տիրապետութիւնը յատկանշող չարիքները շարունակեն։

—

Ահմեդ Բիզան իր Մէշվերէթ թերթին մէջ սպանութեան փորձի առթիւ հետևեալ կարծիքները կը յայտնէ, որոնք ազատ չեն ինչպէս ընդմիշտ նոյնպէս այս անգամ, յեղափոխականներու հասցէին ուղղուած իրեն յատուկ շնական ակնակներէ։

„Ապդիւլ Համիտ կատարելապէս գիտէ, որ ժողովուրդը զինք կ'ատէ, կը նզովէ և իր արագ կորուստը կը մաղթէ։ Այս բանը գիտնալով քսան հազար զօրքերով գիշեր ցերեկ կը պաշտպանուի և Եըլդըզի թաղէն երբէք դուրս չելլեր։ Այն օրը, որ ստիպուած է կայսերական բակը անցնելով Մըզկիթ երթալ՝ իրեն համար ահաւոր օր մըն է։ Նա ամէն տեղ դատաւորներ և վրիժառուներ կը տեսնէ իր առջև կանգնած։

Պայթող ռումբը իբր ազգարարութիւն պիտի ծառայէ՞,— Թիւրքիոյ շահու համար ատիկա կը յուսանք։ Ապդիւլ Համիդի անձին մէջ մարմնացած գարշելի բէժիմի մը դէմ այս ազգու փորձը կրնայ կրկնուիլ ո՛չ թէ Մըզկիթէն հարիւր մետր հեռաւորութեան մը վրայ՝ ինչպէս այս անգամ՝ այլ մինչև իսկ իր կառքի անիւներու տակ։ Սուլթանը չէ կարող անկէ խոյս տալ՝ բայց եթէ Սահմանադրութեասբ երաշխաւորուած արդարութեան և ազատութեան դարագլուխ մը բանալով միայն։

Ազգարարութիւնը ամենայարմար ժամանակին կը հասնի։ Ռուսիան կլանուած պատերազմով և ներքին խառնակութիւններով՝ մեզ ազատ ասպարէզ կուտայ ազատական բարենորոգումներ գործադրելու։ Այսպիսի նպաստաւոր առիթէ մը չօգտուիլը ոճիր մը պիտի ըլլար։

Կառավարել՝ կանխատեսել, ըսած է հին առած մը։ Գահակալութենէն ի վեր Սուլթանը ինքիրեն կը հարցնէ՝ թէ ի՞նչպէս Սուլթան Ազիզը գահընկէց եղաւ և նոյն վիճակին չենթարկուելու համար բոլոր նախազգուշութիւն-

ները ձեռք կ'առնէ։ Աւելի լաւ կ'ընէր երբ ինքիրեն կը հարցնէր՝ թէ ինչու ան գահընկէց եղաւ և իր ապահովութիւնը ամրապնդէր վարչական բարեփոխումներով։ Արդի պայմաններու մէջ մեծ յանցանք պիտի ըլլայ իրեն նոյն բացասական մտածումներու մէջ շարունակելու։ Պէտք է ուրեմն աշխատի հասկնալու, թէ ինչո՞ւ ռումբը նետուած է և ոչ թէ ինչպէս, որպէսզի կարողանայ բարենորոգումներու խելօք քաղաքանութեամբ անկէ խուսափիլ։

Փորձին հեղինակը, այս առաջին ազդարարութիւնը անող անձը, մեռած կամ կորսուած՝, անծանօթ կը մնայ։ Պուլղար, Հայ կամ Երիտասարդ-Թիւրք կը կարծուի։ Անշուշտ ոչ ոք պիտի գիտնայ անոր անունը՝ մինչև ներկայ իշխանութեան վերջ։

Բայց սպասելով կրնանք ըսել, որ եթէ ան Պուլկար կամ Հայ մըն է, այս Պուլկար կամ Հայը չը պատկանիր յեղափոխական խմբակին. որովհետև այս մարդիկը համիդական ըէժիմի շարունակութեան մէջ շահ ունին, ըէժիմ մը որով շնորհիւ կ'ապրին, թէև՝ իրենց խաղը պարտկելու համար, զիրենք դժգոհ ցոյց կուտան արտաքուստ։

Կը յաւելունք, ուր պայթումի ատեն Մարեջախտներ փախած են՝ կ'երևի ճագարներու պէս։

Ասոնք „հաւատարիմներն" են, որոնց անձնուիրութեան վրայ Սուլթանը վստահ կ'երևի, փոխանակ իր ուժը իր հաւատարիմներու սրդէն քաղելու։ Ճիշտ է, որ ժողովրդի սիրտը դրամով չգնուիր՝ այն կը շահուի սիրով և հայրական խնամքներով։

ԿԱՐՄԻՐ ՆԱՄԱԿ

ՈՃՐԱԳՈ՛Ր Ծ

Եւ վերջապէս դուն ալ օրերուն ամենէն զարհուրելին և վայրկեաններուն ամենէն արդարը տեսար, տեսար ու զառանցեցիր և քու խաւարող ու հրեշային աչքերդ հազիւ հազ կրցար ծածկել հպատակներուդ անմեղ արիւնին մէջ փտտած կմախաձև ձեռքերովդ... Եւ հիմա աղօթէ՛ որու որ կ'ուզես՝ ծնկաչոք և հողատարած Մուհամմէդիդ կամ Եղեռնի աստուածին, կամ Դիպուածին կամ Ջարիքին, աղօթէ՛, որովհետև քու կենդանի սատակդ գեռ հողին վրայ կեցնելու պարգևը չարաշուք վայրկեանին կը պարտիս ոչ թէ Անոնց անշուշտ, որոնք այդ անիմանալի, հանճարեղ ու գերբնական պատիժը յղացան քեզի համար. Անոնք, որ յղացան մարդուս մը տածումը կուրցնող և աչքերը փորող այդ պատիժը՝ նորէն պիտի գան, նորէն պիտի ծագին։ Բնաւ չ'երջանկանանաս, ո՞վ զառամեալ արիւնարբու, բնաւ չի սրտապնդիս. սպասէ՛,—ու շատ երկար չէ՛ որ պիտի սպասես արդարև—սպասէ՛, և այս անգամ՝ այլևս դուն չէ՛ որ պիտի տեսնես, այլ մենք, քու բազմացեղ ժողովուրդներուդ միլիոնները պիտի տեսնեն քու շանսատակ ելլելդ և քուկիններու՛դ և քու՝ ջարդ ու փշուր մարմիններէն ամե՛նքս ալ մեր արիւնլայ կտորը պիտի ունենանք ձեռքերնուս մէջ, իբր զզլանքի և դեռ չտեսնուած յաղթանակի պժգալի մասունք...։ Գիտեմ թէ ի՞նչ դժոխային չարչարանք, ի՞նչ մղձաւանջ, ի՞նչ մահազօր տենդ և ի՞նչ չի յագեցած և անյափրանալի կատաղութիւն մը՛ն է, որ գքեզ կը գալարէ, գքեզ պատատիդ մէջ պատէ ի պատ կը զարնէ և աթոռի վրայէ աթոռի վրայ կը նետէ, կարենալ լուծելու համար տիեզերքիս ուժերէն դուրս եղող այս առեղծուածը։ Բայց պիտի չի կրնաս լուծել, ո՞վ արիւնարբուշտ յարալէզ, պիտի չի կրնաս ձեռք դնել այն արհաւրալից, այն վրիժառու, այն քինայոյզ, այն հայրենատարփ, այն աստուածառաք ու շքեղ ու անպարտելի Անծանօթին վրայ, պիտի չի կրնաս ձեռք դնել Անոր վրայ, որ քու զինուորապատ պատնէշներդդ հերոսի մը պէս ներս մտաւ, գըլուխը իր փառքէն ու իր հպարտութենէն բարձր և նայուածքը մահով և աղատութեամբ առլցուն... Նորէ՛ն պիտի գայ ազատագրման Դիցուհին, կամ փրկութեան այդ Քրմապետն անողոք...։ Բայց, եթէ կուզես, թող սարսափի և մահաժամի թունաւոր արիւնդ կզակներդդ վար հոսի և թող ծովատիրէ զքեզ, և ծունկերդդ մինչև բերանդ բարձրանալով՝ թող խղդէ զքեզ քու արիւնիդ մէջն իսկ։ Եւ կամ ուրիշ խրատ մը, եթէ կուզես քու անէացումդ քու ձեռքովդ ստեղծելը սա սատափեայ սեղանիդ վրայէն ոսկեվառ ատրճանակդ ձեռքդ առ և հրափողը ուղղէ մեռելահոտ բերանիդ և կամ եղեռնալուր ականջներդդ միոյն. և քաշէ՛, անգամի մը համար քաշէ՛ բլթակը...։ Որովհետև ուրիշ օգնութիւն պիտի չի հասնի քեզի, ուրիշ բազուկ պիտի չի շարժի, ուրիշ դիպուած, ուրիշ վայրկեան, ուրիշ չարիք պիտի չի գան զքեզ փրկելու...։ Եւ տեսար հաբիւրաւոր մարմիններ ճղակոտոր՝ բաշարձակ ու հոգևարքի մէջ վընջող ձիեր, որ խորտակեալ շքակառքերուն հետ բոցեղէն ու մոխրապատ օդերուն մէջ ցնորապարեցին և ճախրեցին, ի՞նչպէս գտար այս պատկերը, դո՛ւն ամենագէտ ոճրագործ, կրցա՞ծ էիր յօրինել այս խրախճանքի համայնապատկերը. յաջողեցա՞ն քու վրիժառուներդ։ Այո՛ կըսես զարհուրանքով, և քրքիջիդ կռինչը կմախքիդ ոսկրատենդին հետ չորս հողմերէն կիմացուի։ Եւ ողջ մնալովդ գոնէ անգամ մը ևս զարհուրեցար այս կոտորումի թատերաբեմէն, որովհետև յաջորդ անգամուն „կառքդ վարելով"—ո՞վ պարսպապատ մարդասպանի հեգնութիւն—Երլտրզ երթալու քաջութեան յոգնութիւնն ալ չի պիտի կրես։ Եւ այս անգամ քու պալատիդ կամ քու մզկիթիդ անկիւնաքարերուն տակ, որ ահագնաշառաչ պիտի կործանուին, քու սուլթաններուդ բովանդակ սերունդները պիտի խմորուին։ Եթէ չես ուզեր, որ քու որջերուդ մէջ գերեզմանուիս, ուրեմն դուրս ել և յուլիս 21-ի փառակերտ ցորեկը թող նորէն բոլորուի, դուրս ել, և գոնէ Արդարութեան արեգակին տակ մոխրացիր, որովհետև, ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, ուր որ ալ ըլլաս Վրէժին ստոյգ և անխուսափելի և պատրաստ ճամբաներէն պիտի հասնի, պիտի թևէ, պիտի գայ հրաշագեղ Անծանօթը, որ քու մէջդ ոտքի է արդէն խղճմտանքին նայուածքներովն ակնապիշ, և իր անողոք սուրը վեղդ և իր բռունցքին զօրութեան ծանրութիւնը քու քստմնելի գանկիտ վրայ հանգչեցուցած՝ պիտի գայ Անծանօթը, որովհետև, բոլոր ճամբաները ու բոլոր երկաթապատ դուռները անոր քայլերուն առջև բաց են, ինչպէս բաց է ապագան մարմարեղէն Դաղափարին առջև։

Քու հպատակտ՝ ապերախտ և արիւնիդ ծարաւ՝

ՍԻԱՄԱՆԹՕ